

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՐԱՍ ՊԵՏՐՈՍԻ

**ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ  
ԱՌԱՋԱՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն»  
մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական  
աստիճանի համար

Գիտական դեկավար՝  
ճարտարապետության թեկնածու, պրոֆեսոր  
Լ. Վ. Կիրակոսյան

ԵՐԵՎԱՆ 2017

## ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>4</b>
<b>ԳԼՈՒԽ 1. ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ</b>	
1.1. Երևանի ճարտարապետական կերպարի համալիր հետազոտության տեսական հիմքերը .....	11
1.2. Երևանի դիրքը, սահմանները, գրաված տարածությունը: Ռելիեֆը, կլիմայական պայմանները, բնական շինարարական նյութերը .....	22
1.2.1. Տեղագրությունը .....	22
1.2.2. Հին Երևանի բնական սահմանները .....	23
1.2.3. Երևանի շինարարական նյութերը .....	23
1.3. Երևանի տարածքի պատմական զարգացումը .....	24
1.3.1. Քաղաքային տարածքների կազմակերպման ընդհանուր համակարգը .....	32
Եզրակացություն առաջին գլխի վերաբերյալ.....	34
<b>ԳԼՈՒԽ 2. ՄԻՆՉԽՈՐՀԱՅԻՆ ԵՐԵՎԱՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	
2.1. Մինչպարսկական շրջանի Երևանը .....	35
2.1.1. Մինչուրարտական (Վանի թագավորության, Արարատյան թագավորության) ժամանակաշրջան .....	35
2.1.2. Վանի թագավորության ժամանակաշրջան .....	37
2.1.3. Անտիկ և միջնադարյան ժամանակաշրջան .....	41
2.2. Պարսկական շրջան. Քաղաքի կառուցվածքն ու հուշարձանները .....	42
2.3. Ռուսական շրջան. Քաղաքային միջավայրի կազմավորումն ու հուշարձանները .....	53
2.3.1. Երևանի քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին .....	59
Եզրակացություններ Երկրորդ գլխի վերաբերյալ.....	70

**ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԻ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ  
ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1. Խորհրդային ժամանակաշրջան.....	72
3. 1. 1. Հիմնադրման ժամանակաշրջան (1920-1940-ական թթ.).....	72
3.1.2. Հաստատման ժամանակաշրջան (1950-1960-ական թթ.) .....	82
3.1.3. Ծավալման և փոխակերպման ժամանակաշրջան (1970-1980-ական թթ.)....	87
3.2. Անկախության ժամանակաշրջան .....	93
3.2.1. Երևանի քաղաքաշինական և ճարտարապետական զարգացումները .....	93
3.2.2. Երևանի կերպարային տարրերի վերլուծություն. Գնահատականներ.....	98
3.2.3. Քաղաքային ճարտարապետության փոխակերպման հիմնական դրսերումները .....	103
3.2.4. Կերպարի որակական առանձնահատկությունները կամ կերպարայնությունը .....	104
3.2.5. Քաղաքային միջավայրի կերպարայնության բարելավմանն ուղղված համակարգային մոտեցումներ:.....	106
ԵՆԴԱՍՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	111
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	113
ՀԱՎԵԼՎԱԾԻ ՑԱՆԿ.....	121

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ուսումնասիրության արդիականությունը:** Երևան քաղաքի

ճարտարապետական լանդշաֆտը բազմաշերտ համալիր է, որտեղ ամեն մի դարաշրջան ներկայանում է սոցիալ-պատմական որոշակի իրավիճակում կերտված և դրանով պայմանավորված կառուցներով, որոնք էլ համապատասխանաբար տվյալ ժամանակաշրջանի սոցիալական, մշակութային առանձնահատկությունների, աշխարհայացքների և ընկալումների արտացոլումն են: Քաղաքը անցնելով պատմական տարբեր փուլեր և կրելով տարբեր հասարակարգերի ազդեցություններ, դարձել է այդ ժամանակաշրջանները համադրող և կապող տարածություն, միջավայր: Քաղաքի պատմության ընթացքում որևէ ժամանակաշրջանին նախորդող փուլերի ճարտարապետության գոյությունն ու ներկայացվածությունը տվյալ ժամանակաշրջանում յուրահատուկ ցուցիչ է ընդհանուր սոցիալական և քաղաքական իրավիճակի, հանրության կենսակերպի, հանրային կյանքի ընդհանուր կերպարի վերաբերյալ:

Երևանը՝ որպես արդիական՝ նոր ժամանակաշրջանի սոցիալ-մշակութային ընկալումներին համապատասխանող քաղաքի օրինակ սկսել է ձևավորվել 20-րդ դարի սկզբներից: Քաղաքի ճարտարապետության գաղափարաբանական և ծավալատարածական հայեցակարգի ձևավորման ու զարգացման, նաև կրած ազդեցությունների վերաբերյալ եղել են և կան տարբեր մոտեցումներ: Այնուհանդերձ, մեկ դարի ընթացքում Երևանը գավառական ավանից վերածվեց մեզապոլիսի՝ փոլ առ փոլ մշակվելով, ձևափոխելով, և կերպարանափոխվելով: Քաղաքը նովնիսկ «գտավ» խորհրդանշանային այն կամուգը, որն իրեն կապեց հազարամյակների հետ. Էրեբունի-Երևան կապը նոր տեսանկյուններ մտցրեց քաղաքի ընդհանուր կերպարի ընթերցման մոտեցումների մեջ՝ ձևակերպելով այն որպես դարերից ձգվող պատմական քաղաք: Այսօր Երևանի ճարտարապետական կերպարը դիտվում է մասնատված ձևով՝ կորցնելով իր ընթեռնելիությունն ու արտահայտչականությունը: Շինարարության ծավալները գերակշռում են քաղաքի

կենտրոնում, որոնք սպառում են ենթակառուցվածքների ֆիզիկական և բարոյական կարողությունները: Բարձրահարկ ու խիտ կառուցապատման հետևանքով փոխվել են քաղաքի ուրվանկարը, քաղաքային միջավայրի մասշտաբը, որակը, ի վերջո՝ կերպարը: Սոցիալ-տնտեսական իրավիճակը, սոցիալ-մշակութային արժեհամակարգի կտրուկ փոփոխությունները, քաղաքաշինական քաղաքականության թերացումները, միջավայրային ճարտարապետության մասնագիտական պակասը ուղղակիորեն կամ անուղղակիորեն անդրադառնում են քաղաքի արդի ճարտարապետական կերպարի ձևավորման վրա:

Հետազոտության համար տեսական հիմք ծառայող ամբողջ գրականությունը խմբավորված է մի քանի բաժիններում: «Քաղաք», «քաղաքի ճարտարապետական կերպար», «քաղաքային միջավայր», «քաղաքի գեղագիտություն» և այլ հասկացությունները կիրառելիս (տվյալ հետազոտության սահմաններում) և միջավայրում մարդու գեղագիտական փորձառության խնդիրները լուսաբանելիս օգտակար են եղել մի շարք տեսաբանների աշխատանքներ (Զ.Նասար [76], [77], Ա.Պորտելլա [80], Ա.Սթամիս [83], Ն.Շեյլոր [84], Ա.Ռապոպորտ [81], Ք.Լինչ [75], Ա.Իկոննիկով [47], [48], Զ.Յարգինա [64]): Ճարտարապետություն – սոցիալական գիտություններ փոխառնչությունների հիմնահարցերը, «միջավայրային ճարտարապետություն» երևոյթը (Փենոմենը) դիտարկելու համար հիմք են ծառայել Ք.Նեսրիթի [78], Ն.Լիչի [73], Զ.Բրոուլբենդի [68], Ա.Իկոննիկովի [49], [50], Վ.Գլագիչնի [41] աշխատությունները: Երևանի լանդշաֆտին, պատմությանը, մշակույթին, կենցաղին, արտաքին տեսքի նկարագրությանը և կերպարային ընկալումներին վերաբերող արխիվային տեղեկություններ են քաղվել Ղ.Ալիշանի [3], Ե.Շահագիզի [23], Ժ. Շարոենի [61], Ի.Շոպենի [62], Ս. Զելինսկու [46] աշխատություններից: Ճարտարապետության և քաղաքաշինության ընդհանուր տեսական քննարկումներում օգտակար են եղել մեկ այլ խումբ հետազոտողների (Ա.Ռոսսի [82], Է.Լոզանո [75], Ա.Գուտնով [43]) տեսակետները: Պատմագիտությանը կարևոր ներդրում է բերում Թ. Հակոբյանի հնագույն ժամանակներից մինչև 1917թ. Երևանի պատմությունը ներկայացնող մենագրությունների շարքը, որտեղ որոշակի

տեղ է հատկացված քաղաքի ճարտարապետության և կերպարային ընկալման հարցերին: Երևանի հնագույն շրջանի քաղաքային տարածքների ներկայացումների ժամանակ և ճարտարապետության հորինվածքային առանձնահատկությունները քննարկելիս օգտագործվել են հնագիտական բնույթի աշխատություններ (Կ. Հովհաննիսիսյան [54], [55], Բ. Պիոտրովսկի [56], Ս. Եսայան [45]): Երևան քաղաքի ճարտարապետության պատմական զարգացման ընթացքին հետևել ենք ըստ Վ.Հարությունյանի, Է. Տիգրանյանի, Հ. Խալիքախյանի, Կ. Ղաֆադարյանի, Ա.Գրիգորյանի, Մ. Թովմասյանի, Լ. Դոլովսանյանի, Կ. Բայյանի աշխատանքների: Քաղաքի ճարտարապետության և քաղաքաշինության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարել են Մ. Գասպարյանը՝ քաղաքի պատմական զարգացման հետ կապված, Գ. Ռաշիդյանը՝ քաղաքային առանձին հանգույցների ճարտարապետության վերաբերյալ, Ա. Ալոյանը՝ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և քաղաքաշինական խնդիրների վերաբերյալ, Է. Հարությունյանը՝ 1920-1930-ական թվականներին հիմնադրված և կառուցապատված ավանների առնչությամբ, Ս. Օհանյանը՝ քաղաքի կենտրոնի վերակազմավորման արդի առանձնահատկությունների հետ կապված, Զ. Մամյանը՝ գոտևորման կատարելագործման ուղիների հետ կապված, Դ. Քերթմենջյանը՝ անկախության տարիների ճարտարապետության հետ կապված, Լ. Կիրակոսյանը՝ ժամանակակից քաղաքաշինական զարգացումներում ճարտարապետական ժառանգության պահպանության խնդիրների հետ կապված, Կ. Բերբերյանը՝ քաղաքային միջավայրի պահպանման և արդիականացման առնչությամբ, Կ. Ազատյանը, Ա. Նիկոյանը՝ պատմական տարածքների վերաբերյալ: Երևանի քաղաքային ճարտարապետությանը վերաբերող մասնավոր հարցեր են բարձրացված Ա. Մանուկյանի, Տ. Քասարյանի, Տ. Հարությունյանի, Ա. Ավետիսյանի, Ա. Հարությունյանի [20] աշխատանքներում: Այսուհեանդերձ առկա ուսումնասիրություններում քաղաքի ճարտարապետական կերպարը չի դիտարկվել որպես առանձին քննարկման առարկա և համալիր ուսումնասիրության չի ենթարկվել, ինչպես նաև չեն դիտարկվել նրա ժամանակային փոխակերպումները: Ուստի արդիական ու հրատապ է քաղաքի

ճարտարապետական կերպարի պատմական և համալիր հետազոտությունը և կերպարաստեղծ տարրերի ու տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-մշակութային, հասարական-քաղաքական իրադրության փոխառնչությունների բացահայտումը:

**Հետազոտության նպատակն է՝** ստեղծել Երևան քաղաքի ճարտարապետական կերպարի պատմական ընթացքի, ձևափոխության օրինաչափությունների վերլուծության մեթոդաբանություն, բացահայտել կերպարաստեղծ տարրերի պատմական ինքնատիպությունն ու գեղագիտական առանձնահատկությունները և մշակել մոտեցումներ այդ մեթոդաբանությունը ճարտարապետական պրակտիկայում կիրառելու համար:

Նպատակին հետամուտ առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

- կատարել «քաղաքի ճարտարապետական կերպար» հասկացության համակողմանի վերլուծություն,
- ուսումնասիրել քաղաքային միջավայրի ժամանակակից առանձնահատկությունները, ներկայացնել քաղաքի ճարտարապետական կերպարի վերաբերյալ տեսական և մեթոդաբանական մոտեցումները և ձևակերպել առանձին տեսական հասկացությունները,
- նկարագրել Երևանի ֆիզիկական լանդշաֆտն ու ռելիեֆը՝ ըստ մշակված մեթոդաբանության,
- բացահայտել ճարտարապետական կերպարի փոխակերպման օրինաչափությունները,
- Երևանի ճարտարապետական կերպարը դիտարկել պատմականության մեջ՝ քաղաքի զարգացման տարրեր փուլերում, ժամանակագրական սանդղակի կազմում,
- յուրաքանչյուր առանձին փուլի համար բացահայտել քաղաքային ճարտարապետության հորինվածքային և գեղագիտական առանձնահատկությունները,
- տալ քաղաքի կերպարայնության բարելավմանը նպաստող առաջարկություններ (հավելված 1):

**Հետազոտության առարկան** Երևանի ճարտարապետության հորինվածքային և գեղագիտական առանձնահատկություններն են:

**Հետազոտության օբյեկտը** ճարտարապետական կառուցներն են՝ իրենց տիպաբանական, կառուցվածքային, գեղագիտական և այլ ցուցանիշներով ու կազմավորված միջավայրով, ինչպես նաև քաղաքաշինական հիմնական հայեցակարգերն ու զարգացման ուղիները:

**Հետազոտության սահմանները:** Հետազոտության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են Երևան քաղաքի պատմության ամբողջ ժամանակաշրջանը (մասնակի ընդհատումներով, որտեղ ճարտարապետական ժառանգությունը պահպանված չէ), սակայն առավել շեշտադրված են քաղաքի պատմության նոր և նորագույն շրջանները:

Աշխարհագրական սահմաններն ընդգրկում են ներկայիս քաղաքի վարչական տարածքը, սակայն օբյեկտիվ պատճառներով հետազոտության առարկան առավելապես առնչվում է քաղաքի պատմական միջուկի՝ կենտրոնի հետ:

**Հետազոտության մեթոդաբանությունը:** Ատենախոսությունը հիմնված է որակական համեմատական մեթոդի վրա: Կատարված են պատմաճարտարապետական համեմատական վերլուծություններ, բնօրինակային հետազոտություն, գրաֆիկական (հիմնված Ք.Լինչի մշակած մեթոդի վրա), ծևաբանական (մորֆոլոգիական) վերլուծություններ (Երևանի գլխավոր հատակագծեր, կառուցների ծավալատարածական հորինվածք, ճակատներ, հարդարանքի տարրեր և այլն):

### **Գիրական նորույթը**

- Առաջին անգամ կատարվել է Երևանի ճարտարապետական կերպարի պատմական ընթացքի և ծևափոխությունների համալիր հետազոտություն, որի արդյունքում վեր են հանվել կերպարաստեղծ տարրերի առանձնահատկությունները,
- բացահայտվել է Երևանի կերպարային կառուցվածքը՝ օգտագործելով Ք.Լինչի մեթոդը,
- առաջարկվել են Երևանի կերպարային տարրերի գնահատման չափանիշներ և կերպարայնությունը բարելավող միջոցառումներ,

- մշակվել են ժամանակակից կառուցների և արդեն գոյուցուն ունեցող ճարտարապետական շերտերի ու քաղաքային միջավայրի փոխհարաբերակցության կարգավորման մեխանիզմները:

***Պաշտպանության են ներկայացվում.***

- Երևանի ճարտարապետական կերպարի վերլուծության մեթոդաբանությունը,
- Կերպարի պատմական ընթացքի առանձնահատկություններն ու փոխակերպումները,
- գիտականորեն հիմնավորված առաջարկություններ և հանձնարարականներ Երևանի կերպարայնության բարելավման և կերպարաստեղծ գործոնների ակտիվացման ուղղությամբ:

***Հետազոտության ներդրումը:*** Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել Երևանի քաղաքային միջավայրի կազմավորմանն ու զարգացմանն ուղղված ծրագրային ձեռնարկներում, ճարտարապետական և դիզայն նախագծերի կազմման, ինչպես նաև մշակութային քաղաքականության ռազմավարության մշակման և որոշակի ուղղությունների առաջարման ժամանակ:

Ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված արդյունքները կարող են ներդրվել համալսարանական համապատասխան դասընթացների ուսումնական ծրագրերում: Դրանք նաև կհարստացնեն Երևան քաղաքի ճարտարապետության տեսությանն ու պատմությանը վերաբերող նյութերը:

***Աշխարհանքի փորձահավանությունը:*** Հետազոտության մեջ ընդգրկված հիմնական նյութերը փորձահավանություն են անցել **ՃՇՀԱՀ-ի ճարտարապետության տեսության**, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնում՝ 2014-2016թթ., Լիսաբոնի համալսարանի ճարտարապետության ֆակուլտետում՝ 2015-2016թթ. «Էրազմոս Մունդուս» ուսանողական փոխանակման ծրագրի շրջանակներում: Առանձին դրույթներ ներկայացվել են 2016թ. Երևանում՝ **ՃՇՀԱՀ-ում** կայացած «Ճարտարապետության և շինարարության հիմնախնդիրները» 8-րդ միջազգային գիտաժողովում:

**Հրապարակումները:** Ատենախոսության հիմնական դրույթները տպագրվել են վեց գիտական հոդվածներում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է տեքստային և գրաֆիկական մասերից՝ ներկայացված մեկ հատորով: Աշխատանքի տեքստային ծավալը կազմում է 120 էջ՝ ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, հրատարակված աշխատանքների և 92 անուն օգտագործված գրականության ցանկեր: Գրաֆիկական մասը ներառում է գծագրեր, գրաֆիկներ, սխեմաներ, լուսանկարներ, աղյուսակներ (հավելված 2):

# ԳԼՈՒԽ 1

## ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### 1.1. Երևանի ճարտարապետական կերպարի համալիր հետազոտության տեսական հիմքերը

Քանի որ հայաստանյան հանրային և գիտական միջավայրերում «Քաղաքի ճարտարապետական կերպար» հասկացությունը տարածվել է արևմտյան գիտական դիսկուրսի ազդեցությամբ, ուստի կանխավ ներկայացվում են այն հիմնական չափումներն ու մոտեցումները, որոնց օգնությամբ արևմտյան հեղինակները սահմանում են այդ հասկացությունը և դրանից բխող այլ հայեցակարգեր: Սրանք կարևոր են եղել Երևան քաղաքի պատմական զարգացման ընթացքի ներկայացման և քաղաքային միջավայրի հորինվածքային, գեղագիտական առանձնահատկությունների մեկնության ընթացքում:

Քաղաքային ճարտարապետության տեսական հիմնահարցերի վերաբերյալ արժեքավոր գործ է Ալբո Ռոսսիի «Քաղաքի ճարտարապետությունը» մենագրությունը, որտեղ հեղինակը քաղաքը դիտարկում է որպես հավաքական գործունեության արդյունք, որը ձևավորվում է ժամանակի ընթացքում՝ հանդես գալով որպես հավաքական հիշողության շտեմարան: Նա ճարտարապետությունը (ճարտարապետական հուշարձանները) դիտարկում է որպես այդ հիշողությունը կրող և արձանագրող ֆիզիկական շերտ, որն արտացոլում է նաև քաղաքի ընդհանուր պատմությունը, աշխարհագրական առանձնահատկությունները, հանրության կենսակերպը (սոցիալ-հանրային, մշակութային առանձնահատկությունները) [82]: Փաստորեն Ռոսսին խոսում է հենց ճարտարապետական կերպարի մասին, սակայն առավելապես սոցիալական գիտությունների տեսանկյունից և այդ տեսությունների շրջանակներում՝ շեշտադրելով համընդհանուր հարցեր և երևույթներ:

Ճարտարապետական\* կերպար Երևոյթի համակողմանի ուսումնասիրման համար անհրաժեշտ է սահմանել այն որպես գիտական կառուցվածք: Այս ընթացքում առաջադրվում են հետևյալ հիմնահարցերը.

- ինչ է կերպարը (գոյաբանական հարցադրում),
- ինչպես, ինչ մեթոդների ու գիտակարգերի միջոցով է այն ուսումնասիրվում (իմացաբանական հարցադրում):

Հիմնվելով ժամանակակից գիտական մի շարք բնագավառների տեսական մոտեցումների վրա՝ քաղաքի ճարտարապետական կերպարը կսահմանենք որպես բազմաբուվանդակ, նաև որոշակիորեն փիլիսոփայական հայեցակարգ՝ քաղաքային տարածության ճարտարապետական օբյեկտների ընկալման արդյունք սուբյեկտի (անհատ կամ հանրություն) գիտակցության մեջ, ձևավորում է շրջակա միջավայրի, տարածության մասին պատկերացում և պայմանավորում է մարդու սոցիալ-մշակութային վարքն ու դրա դրսնորումները քաղաքային, և ընդհանրապես, շրջակա առարկայական միջավայրում [67], [85]: Երևանի ճարտարապետական կերպարի համայիր հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել միջավայրի կերպարը բնութագրող և քաղաքի ճարտարապետական կերպարի վերլուծությանը վերաբերող մի շարք հետազոտություններ: Այդ Երևոյթներին առնչվող անդրադարձներ կան գիտության տարբեր բնագավառներում (փիլիսոփայություն, միջավայրային հոգեբանություն, ճարտարապետության, արվեստի տեսություն, պատմագիտություն) [78, էջեր 1-66], [73] :

Հասկանալու համար դրա դերը հանրային կյանքում, անհրաժեշտ է համեմատություն անցկացնել կերպարի և տեսանելի իրականության միջև, սահմանել, թե ճարտարապետական ինչպիսի ձևեր կարող են ստեղծել առավել վառ և արտահայտիչ կերպարներ [75, էջ 14]:

---

\* «ճարտարապետական» եզրույթն այստեղ կիրառվում է ոչ ճարտարապետության գոյաբանության տեսանկյունից (որի հիմնահարցն է, թե որն է ճարտարապետությունը), այլ կիրառվում է որպես բնորոշում քաղաքի ֆիզիկական տարածությանը և դրա վերաբերյալ ձևավորված համընդհանուր (սոցիալական) և սուբյեկտիվ իմաստների, որի գգալի մասն են կազմում կառույցները:

Յանկացած ժամանակաշրջան ունի իրեն հատուկ պատկերացումների և ընկալումների արժեհամակարգեր: Դրանք պատմության ընթացքում ձևափոխվում են՝ պայմանավորելով քաղաքի սուբյեկտիվ կերպարների զարգացումը [81]: Դրանց վերաբերյալ հետահայաց վերլուծությունը կարող է վեր հանել քաղաքի պատմական ինքնատիպության այն գծերը, որոնք հաճախ դուրս են մնում տեսաբանների և պրակտիկ ճարտարապետների տեսադաշտից: Այն ընդլայնում է պատկերացումներն այն մասին, թե ինչպես են կազմավորվում ու զարգացում ապրում քաղաքային միջավայրն ու ճարտարապետական կերպարը քաղաքում, ինչպիսի սոցիալ-մշակութային և հասարակաքաղաքական գործոններ են ազդում այդ ամենի վրա [74]:

*Պակմական կերպարը տարածության, միջավայրի գեղագիտական հատկանիշների ամբողջությունն է, որը պատմական զարգացման ընթացքում պահպանում է իր առանցքային նշանակությունը, չնայած արտաքին տեսքի, կերտվածքի, քաղաքի մշակութային շերտերի ձևափոխությանը, և կազմում է քաղաքի գեղագիտական ընկալման հիմքը՝ կմախքը [68, Էջեր 1-48], [53]:*

Մարդու մոտ քաղաքի կերպարը ձևավորվում է մի կողմից սեփական փորձառության, գիտելիքի հիման վրա, մյուս կողմից արդեն ձևավորված և որոշակիորեն իրենց արտահայտությունը գտած քաղաքի լանդշաֆտի և ճարտարապետական շերտերի վերաբերյալ հանրային կերպարների միջոցով [77, Էջեր 1-16]: Ճարտարապետական կերպարն ուսումնասիրող հիմնական ոլորտը միջավայրային գեղագիտությունն է, որի տեսական մի շարք քննություններում կերպարը ներառում է երկու հիմնական շերտ իմաստային-բովանդակային և ձևային [76],[81]: Շրջակա առարկայական, մասնավորապես քաղաքային և ճարտարապետական միջավայրում առանձնանում է մարդու գեղագիտական փորձառության երեք հիմնական տեսակ՝ զգայական, ձևային, խորհրդանշանային [76, Էջ 11]:

- Զգայական փորձառությունը կատարվում է անմիջապես մարդու զգայարանների միջոցով, որոնք ընդունում և վերծանում են (շրջակա առարկայական) միջավայրի գունային, հոտային, ձայնային, կառուցվածքային հատկությունները:

• Զևսային (կանոներին և համաչափություններին վերաբերող) փորձառությունը վերաբերում է միջավայրի ձևերի (ծավալների) և դրանց արտահայտման որոշակի հատկությունների (ոիթմ, հաջորդականություն, ոչ միատարր, ոչ կանոնավոր կամ բաղադրյալ վիճակ) ընկալմանը: Այս տեսակը ճարտարապետական միջավայրում կձևակերպվի որպես հորինվածքային - գեղագիտական փորձառություն, քանի որ ճարտարապետության մեջ ձևը հենց հորինվածքի արդյունքն է:

• Նշանային փորձառությունը կատարվում է զուգորդությունների (ասոցիացիա) միջոցով: Այստեղ տարբերակվում են նշանն ու խորհրդանշանը՝ սիմվոլը:

Պորտելլան արդեն նշում է գեղագիտական փորձառության երկու հիմնական տեսակ՝ զգայական ընկալում և ճանաչողական ընկալում: Առաջին տեսակի փորձառության կայացման գործոնները արտաքին ազդակներն են (շրջակա միջավայրի ֆիզիկական տարրերից բխած), երկրորդի կայացմանը ճարտարապետական միջավայրի (ճարտարապետության) իմաստային, բովանդակային նշանակությունը [80, էջեր 9-43]:

Կապլանը ժամանակային տարբերակումների (ընկալման առումով) միջավայրի գեղագիտական փորձառության առանձնահատկությունները դասակարգում է որպես՝

- ակնթարթորեն ընկալվող ներդաշնակություն, կանոնավոր վիճակ, միջավայրի բաղադրիչների փոխկապակցվածություն, հաջորդականություն, միասնականություն, բաղադրյալ, բարդ, բազմատարր, մասնատված վիճակ,
- ժամանակի ընթացքում ընկալվող՝ ընթեռնելիություն, առեղծվածայնություն:

Մարդու ակնթարթային դիտողական ընկալման կերպը երկշափ է՝ պատկերային և նա միջավայրն ընդունում է որպես համայնապատկեր, իսկ ժամանակի ընթացքում միջավայրի ընկալումը եռաչափ է [76, էջ 45-55]:

Նաև առանձնացնում է միջավայրի կերպարի հետազոտման երկու հիմնական եղանակ՝ տեսական վերլուծական և փորձառական: Առաջինը վերաբերում է ճարտարապետության պատմագրությանը (պատմանկարագրական մեթոդ) և պատմության փիլիսոփայությանը (մտահայեցողական մեթոդ): Փորձառական մոտեցումները հիմնված են սոցիալական գիտությունների վրա: Դրանք ուղղված են հանրության տարբեր խմբերի ընկալումները, դիրքորոշումները, քաղաքի և դրա

ճարտարապետության և մասնավորապես ճարտարապետական կերպարի գնահատականները բացահայտելուն [77, էջեր 21-25]: Պատմական քաղաքների կամ ճարտարապետության պատմության ուսումնասիրման համար փորձառական մեթոդները բավական չեն լիարժեք արդյունքների հասնելու համար, և հիմնական մեթոդը տեսական վերլուծությունն է: Մեր ուսումնասիրությունը հիմնված է հենց պատմական վերլուծական մեթոդի վրա:

Միջավայրի կերպարի՝ որպես մարդու գեղագիտական փորձառության մասին նորագույն ժամանակաշրջանում ձևավորված գիտական տեսությունների հիմնական դրույթները ընդհանրացված և դասակարգված են <. Պետրոսյանի կողմից [79, էջ 47]: Մարդու գեղագիտական փորձառությունն ու միջավայրում հաղորդակցության բնույթը կրում են երկու հիմնական բաղադրիչ կամ շերտեր՝ սոցիալ-մշակութային (օբյեկտիվ) և սուբյեկտիվ-հոգեբանական կամ սուբյեկտիվ-ֆենոմենոլոգիական: Գեղագիտական հաղորդակցության կամ կերպարի ամբողջականությունը պայմանավորված է այդ շերտերի որակական հատկանիշներով: Դրանք ներկայանում են որպես, մի կողմից մարդկային ճանաչողական և զգայական հատկանիշների, մյուս կողմից միջավայրի ֆիզիկական՝ ձևային և ոչ ֆիզիկական՝ իմաստային հատկանիշների փոխհարաբերություններն արտահայտող հայեցակարգեր կամ հասկացություններ (հավելված 3): Զևային շերտի բացահայտման համար սահմանվել է կերպարի ընկալման երկու մոդել՝ տարածական, որտեղ քաղաքը դիտարկվում է որպես տարածություն կամ միջավայր, և պատկերային, որտեղ քաղաքը դիտարկվում է որպես դիտողական պատկերների համախմբություն: Տարածական մոդելում ձևավորվում է քաղաքաշինական հորինվածքը, իսկ պատկերային մոդելում հանդես են գալիս ճարտարապետության ոճական հատկանիշները: Տվյալ մոդելների համար առանձնացվել են կերպարի հիմնական գեղագիտական բնութագրիները: Տարածական մոդելին համապատասխանում են միջավայրի ընթեռնելիությունն ու առեղծվածայնությունը, իսկ պատկերայինին՝ կարգավորվածությունը՝ կանոնը և պատկերի համալրվածությունը (հավելված 4):

Որպես ճարտարապետական կերպարի տարածական մոդելի դարրեր առանձնացվել են ուղին, կողմնորոշող օբյեկտը, եզրագիծը, հանգույցը, շրջանը (որոշակի սահմաններ ունեցող տարածություն):

- *Ուղիները* քաղաքի հաղորդակցական միջոցներն են՝ փողոցները, մայթերը, մայրուղիները, երկաթգծերը, գետերն ու ջրանցքները: Շատերի համար ուղիները միջավայրի կերպարի գերիշխող տարրերն են: Մարդիկ ճանաչում են քաղաքը՝ շարժվելով դրանց միջոցով և միջով: Միջավայրի մյուս բոլոր տարրերը կազմակերպվում են ուղիների հետ հարաբերակցության մեջ:
- *Եզրագծերն* այն գծային տարրերն են, որոնք դիտորդի կողմից չեն ընկալվում և կիրառվում որպես ուղիներ: Սահմանները գծային շարունակականության որոշակի ընդհատումներ են՝ ջրային ափերի, երկաթուղային խոչընդոտ-պատնեշների, բնակելի շրջանների ծայրամասերի, պատերի տեսքով:
- *Շրջանները* քաղաքի բաղկացուցիչ մասերն են և ունեն երկարի ձգվածություն: Այդտեղ դիտորդը մտահայեցողական կերպով մուտք է գործում «դրսից»: Յուրաքանչյուր շրջան ունենում է ինչ-որ ընդհանուր, ճանաչելի առանձնահատկություն: Մարդկանց մեծամասնությունը քաղաքի իր կերպարը կարգավորում և ամբողջացնում է շրջանների միջոցով:
- *Հանգույցները* քաղաքի մարտավարական նշանակության այն վայրերն են, որտեղ մարդիկ ազատորեն կարող են ներթափանցել և տեղաշարժվել այդտեղից սկիզբ առնող մեկ այլ ուղղությամբ: Դրանք առաջին հերթին կապող օղակներ են՝ տրանսպորտային հաղորդակցության հատման վայրերի, խաչմերուկների և նմանատիպ այլ կառուցվածքների տեսքով:
- *Կողմնորոշող օբյեկտները* կետային տարրեր են (շենք, կողմնորոշող նշան, ցուցափեղկ, նստարան և այլն), և դիտորդը չի կարող ներթափանցել դրանց սահմաններից ներս և հարաբերակցության մեջ է միայն դրանց արտաքինի հետ: Կողմնորոշողի կիրառում նշանակում է մեկ մասնիկի անջատում որոշակի բազմությունից և դրա առանձին դիտարկում: Դա կարող է լինել ինչպես քաղաքի

ներսում, այնպես էլ դրանից դուրս և հեռու (Երկնաքեր, տաճարի գմբեթ, բնական օբյեկտ, ծառ, բլուր, սար) [75, էջեր 47-48] (հավելված 5) :

Այս տարրերը իրականում գոյություն չունեն առանձին և մեկուահի: Շրջանները կառուցվում են տարբեր հանգույցներից, հստակեցվում են սահմանների միջոցով, հատվում են ուղիներով և պատվում են կողմնորոշողներով: Ավելին՝ դրանք հաճախ տեղակայվելով միմյանց վրա՝ փոխներթափանցում են:

Այդ փոխհարաբերությունների որակական բնութագիրն էլ ձևավորում է քաղաքի կամ քաղաքային միջավայրի ընթեռնելիությունը կամ կերպարայնությունը: Կերպարայնությունը հանդես է գալիս որպես միջավայրի այնպիսի որակ, որով պայմանավորված՝ դիտորդի մոտ կերտվում են տվյալ միջավայրի վառ, հստակ, նույնական և պարզ կառուցվածքով մտապատկերներ կամ մենթալ կերպարներ [75, էջ 9]:

Այն բնորոշում է միջավայրն ուսումնասիրելու և հետազոտելու (դիտողական) հասանելիության (դյուրինության), տարածության մեջ ուսումնասիրողի կողմնորոշվելու հեշտության աստիճանը, տարածության մեջ մոլորվելու հավանականության բացառումը [72]:

Կերպարայնությունը քաղաքաշինության մեջ հանդես է գալիս որպես ձևաստեղծման որոշակի օրինաչափությունների պահպանում.

- ինքնատիպություն կամ եզակիություն,
- ձևի պարզություն,
- շարունակականություն,
- դոմինանտի առկայություն,
- հանգույցի հստակություն,
- ուղղվածության տարբերակելիություն,
- դիտողական հասանելիություն (հավելված 6):

Քաղաքային լանդշաֆտի և ճարտարապետության որակական որոշակի փոփոխությունները պայմանավորում են կերպարայնությունը: Բարձր կերպարայնություն ունեցող քաղաքը կազմված է հստակ մասերից և ակնթարթորեն

ճանաչելի է այցելուներին և բնակիչներին: Դրա առանձին բաղադրիչները՝ քաղաքաշինական հորինվածքի տարրերը, հեշտությամբ նույնացվում են և կազմում են մեկ ամբողջական կառուցվածք [75, էջեր 105-108]:

Քաղաքային ճարտարապետությունն իրականության մեջ կերտվում է երկու հիմնական գործընթացի ամբողջության՝ ստեղծագործողի (կամ ստեղծագործական խմբի, կամ մի ամբողջ շարժման, ոճական մի ամբողջ ուղղության) սեփական կերպարի ներմուծման և ներկայացման, որն իրականացվում է տեսական, քննադատական տարրեր վերլուծությունների և վերարտադրությունների՝ տեքստերի, հանրային քննարկումների, մեդիա դաշտի միջոցով, և սպառողի «ոչ ճարտարապետական» ընկալումների ձևավորման միջոցներով [64]:

Պատկերային մոդելին համապատասխանում են միջավայրի կանոնավոր ու համալրված լինելու հատկանիշները, երբ դրա առանձին բաղադրիչների փոխհարաբերությունը չի իրականանում պատահականության սկզբունքով, ենթարկվում է ընդհանրական օրենքների: Միջավայրի կանոնավոր լինելը անհրաժեշտ նախապայման է դրա բազմատարր կամ համալրված լինելու համար, իսկ միջավայրը, որի կառուցվածքում առկա չեն որոշակի կանոններ, ընկալվում և գնահատվում է որպես քառսային և անկանոն, այլ ոչ թե որպես բազմատարր օբյեկտ [65], [72]: Տարածական մոդելին համապատասխանում են միջավայրի ընթեռնելիությունն ու խորհրդավորությունը, քանի որ միայն որոշակի ժամանակահատվածում է հնարավոր ընկալել միջավայրը (այսինքն՝ այդ միջավայրում տեղաշարժվելու ընթացքում) որպես տարածական միավոր և մեկնաբանել դրա տարածական առանձնահատկությունները [84]:

Առեղծվածայնությունը միջավայրի տարրերի հաղորդած գեղագիտական այն բնութագրիչն է՝ որակը, որը դիտորդի մոտ ձևավորում է ավելին տեսնելու, նոր տեղեկության ստանալու կերպար, մտապատկեր: Առեղծվածային միջավայրերում ճարտարապետական կերպարը բացահայտվում է փուլ առ փուլ, իսկ միջավայրի հետ դիտողական հաղորդակցումը հաջորդական (սերիայ) բնույթ է կրում [69]:

Միջավայրի կերպարի ձևավորումն ու հաղորդակցության կայացումը կատարվում է եռաչափ մոդելում, քանի որ այն իր բազմաբաղադրիչ և տարածական լինելու պատճառով կայանում և ընկալվում է ժամանակի ընթացքում [71]:

Միջավայրի նախընտրութունը՝ գեղագիտական արժեքը կախված է դրա համալրվածությունից, կարգավորվածությունից, ընթեռնելիությունից:

Ճարտարապետական կառուցի գունային և մակերեսի կառուցվածքին՝ տեքստուրային, ձևին վերաբերող հակադրություններն ու համադրությունները, ճակատային ուրվագծի համաչափության ու անհամաչափության տարրերը, մասնատվածության աստիճանը, ճակատային դետալների քանակը պայմանավորում են կերպարի համալրվածության աստիճանը [22]: Ճակատային դետալները տվյալ համատեքստում վերաբերում են կառուցի փոքր մասշտաբ ունեցող բաղադրիչներին: Ճակատային մասնատվածությունը պայմանավորված է՝ համապատասխան հետևյալ չափորոշիչների.

- կառուցի չափ (մեծ տեսադաշտին համապատասխան կառուցը մարդն ընկալում է ամբողջական, փոքր՝ մասնատված),
- ուղղահայաց բաժանումներ,
- ճակատի ուղղահայաց տարրերի հաստություն,
- ճակատի մակերեսների առանձնացվածություն,
- ընդհանուր համաչափություններ. ճակատի երկու չափերի հարաբերակցությունը [83] (հավելված 7) :

Քաղաքի կերպարի վերլուծության այլ մոտեցումներում ճարտարապետական կերպարը հանդես է գալիս որպես ճարտարապետության գեղարվեստական-գեղագիտական իմաստների ամբողջություն՝ իմաստակրություն, որն ունի կերպարի դիտարկման երեք տեսանկյուն, որոնցով հնարավոր է բացահայտել կերպարի բոլոր առանձնահատկությունները. կերպարը որպես

- գեղարվեստական ընդհանուրացում,
- գեղարվեստական ամբողջություն՝ որոշակիորեն ձևավորված կառուցվածքով - նշանային համակարգ,

- մարդկային զգացողությունների ամբողջություն [58]:

Ճարտարապետության մեջ գեղարվեստական կերպարները կերտվում են գեղարվեստական ընդհանրացումների արդյունքում և արտահայտվում ճարտարապետական ձևերում առանձնահատուկի և տիպայինի փոխհարաբերություններում (որը տանում է խորհրդանշայնացման): Քաղաքի խորհրդանշանային առանձնահատկությունները ներկայացվում են հանրային հուշարձանների միջոցով, որոնք տվյալ քաղաքի մշայկութային համատեքստին իմաստներ են հաղորդում և չեզոք վայրերը վերածում գաղափարապես լիցքավորված տարածությունների [66]:

Միջավայրի իմաստը մեկնաբանվում է ինչպես նշանագիտական, այնպես էլ խորհրդանշանային վերլուծություններով(ավանդական մոտեցում): Այսպես, Ա. Գրիգորյանը հայ ավանդական բնակելի միջավայրն ու ճարտարապետությունը մեկնաբանում է որպես խորհրդանշանային համակարգ՝ հիմնված բնափիլիսոփայական պատկերացումների վրա [7]:

Հաճախ նշանագիտական և խորհրդանշանային մոտեցումները նույնացվում են, սակայն ճանաչելիության և հաղորդակցության եղանակի առումով դրանցում կան տարբերություններ [81, Էջեր 35-53]: Նշանն (սեմիոտիկական) ունի առավելապես միարժեք և համընդհանուր բնույթ, խորհրդանշանը՝ բազմանշանակ է և կիրառելի մարդկային որոշակի խմբից ներս, իսկ դրանից դուրս կամ ունի մեկ այլ հանրային մեկնաբանություն, կամ ընդհանրապես չունի [9], [26]:

Գեղարվեստական և ճարտարապետական կերպարների միջև կան տարբերություններ. ճարտարապետական կերպարը ընկալման արդյունք է և ձևավորվում է այդ գործընթացում [42]: Ճարտարապետի ստեղծագործական դերը կերպարի կամ գեղագիտության ձևավորման մեջ միարժեք չէ, ինչպես կերպարվեստում կամ գրական արվեստում, ժողովրդավարական հասարակություններում: Այսօր, երբ կանոնը չի դիտարկվում որպես հիմնակետ (ինչպես օրինակ անտիկ հասարակությունում և անտիկ կերպարի ձևագոյացման և ընկալման համակարգում), նախագծող-սպառող համակարգում ճեղքվածք է

առաջանում, և հարկ է լինում սպառողին ներգրավել նախագծային փուլում: Փոխվում են ճարտարապետ-սպառող երկխոսության ձևաչափերը:

Գեղագիտական այս հարացուցերի ամբողջությունը կարելի է ձևակերպել որպես քաղաքի ճարտարապետական կերպար, որի կերտման ընթացքն ունի այսպիսի հաջորդականություն.սուբյեկտի պատկերացման մեջ իրականության վերապատկերմանը նախորդում է այսպես կոչված «կերպարային մտադրության»՝ ապագա կերպարի մտահայեցողական գաղափարի ձևավորումը: Նյութապես արտահայտվելով՝ այն դառնում է սոցիալական իրականության փաստ՝ «կերպար-ստեղծագործություն», իսկ արդեն ընկալող սուբյեկտի գիտակցության մեջ ի հայտ է գալիս կերպարի նոր դրսևորում՝ «կերպար-ընկալում» [47, էջ 101]:

Զգայական մոտեցումն ու արձագանքը միջավայրի հանդեպ հիմնականում հատուկ է նախագծողին, մինչդեռ, զուգորդվող (ասոցատիվ) արձագանքը հատուկ է ճարտարապետական միջավայրի «սպառողին» [81, էջեր 15-19]: Այսօրվա հայաստանյան իրականության մեջ այս երևույթը կարծես թե տեղայնացվում է: Հասարակության «Էլիտան» համարվող պատվիրատուների շրջանակներում միտում կա միջավայրն ու ճարտարապետական օբյեկտը դիտարկել նշանային համակարգում («մեծություն», մեծ չափեր՝ ուժ, իշխանություն, զարդանախշ, զարդաքանդակ՝ հարստություն, հայկական միջնադարյան ճարտարապետության և քանդակի տարրեր ու դրանց համադրություններ՝ հայրենասիրություն): Գեղագիտական հաղորդակցությունը միջավայրում առավել ընդգրկուն հասկացություն է, քան ճարտարապետության գեղագիտական՝ հորինվածքային խնդիրները կամ գեղեցիկի գաղափարն ինքնին: Այսինքն՝ գեղագիտական արժեքը սահմանվում է հանրության գեղագիտական գնահատականի միջոցով: Խնդիր է առաջանում, երբ այդ գնահատականների անհամատեղելիություն է ստացվում: Ճարտարապետական կերպարն ինքնին գեղագիտական տարակարգ է և այս տեսակետից դրա կերտման գեղագիտական առանձնահատկությունները շատ հաճախ նույնացվում են ճարտարապետության առանձնահատկությունների հետ ընդհանրապես: Այս դրույթին հետևել ենք աշխատանքն իրականացնելու ժամանակ:

## **1.2. Երևանի դիրքը, սահմանները, գրաված տարածությունը: Ռելիեֆը, կլիմայական պայմանները, բնական շինարարական նյութերը**

Երևանի ճարտարապետական կերպարի կերտման համար կարևոր են եղել նախ՝ բնակլիմայական պայմանները, որոնցով պայմանավորված կազմավորվել է նաև քաղաքի գեղագիտությունը [40, էջեր 33-58] (հավելված 8):

### **1.2.1. Տեղագրությունը**

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, նրան շրջապատող բարձունքներում, ծովի մակերևույթից 900-1000 մետր բարձրության վրա և բնականից հարմար աշխարհագրական դիրք ունի: Այստեղ էին հատվում Արաքսի ու Հրազդանի ափերով ձգվող ճանապարհները, որոնք բանուկ են եղել իին ժամանակներց ի վեր: Երևանի դիրքը գերակա է Արարատյան դաշտի նկատմամբ և իր հիմնադրման օրից գտնվել է Երկրի կենտրոնական մասում: Քաղաքն օղակող բլուրներն ու լեռնաճյուղերը բնական պատնեշ՝ ամրոց են եղել նրա համար, իսկ Հրազդանն ու նրա ձախակողմյան վտակ Գետառը՝ ոռոգման և խմելու ջրի անսպառ աղբյուրներ: Ըստ վերոհիշյալի, քաղաքի հիմնադրման համար առկա են եղել քաղաքաստեղծ բոլոր գործոնները: Նպաստավոր աշխարհագրական դիրքը, Արևելքի ու Արևմուտքի հնագույն առևտրական ճանապարհներին մոտ գտնվելը, բարերար կլիմայական պայմաններն ու բերքատու հողերը բոլոր ժամանակներում նպաստել են այս տարածքի բնակեցմանը և մարդու տնտեսական ու մշակութային գործունեության զարգացմանը:

Երևանի և նրա շրջակայքի համայնապատկերի գեղեցկությունն ու աշխարհագրական դիրքի նպաստավորությունը նշել են շատ հեղինակներ ու ճանապարհորդներ [1, էջեր 9-10], [23, էջեր 14-15]: Ամենադիպուկն ու պատկերավորը բնութագրությունն է Լինչի: Նա գրում է. «Երևանը աչքի է ընկնում ինչպես իր աշխարհագրական դիրքով ու բնական ճարտարապետական իսկա կառուցներով..., նույնպես և պատվավոր տեղով, որ նա գրավում է հրաշապատումների և պատմության մեջ: Երևանը գտնվում է Կասպից ծովի ափերից դեպի Փոքր Ասիայի սիրտը տանող ճանապարհի վրա, և այդ ճանապարհով պատմության ընթացքում

Մերձկասայան և Անդրկասայան ժողովուրդները գնացել են դեպի Սև և Միջերկրական ծովերի առափնյա շրջաններ» [52, էջ 191]:

### **1.2.2. Հին Երևանի բնական սահմանները**

Քաղաքի հիմնական տարածքը ամֆիթատրոնի ձևով երեք կողմից եզերված է Նորքի, Քանաքեռի և Կոնդի բարձունքներով: Քաղաքի հյուսիսային և հյուսիսարևմտյան կողմում գտնվում են Քյոշաքլուի, Աղջկաբերդի (Կըզլկալա) և Կաքավի (Կաքավակոնդ) բլուրները: Աղջկաբերդի մոտ՝ նախկինում Երևանից-Թիֆլիս տանող արքունական ճանապարհի ձախ կողմում էր Կողեռն կոչված բլուրը, որի վրա տարածվում էր քաղաքի հին գերեզմանոցը: Արևմտյան կողմի բլուրներից էին Դալմայի (Նորագյուղի), Զորագյուղի և Հերակլի (Բորչի թափա) բլուրները, հարավային կողմում՝ Խոսրովապատ բլուրը (Մոլխանաթ-թափա, այժմյան Երկաթուղային կայարանից ոչ հեռու) [1, էջ 11]: Երևանի պատմության և ճարտարապետության համար առավել կարևոր են եղել Երկու բլուր՝ Կարմիր-բլուրը՝ քաղաքի արևմտյան մասում, նախկին Զարախ գյուղի մոտ (այժմ Երևանի թաղամաս), Հրազդանի ձախ ափին և Արին-բերդը, որը գտնվում է քաղաքի հարավարևելյան կողմում: Դրանցից առաջինի լանջերին և շրջակայքում Վանի թագավորության ժամանակաշրջանում փոփած էր Թեյշեբախինի բերդաքաղաքը, իսկ Արին-բերդի շրջակայքում հնագույն Երևանն էր՝ Էրեբունի հայտնի բերդաքաղաքը:

### **1.2.3. Երևանի շինարարական նյութերը**

Երևանի տարածքում և նրա շրջակայքում շատ տարածված են շինարարական քարերը՝ տուֆն ու բազալտը: Մրանք այն հիմնական շինանյութերն են, որոնցով ձևավորվել է քաղաքի ճարտարապետական լանդշաֆտը: Տուֆը պատկանում է հրաբխային ապարների շարքին և իր մի շարք հատկությունների շնորհիվ (թեթև է, հեշտ մշակվող, համեմատաբար վատ հաղորդիչ է և այդ պատճառով թույլ է տալիս շինության ներսում պահպանել հաստատուն ջերմաստիճան, բազմագույն է, քիչ է ենթարկվում հողմահարման, Երկարակյաց է, լավ է կապակցվում կրի հետ)

հազարամյակներ շարունակ օգտագործվել է Երևանում որպես շինաքար: Այսպես կոչված «Երևանյան» տիպի տուֆը բոլոր մնացած տուֆերից ամենատարածվածն է և լինում է կարմրավուն, սև և գորշ գույնի երանգով [36, էջ 9]: Տուֆի հանքավայրերն են Կըզլարը, Ավանը, Դալման, Զրվեժի հին ու նոր քարհանքերը: Երևանում օգտագործվել է նաև բազալտ, որը կիրառություն է գտել մոնումենտալ ճարտարապետության (պարիսպների հիմքեր, տաճարներ) մեջ: Երևանում գտնվող Էնեոլիթյան (պղենձեքարեդարյան) ժամանակաշրջանին վերաբերող Շենգավիթ բնակավայրում անգամ հայտնաբերվել են բազալտով իրականացված պատերի շինարարական մնացորդներ: Հրազդանի ծորում կան բազալտի հզոր շերտեր: Դրանք առկա են նաև Կոնդում, Աբովյան փողոցի հյուսիսից հարող տարածքներում: Երևանում նախկինում հիմնականում արդյունահանվել են քաղաքի հարավային թաղամասի՝ Երկաթաղբյուրի (Դամիր-բուլայ) տուֆն ու բազալտը [13, էջ 70]:

Հին Երևանում նշված քարերի հետ և դրանցից էլ ավելի շատ կիրառվել է կավը: Երևանյան կավը կարմիր և մոխրագույն գույնի է: Կավով հարուստ էին Դամիր-բուլաղը, Նորքը (Չոլմաքչի-կավագործ) [1, էջ 29]: Կավաշեն էր հին Երևանի բնակելի շենքերի մեծ մասը, այն օգտագործվում էր որպես շաղախանյութ, ծեփանյութ: Կավաշեն էր ընկալվում Վանի թագավորության ժամանակաշրջանի Երևանի ճարտարապետական կերպարը: Կավից պատրաստված հում և թղծված աղյուսով էին կերտված բերդերը, պալատները, տաճարները, մզկիթները: Երևանն ունի նաև ավազահանքեր:

### **1.3. Երևանի գարածքի պատմական զարգացումը**

Երևան քաղաքի ճարտարապետական կերպարի ձևավորման կարևոր նախադրյալներից է քաղաքի տարածության կառուցվածքը, որի բաղադրիչներն (տարրերը, քաղաքաշինական միավորները) են թաղամասերը, քաղաքի ուղիների ցանցն ու հանգույցները: Ստորև ներկայացվում է այդ բաղադրիչների ընդհանուր բնութագիրը քաղաքի պատմական զարգացման ընթացքում: Զարգացման յուրաքանչյուր փուլի համար քաղաքի դոմինանտող գործառությը տարբեր է:

Գործառույթի փոփոխումը հանգեցրել է միաժամանակ կերպարային բնութագրիչների կամ կառուցվածքի փոփոխության: Կերպարային կառուցվածքը քաղաքի կերպարի տրոհված տարրերի քաղաքաշինական կառուցվածքն է: Ըստ այդմ Երևանի պատմական զարգացման յուրաքանչյուր ժամանակաշրջանում կերպարային կառուցվածքն ընդունում է որոշակի խորհրդանշական բնութագիր. բերդաքաղաք, գավառական քաղաք, նահանգային կենտրոն, մայրաքաղաք, քառսային քաղաք (հավելված 9):

Նախորդ Ենթագլխից պարզ դարձավ, որ Երևան քաղաքն առաջացել է այստեղ գոյություն ունեցող տոհմատիրական ժամանակաշրջանի բնակավայրերի (Շենգավիթ, Շիծենակաբերդ, Արին-բերդ և այլն) և Արարատյան թագավորության քաղաքամրոցների (Էրեբունի, Թեյշեբախնի) տարածքում: Որպես Արարատյան դաշտավայրի բնակավայրերից մեկը՝ պատմիչներն առաջին անգամ հիշատակում են Երևանը՝ արաբների կողմից 7-րդ դարի կեսին այն պաշարելու կապակցությամբ: Այստեղ Երևանը ներկայացվում է որպես «ամուր բերդ» ունեցող բնակավայր [13, էջ 26]:

Միջնադարում քաղաքի տարածքի, նրա ընդհանուր տեսքի մասին տեղեկությունները ճանապարհորդներ Տավերնեի և Շարդենի վկայություններն են (17-րդ դարի Երևորոդ կես): Այստեղ շատ պատկերավոր ներկայացված են քաղաքի լանդշաֆտը, աշխարհագրական հատկանիշները և կենսաապահովման բարենպաստ պայմանները, որոնք քաղաքատարածքների ընդլայնման և կառուցապատման հիմքն են հանդիսացել [61, էջ 242]:

Միջնադարում Երևանն ուներ եռամաս կառուցվածք՝ բերդ (զբաղեցնում էր մոտ 30 հա տարածք), բուն քաղաք, արվարձանային թաղամասեր: Քաղաքի բնակեցման տարածությունը բաղկացած էր երեք հիմնական շրջաններից, որոնք միացած էին իրար և կազմում էին կառուցապատված մի ընդարձակ տարածություն՝ որի զգալի մասը ամփոփված էր Զանգու և նրա ձախակողմյան վտակ Կըրխբուլաղ գետերի միջև:

Քաղաքի հիմնական հատվածը (Շահար, Հին թաղ, «Արարատյան հայկական թաղ») տեղավորված էր քաղաքի հարթ մասում՝ Երևանի բերդից հյուսիս-արևելք:

Կոնդը (Թափաբաշ) գրադեցնում էր քաղաքի արևմտյան բարձրադիր մասը: Նրա տարածքում են եղել Ձորագյուղը, Դարավանդներով դեպի Հրազդանի ձորն իջնող այգիները և Դալման: Մյուս կողմից Կոնդի սահմանները հասնում էին մինչև Բերդ: «Քարհանքի թաղ»-ը (Դամիր բուլաղ)- քաղաքատարածության հարավարևելյան մասում էր:

Այս քաղաքատարածքներին 18-րդ դարում միանում է նաև քաղաքից արևելք գտնվող այգեպատ բարձունքի վրա սկսված Նորքը (Չոլմաքի) [62, Էջեր 463-468]: Երևանի քաղաքամասերն էին կազմում նաև արվարձաններում աճող պտղատու և խաղողի այգիները, որի պատճառով այդ ժամանակի Երևանի կերպարը նույնացվել է քաղաք-այգու հետ, որն ի վերջո հետագայում օգտագործվեց նաև Թամանյանի կողմից:

Կառուցապատումն անկանոն էր, ու քաղաքային տարածքի զարգացումն ընթանում էր տարերայնորեն՝ անվերահսկելի ձևով: Զկար քաղաքաշինական մարտավարություն: Քաղաքի հատակագծում ձևավորված հորինվածքահատակագծային հնարքների բազմազանությունն իր արտահայտությունն է ստանում նաև տեսողական-գեղարվեստական և գործառույթային-տարածքային գոտիավորման մեջ՝ բնակելի, առևտրական, ամրաշինական, առևտրական և կանաչ: Կոնդում բնական լանդշաֆտի շնորհիվ թաղամասի առանձնացվածությունը լուծում էր կողմնորոշման խնդիրները: Բարձունքի նեղ, կորագիծ, լանդշաֆտին համահունչ փողոցների ցանցը բարձրացնում էր քաղաքի գեղարվեստագեղագիտական արժեքը: Քաղաքամասերի ընդարձակման առաջին քաղաքաշինական միջոցառումը վկայված է 1837 թվակիր մի փաստաթղթով, որի համաձայն Երևանի կենտրոնական հարթ մասում գտնվող Խանի այգու ընդարձակ ու բարձիթող տարածքը հատկացվում է «Նոր» կոչված թաղամասի կառուցապատմանը: Զբաղեցնելով Շահարի, Կոնդի և կենտրոնական շուկայական հրապարակի միջև ընկած տարածքը՝ թաղամասը կապ էր ստեղծել դրանց միջև: Երևանի անկանոն կառուցապատված և այգիներով շրջապատված տարածքի մի մասում ձևավորվում է «Նոր» թաղամասը՝ ուղղագիծ ու միմյանց գուգահեռ փողոցներով [16, Էջ 466]:

1856թ. գլխավոր հատակագիծը ընդգրկում էր Հին թաղը, Նոր թաղը, մասամբ Գետառի ձախափնյա մասը: Զուգահեռ փողոցների ցանց շարունակվում է նոր ընդգրկված տարածության վրա և լրացվել դրանց ուղղահայաց փողոցների համակարգով:

Երևանի հաջորդ՝ 1865թ. գլխավոր հատակագծում, կանոնավորության սկզբունքը պահպանելով, քաղաքատարածքներին հավելվում է նաև Դամիր-բուլաղը՝ Գետառի ձախափնյա տարածքի վրա՝ Նորքի փեշերին: Այս հատակագծով փորձ է արվում քաղաքի անվերահսկելի ընդարձակման հետևանքով նրան միացած արվարձանային թաղամասերի (Նորք) և կենտրոնական միջուկի միջև համապատասխանեցում ստեղծել՝ առանձին բնակելի կղզյակների ծևավորման տեսքով: Շրջանների վերահսկվող ու չվերահսկվող տեղամասերի կղզյակներն ուրույն չափորոշիչներ հանդիսացան գոտուրման, տիպաբանության և կազմաբանության համար: Կառուցապատվող տարածքների ու արդեն գոյություն ունեցող բնակելի կղզյակների միջև կանոնավոր երթուղիների, նրբանցքների մշակումն ու իրականացումը պետության հստակ կանոնակարգված գործունեության արդյունքն էին [33, էջ 23]: Նախագծով նախատեսված կառուցապատումներն իրականացվեցին հիմնականում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Քաղաքի բարձունքներով շրջապատված «կաթսայական» մասում հիմնադրվում են փոխուղղահայաց նոր փողոցներ: Քաղաքաշինական այս իրավիճակը արձանագրված է Ալիշանի կողմից հրատարակված հատակագծում [3, էջ 311]: Այստեղից երևում է, որ այդ ժամանակ փողոցների կանոնավոր ցանցով պատած էր քաղաքի զգալի տարածությունը՝ վերին սահման ունենալով այժմյան Սայաթ-Նովայի, իսկ ներքին՝ Մալականսկայա-Կարմիր բանակի՝ այժմյան Գրիգոր Լուսավորիչ փողոցները: Քաղաքի տարերայնորեն առաջացած կառուցապատումը փոխարինվում է հարուստ քաղաքացիների առանձնատներով, վարչական և հասարակական երկու-երեք հարկանի քարե շենքերով ծևավորված փողոցների ուղղանկյունաձև ցանցով: Երևանի քաղաքաշինական զարգացումը տեղի էր ունենում ինչպես քաղաքի սահմաններում

մոտակա գյուղերի ընդգրկման, այնպես էլ ազատ տարածքներում՝ նոր թաղամասերի ստեղծման հաշվին:

Կանոնավոր հատակագծման կատարելագործման մարտավարությունը առավել ակտիվ կիրառություն ստացավ խորհրդային կարգերի հաստատումից հետո. կարգավորվեց ուրբան հյուսվածքը ինչպես կենտրոնում, այնպես էլ ծայրամասերում ձևավորվեցին նոր շրջաններ:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոխակերպումների և քաղաքի տնտեսաքաղաքական նոր կարգավիճակով պայմանավորված՝ ք. Երևանը վերապրեց տարածքային աճի նոր փուլ, որտեղ քաղաքատարածքների ձևավորումն ու կազմակերպումն ընթանում են պլանավորված՝ Գլխավոր հատակագծերի կազմումով:

Քաղաքը զարգանում ու կառուցապատվում էր խառնասերման մեթոդով, որը ներառում էր նոր եվրոպական սկզբունքների ու խորհրդայինի համադրումը: Երևանի քաղաքային տարածքների կազմակերպումը հիմնված էր եվրոպական քաղաքների նախատիպի և խորհրդային պլանավորման առաջընթացի համադրության վրա: Քաղաք-այգու եվրոպական մոդելն իր տեղական զարգացումը ստացավ Երևանի օրինակով: Երևանի տարածքակառուցվածքային նախագծման առանձնահատկությունը քաղաքի տարբեր մասերի միջև միատարրության ներդնումն էր՝ գործառույթների տարանջատմամբ՝ գոտիավորմամբ (բնակելի, արդյունաբերական և հանգստի գոտիներ), կենտրոնի ու ծայրամասերի տարածքային անընդհատության ապահովմամբ: 1924 թվականին կազմված գլխավոր հատակագծով առանց տարածքային արմատական փոփոխությունների, Երևանին նոր մասշտար է տրվում լայնացնելով արդեն գոյություն ունեցող մի քանի փողոցներ, ստեղծելով նոր, լայն փողոցներ, պողոտաներ ու հրապարակներ ավելացնելով շենքերի հարկայնությունը մինչև չորս կամ հինգ հարկ:

1939 թ. «Նոր Մեծ Երևանի գլխավոր հատակագիծ» քաղաքաշինական նոր փաստաթղթով նախատեսվում էր նախորդ հատակագծի մտահղացման զարգացման հիմքի վրա նաև կենտրոնական միջուկի շուրջ գտնվող տարածքների

ընդլայնում: Քաղաքն այս ժամանակ նախորդի համեմատ տարածքով քառապատիկ աճել էր: Այդ հատակագծով քաղաքի շրջագծի մեջ էին մտնում Նորքը, Քանաքեռը, Հրազդանի աջ ափի Դալմայի այգիները: Արևմուտքում սահմանը մոտենում էր Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա ավաններին: Ըստ այդ հատակագծի նախատեսվում էր նախկինում կառուցված մերձքաղաքային գյուղ արբանյակների ընդլայնում, քանի որ դրանք արդեն քաղաքի կազմում էին ներգրավվել (Արարկիրն ընդլայնվելով դեպի հյուսիս-արևելք՝ ծնունդ տվեց նոր Արարկիր թաղամասին): Սրան գումարվում էր նոր քաղաքամասերի՝ ծայրամասերում ներգաղթյալների համար տեղային արբանյակ բնակտարածքների ստեղծումը: 1940-ներից հայրենադարձության գործընթացի պայմաններում կառուցապատվեցին նոր թաղամասեր՝ Այգեստան, Նոր Կիլիկիա, Նոր Զեյթուն, Նոր Արեշ, Մալաթիա, Նուբարաշենը [19, էջ 15-125]: Այստեղ հիմնականում քարե մասնավոր տներ էին կառուցվում՝ հարկ, հարկուկես բարձրությամբ:

1951թ. մշակված Գլխավոր հատակագծով քաղաքի տարածքային զարգացումը ընթանալու էր հյուսիսարևելյան և հարավարևմտյան ուղղություններով: Երևանին էին միանում այդ ուղղությունների մերձակա բնակավայրերը, որոնք պատմության ընթացքում սերտորեն կապված էին քաղաքի հետ (Ավան, Նորագավիթ, Չարբախ): 1950-ական թվականներին զանգվածային բնակարանաշինության աճը պահանջում էր ծավալել քաղաքների ազատ տարածությունների քաղաքաշինական յուրացում: Այս իմաստով բնորոշ է Երևանում Բաղրամյան, Ազատության, Կիլյան փողոցների կառուցապատումը, ինչպես նաև «Աջափնյակ» շրջանը: Կառուցապատումն իրականացվում էր շրջանների պարագծով՝ 4-5 հարկանի շենքերով:

60-ականներից քաղաքատարածքներն ավելանում են նաև բնակելի նոր զանգվածներով (Նոր Նորք, Էրեբունի, Շենգավիթ և այլն): Այս թաղամասերը կառուցապատվել են միօրինակ շենքերով՝ տիպային նախագծերով և առանց լանդշաֆտի հետ տեղակապման: Այս թաղամասերը, իհարկե, ճարտարապետագեղարվեստական կերպարով աչքի չեն ընկնում [39, էջ 129]: Մշակվում են շրջանների հատակագծերն ու կառուցապատման նախագծերը: Նրանցում արտահայտված է խորհրդային ժամանակաշրջանի քաղաքային տարածքի

օգտագործման կազմակերպման առանձնահատկություններից մեկը ևս. այն էր, որ Երևանամերձ տարածքներում կառուցվում էին առանձին մեծ բնակելի կղզյակներ, որոնք ներառում էին նաև ավելի փոքր տրամաչափի թաղեր: Դրանցում կազմակերպված էր նաև հանրային կանաչ գոտիների ստեղծումը, որը գործառությային առումով ապահովում էր այդ թաղամասերի բնական հանգստի հնարավորությունը, ինչպես նաև թարմ, թթվածնով հարուստ օդի առկայությունը և քաղաքային տարածքի հավասարակշռված օգտագործումը: Թաղամասերը մասամբ կառուցապատվում են 9 հարկանի բնակելի շենքերով. նկատվում է բազմազանության աճ (Կենտրոն, Նոր Նորք և այլն):

70-ականներից Երևանի տարածքային զարգացումն ընթանում էր մի քանի ուղղություններով՝ Հրազդանի ձախ ափին - Հարավարևմտյան թաղամասում, Ավան և Ավան Առինջ թաղամասում (քաղաքի հյուսիսարևելյան հատվածում), Դավթաշենում (հյուսիսային հատվածում) և Նորքի զանգվածում (արևելյան հատվածում): Ներքին տարածությունն այս թաղամասերում ենթարկված է ազատ վերադասավորության՝ բազմահարկ շենքերի կառուցմամբ [39, Էջ 194]: Մշակվել էին նաև կենտրոնի մանրամասն հատակագծման, պատմական հուշարձանների տարածքի գոտևորման և լանդշաֆտի կազմակերպման նախագծերը (1971 թ. Երևանի նոր գլխավոր հատակագիծը (ճարտարապետներ՝ Մ. Մազմանյան, Է. Պապյան, Գ. Մուրզա, Յ. Զախարյան, 1 մլն 100 հազար բնակչի համար մինչև 2000 թվականը ժամկետով):

Այս ժամանակաշրջանում ք. Երևանում քաղաքային պլանավորումն ընթանում էր քաղաքային կառուցվածքների թարմացման ու վերակառուցման ուղղությամբ՝ արգելելով տարածքային ընդլայնումը [39, Էջ 256]: 1980-ական թվականներից Երևանում կառուցապատմամբ նոր տարածքներ իրացվում էին միայն ծայրամասերի ազատ տարածությունների հաշվին (Նորաշեն թաղամասը Շահումյան շրջանում): Այստեղ խմբավորման և 14-16 հարկանի շենքերի կիրառման արդյունքում տարածությունների կազմակերպման նոր մոտեցումներ մշակվեցին: Դրանք բխում էին գործառույթների տեղաբաշխման, գոտևորման հստակությունից:

մանկապարտեզների և դպրոցների խմբավորում, կոմերցիոն օբյեկտների կենտրոնացում գլխավոր փողոցների երկայնքով և այլն: Նախատեսված էր ք. Երևանի թեոնաթափումն իրականացնել՝ դրա շուրջը զարգացնելով առկա արբանյակ քաղաքները: Այս մոտեցումների զարգացումն ու իրագործումն ընդհատվեց 1991 թ. ԽՍՀՄ-ի փլուզմամբ:

1950-1991-ական թվականներին քաղաքային տարածքների զարգացումները ընթանում էին խորհրդային քաղաքաշինական քաղաքականությանը համապատասխան՝ արտահայտված քաղաքների գլխավոր հատակագծերում: Այդ տարածքների հիմնական որակական հատկանիշներն էին՝ հողերի ռացիոնալ օգտագործումը, ստանդարտ կառուցների կիրառումը, դրանց հարկայնության ավելացումը և թաղամասերի չափերի մեծացումը: Շրջանները միատարր են: Քաղաքի ճարտարապետական կերպարի գեղագիտական հատկանիշները հիմնականում բացակայում են:

Երևանի խորհրդային շրջանի քաղաքային տարածքի բնութագիրը այսինքն՝ կառուցվածքը, կազմակերպումը, ձևերը և կերպարը որոշվել էին պետական քաղաքականության սկզբունքներին համապատասխան, ինչպես նաև քաղաքաշինության մասնագետների գործնական լուծումների հավաստմամբ և որոշակի բնակարանաշինական քաղաքականության արդյունքում, որը դիտարկում էր քաղաքի տարբեր գոտիները մեկ ընդհանուր ամբողջության մեջ: Այսպիսի հավաքածուն ներառում էր բազում անհրաժեշտ տարրեր, որոնք միահյուսվելով, ձևավորում էին մի ամբողջություն՝ կացարան, հանգիստ, աշխատանքի գործիքներ, կոմունալ ծառայություններ, ենթակառուցվածքներ, բնություն (հավելված 9):

Հետխորհրդային շրջանում քաղաքաշինական զարգացումներում որպես հիմնական խնդիրներ են դիտարկված հատակագծային կառուցվածքի կայունացումը, քաղաքային միջավայրի տարածական ամբողջականությունը, պատմամշակութային ժառանգության պահպանությունը և այլն [33, էջ 16]:

### **1.3.1. Քաղաքային դարաձբների կազմակերպման ընդհանուր համակարգը**

Երևանի քաղաքային շրջանների գործառական գոտունուման կազմակերպումը ենթարկվում էր տրամաբանական հինգ սկզբունքի՝ արտադրություն, բնակելի շինարարություն, առևտուր, հասարակական օբյեկտներ, ենթակառուցվածքներ և հանգիստ: Գործառույթները բաշխված էին գերակայության սկզբունքով և ժամանակային առումով հաջորդականության ընտրությունը վճռորոշ ազդեցություն ուներ դրանց կազմակերպման համար:

Քաղաքային շրջանների առաջին մակարդակի դերաբաշխումը կատարված էր գուտ գործառական գոտիավորմամբ, մարդկանց կյանքի կազմակերպման համար ԽՍՀՄ-ում ընդունված երեք կարևոր տարրի հիման վրա, որոնք էին՝ աշխատանքը, կացարանն ու հանգիստը: Այս երեք տարրով պայմանավորված էլ խորհրդային պլանավորումը որոշում էր քաղաքի երեք հիմնական գոտին՝ բնակելի, արտադրական և հանգստի (ըստ այդ չափանիշների ԽՍՀՄ-ի փլուզման ժամանակ ք. Երևանում կար ութ բնակելի թաղամաս՝ կառուցապատված անկանոն և կանոնական սկզբունքներով), արդյունաբերական գոտի և երեք մեծ հանգստի գոտիներ:

Քաղաքային շրջանների երկրորդ մակարդակի դերաբաշխումը կապված էր տարածքների օգտագործման հետ, նաև նոր գործառական գոտիների բնորոշմամբ. 1) բնակելի տարածք, որը ներառում է բնակության շրջանը, դրանց հանրային կենտրոններն ու ընդհանուր օգտագործման ազատ տարածքները, 2) արդյունաբերական տարածք, որը ներառում է արտադրական և հարակից շինությունները, 3) պահեստային կառույցների տարածքները, 4) տրանսպորտային տարածք, որը ներառում է սարքավորումներ և տրանսպորտային կառույցներ, ինչպիսիք են կանգառները ու ուղևորների սպասարանները, 5) հանգստի գոտու տարածքները, այդ թվում՝ մարզական համալիրները, մշակույթի ու հանգստի պուրակները, անտառային պուրակներն ու բնատեղանքային տարածքները, 6) սանհիտարապաշտպանական գոտին, որն ընդգրկում է կանաչապատ կամ բաց տարածքները, 7) քաղաքի կենտրոն, 8) գիտակրթական, որ ներառում է կրթական

հաստատությունները, բուհերն ու գիտահետազոտական ինստիտուտները,

9) մերձքաղաքային գոտին:

Երևանն այսօր ունի 12 վարչական շրջան (Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն)՝ իրենց առանձին թաղամասերով, և զբաղեցնում է 223 քառ.կմ տարածք [92]:

Երևանի տարածության կառուցվածքային քաղադրիչներից են նաև քաղաքի ուղիները: Երևան քաղաքի փողոցների ցանցը կազմում են միջնադարյան քաղաքի (պահպանված հիմնականում Կոնդում), 19-րդ դարի քաղաքի (այսօր՝ որպես Երկրորդական փողոցներ շահագործվող), խորհրդային (որոնց նշանակությունը չի փոխվել) և հետխորհրդային քաղաքի (կենտրոնի կառուցվածքը պահպանվել է, բացառությամբ՝ Հյուսիսային պողոտա, և կենտրոնից դուրս նորակառուց արագընթաց մայրուղիներ, Սարալանջ, Մոնթե փողոցները) ուղիները:

Տարբեր ժամանակահատվածներում ձևավորված փողոցների համակարգերը պայմանավորված էին այդ շրջանի երթևեկության առանձնահատկություններով (գործառույթի գործոնը) և հասարակարգի սոցիալ-տնտեսական, քաղաքական մարտավարություններով, օրինակ, խորհրդային շրջանում՝ փողոցներ և պողոտաներ՝ նպատակատրված բավարարել արդի շրջանի (մոդեռն) երթևեկության պահանջները ինչպես նաև համապատասխան խորհրդային գաղափարախոսական սկզբունքներին՝ հանրային վայրեր երկար գրոսանքների համար, որտեղ գրոսանքը համատեղված էր երթևեկության հետ: Ժամանակակից Երևանում մեքենաների աճի և փողոցների ծանրաբեռնվածության պայմաններում շրջանցող և բեռնաթափող ուղիների կառուցումը անհրաժեշտություն է դարձել: Այդ հանգամանքով պայմանավորված են անկախության տարիներին Երևանում իրականացված ճանապարհաշինական մի շարք ծրագրեր:

Հանգույցներն առաջանում էին որոշակի գործոններով պայմանավորված: Անընդհատ պարագծային կառուցապատմամբ, ուղիների հատմամբ, ուղենշային, կողմնորոշող օբյեկտի առկայությամբ պայմանավորված էր հանգույցի

հատակագծային ձևը, մասշտաբայնությունը: Երևանում ուղիների փոխուղղահայաց ցանցով պայմանավորված և այդ հատկանիշի արդյունքում ձևավորված հրապարակի օրինակ է Սահմարովի հրապարակը: Դոմինանտող և ուղիներ ծնող հանգույցի օրինակ է Հանրապետության հրապարակը:

Ժամանակին Երևանում ուղիների համակարգից անկախ՝ տարածությունից տարածություն, հանգույցից հանգույց անցում էր ներկայացնում Ղանթարի հրապարակից անցումը դեպի այլ հրապարակներ:

### **Եզրակացություն առաջին գլխի վերաբերյալ**

1. Առանձնացվել են քաղաքի ճարտարապետական կերպարի հիմնական շերտերն (ձևային, իմաստային) ու դրանց բնութագրիչները (ընթեռնելիություն, կարգավորվածություն, առեղծվածայնություն, համալրվածություն), որոնք Երևանի ճարտարապետական կերպարի համալիր հետազոտության տեսական հիմքն են կազմում:
2. Բնական լանդշաֆտի տարրերը կարևոր են եղել քաղաքի հիմնադրման և քաղաքամասերի կայացման գործընթացում: Լանդշաֆտային դոմինանտներով (Արարատ) պայմանավորված՝ իրականացվել է քաղաքի կառուցապատումը:
3. Երևանի պատմական զարգացման ընթացքում քաղաքային տարածության կառուցվածքը փոփոխվել է յուրաքանչյուր փուլի համար քաղաքի գերիշխող (դոմինանտող) գործառույթի փոփոխությանը համապատասխան:
4. Պատմական զարգացման ընթացքում ձևավորվել է քաղաքի ճարտարապետական երկու կերպար՝ անվերահսկելի՝ չկարգավորված (մինչորուսական) և վերահսկելի (ռուսական, խորհրդային և հետխորհրդային):

## ԳԼՈՒԽ 2

### ՄԻՆՉԻՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԵՎԱՆՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՐԻՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 2.1. Մինչպարսկական շրջանի Երևանը:

##### 2.1.1. Մինչուրարդական (Վանի թագավորության, Արարավյան թագավորության) ժամանակաշրջան:

Երևանի ճարտարապետական կերպարը քաղաքի պատմական զարգացման ընթացքում ներկայացնելիս հիմնվել ենք գրավոր աղբյուրների, ժամանակակիցների պատկերավոր նկարագրությունների, ճարտարապետական ժառանգության քննության վրա: Հատուկ ուշադրության են արժանացել ճարտարապետական կերպարաստեղծ ֆիզիկական տարրերը:

Երևանը որպես քաղաք ձևավորվել է ուշ միջնադարում, սակայն որպես բնակավայր ունի հազարամյակների պատմություն: Քաղաքի տարածքում հայտնաբերվել են մի շարք հնավայրեր, որոնք Երևանի հաստատուն կերպարի կերտման գործում կարևոր դերակատարում ունեն:

Դժվար է լիարժեք ուսումնասիրել հնագույն պատմություն ունեցող քաղաքները. դրանցից մեկն էլ Երևանն է, որի պատմությունն (ի մասնավորի՝ նաև ճարտարապետության պատմությունը) ու զարգացումն ընթացել են հայ ժողովորի պատմական զարգացումներին զուգընթաց: Երևանի՝ որպես բնակավայրի պատմությունը գալիս է հնագույն ժամանակներից: Ժամանակակից քաղաքի տարածքում գտնվող և նրա կերպարային ընկալման ամբողջականությունն ապահովող հնավայրերը վերաբերում են դեռևս քարայրաբնակության շրջանին [13, էջ 82]:

Քաղաքը ներկայանում է որպես մի քանի հնավայրերի ամբողջություն: Երևանը քաղաքի հնագույն բնակավայրերից մեզ հայտնի է Վերին Շենգավիթի տեղում (այժմ Երևանի թաղերից մեկը) հայտնաբերված քարի-պղնձի դարի (Էնեոլիթյան) շենամրոցը, որը տեղական շինարարական արվեստի արդյունք է և մարդու շինարարական գործունեության ամենահին նմուշներից մեկը: Շենգավիթը գտնվում է

Երևանի հարավարևմտյան մասում՝ Հրազդան գետի ձախ ափին: Բնակավայրն ընդգրկում է շուրջ 6 հա տարածք՝ պարփակված անմշակ քարերից կառուցված, աշտարակավոր, որմնահեց ելուստներ ունեցող կիկլոպյան պարսպապատով: Բնակավայրի կառուցապատումն անկանոն է՝ ծուռումուռ նրբանցքներով, բնակելի և տնտեսական կլոր (թաղածածկ) և քառանկյուն (հարթ ծածկ) հատակածն ունեցող կացարաններով: Վերջին տարիների ընթացքում այստեղ կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել է հնագիտական երեք շերտ, որոնցից ամեն մեկում պահպանվել են շրջանաձև հատակագծով բնակելի տներ, իսկ վերևի շերտում կլոր տներին կից՝ նաև օժանդակ սենյակներ: Այդ տները կառուցված են միջին հաշվով մոտավորապես յոթ մետր տրամագիծ ունեցող շատ կանոնավոր շրջագծի հիմքի վրա: Հորինվածքի դոմինանտը հատակագծում կլոր՝ պաշտամունքային նշանակության կացարանն է, որի շուրջը խմբված են մյուսները: Շինությունների ստորին շարքերը շարված են գետաքարերով, վերինները՝ հում աղյուսով [16, էջ 9-10]: Մեծ խնամքով ու վարպետությամբ պատրաստված հում աղյուսի պատերը բարձրացված են քարի հիմքերի վրա: Վարպետությամբ է կատարված նաև պատերի ծեփվածքը, որը ներսից ներկված է վառ կապույտ գույնով: Հավանաբար տան ծածկը պահպում է մեկ կենտրոնական սյունով՝ արտաքուստ կոնաձև: Տան կավե օջախը ունեցել է կլոր հիմքի վրա բարձրացող եզր ու ներքին բաժանումներ՝ վերևից ծածկված երկրաչափական զարդաքանդակներով: Շենգավիթի երեք հնագիտական շերտին պատկանող այդ տները վկայում են ճարտարապետական ձևերի զարգացման հաջորդականության մասին: Տվյալ զարգացման համար բնորոշ է այստեղ նկատված բազմաենյակ բնակելի տան ստեղծման առաջին փորձը, ինչպես նաև քառանկյունի հատակագծերով ներքին տարածությունների առաջացումը: Շենգավիթում հայտնաբերվել են մի շարք բնակարանային համալիրներ, պարսպապատի մի զգալի հատված, տոհմական գերեզմանոց, ջրի համար կառուցած գաղտնի ճանապարհ և այլն: Մասնագետների կարծիքով Շենգավիթի էնեղիթյան բնակավայր-ամրոցն անընդմեջ գոյություն է ունեցել շուրջ 2000 տարի՝ մ.թ.ա. 4-րդ հազարամյակի երկրորդ կեսից մինչև 2-րդ հազարամյակի առաջին կեսը: Այսպիսով, Շենգավիթի էնեղիթյան

բնակավայրը գոյություն է ունեցել մեզանից ավելի քան 6000 տարի առաջ: Այստեղ հայտնաբերված մարդաբանական նյութերը ցույց են տալիս, որ Շենգավիթի բնակիչները իրենց մարդաբանական տիպով շատ կողմերով հիշեցնում են այժմյան հայերին [30, էջ 171-182]: Շենգավիթից հետո Երևանի գրաված շրջանում կյանքը չի ընդհատվել: Այստեղ Շենգավիթի ամրոց-բնակավայրին հաջորդել են Ծիծեռնակաբերդի, Բերդաձորի, Արին բերդի և Կարմիր-բլուրի բրոնզեդարյան բնակավայրերը, որոնց արդեն փոխարինել են ուրարտական ժամանակաշրջանի Էրեբունի և Թեյշեբախինի բերդաքաղաքները (հավելված 10):

### **2.1.2. Վանի թագավորության ժամանակաշրջան**

Էրեբունի-Երևանի գրաված տարածքն այժմ ամբողջովին մտնում է Երևան քաղաքի շրջագծի մեջ և կազմել է մոտ 50 հա: Այն այսօր գրաված տարածքով համապատասխանում է մեր օրերի Երևանի Նոր Արեգ և Վարդաշեն թաղամասերին:

Էրեբունի-Երևանը Արարատյան թագավորության (ուրարտական, բիայնական, վան-տոսպյան, Վանի թագավորության) Էրեբունի ամրոց-քաղաքից սերված լինելու հանգամանքն այսօր ապացուցված է գիտականորեն [5, էջ 86]: Հնագիտական և լեզվահնչյունաբանական տվյալների վրա հենվելով՝ մասնագետները գտնում են, որ Երևան քաղաքի անունը նույնպես ծագում է արծանագրություններում հիշատակված՝ ուրարտական Իրբունի (այժմյան ընթերցմամբ՝ Էրեբունի) անունից [13, էջ 107]: Էրեբունին դարեր շարունակ գոյություն է ունեցել, և նրա ընդգրկած տարածությունն էլ ամփոփվել է ժամանակակից Երևանի գրաված շրջանի մեջ: Ժամանակի ընթացքում բերդաքաղաքը տեղափոխվել է հյուսիս-արևմուտք՝ իր մեջ ընդգրկելով սկզբնական կորիզը [55, էջ 13]: Էրեբունին Արարատյան թագավորության ժամանակաշրջանի ամենախոշոր բերդաքաղաքներից էր: Հին Արևելքի մյուս քաղաքների նման այն երկմաս էր՝ բաղկացած միջնաբերդից և նրա շուրջը տարածվող քաղաքից: Միջնաբերդը ճարտարապետական ինքնուրույն համալիր է՝ պալատով, տաճարներով, բնակելի և տնտեսական կառույցներով, գորանոցներով և պարիսպներով: Այն գբաղեցրել է 3 հեկտար տարածություն [55, էջ 15-16]: Ուրարտական միջնաբերդերն

իրենց տարածական հորինվածքով դասակարգվում են ըստ մի քանի խմբի: Առաջինը դրանցից միասնական ծավալի ձևով կառուցապատվածներն են: Էրեբունու միջնաբերդն այդպիսին է [15, էջ 143]:

Միջնաբերդը Արին-բերդ բլրի գագաթին է և հարթավայրի նկատմամբ ունի 65մ բարձրություն: Ամբողջ կառուցվածքը հարմարեցված է պաշտպանական նպատակներին և մեծ վարպետությամբ հաշվի է առնված տեղանքի ռելիեֆի բնույթը: Ինքնատիպ է միջնաբերդի կառուցների գեղագիտությունը: Այստեղ ստեղծված է ներդաշնակ ընդհանրություն ճարտարապետական հակադիր ձևերի (հոծ աշտարակներ, պալատական խոլ ճակատներ, ծանր որմնահեցեր) և վերասլաց շարժումով օժտված տաճարի շքամուտքի նրբագեղ այուների միջև: Սյուները ստեղծում են դինամիկ շարժում՝ հրապարակի ողջ ճարտարապետությանը հաղորդելով լարված ոիթմի արտահայտություն: Ճարտարապետական այդ տարածքի գեղագիտական ընկալման նպատակով միջնաբերդի բոլոր հնարավոր տեսադրաժտերում ստեղծված էր գունեղ տարածական ֆոն (Երբեմն որմնանկարների բարդ հորինվածքներով), որը տաճարային հրապարակին հաղորդում էր հանդիսավորություն: Հակադրված մասշտաբներն իրենց մանրամասներով խոսում են կառուցող վարպետների բարձր ճաշակի ու կատարողական վարպետության մասին [55, էջ 18-22]: Իր այդ դիրքի շնորհիվ միջնաբերդը թե՛ ժամանակին և թե՛ այսօր մեծ տպավորություն է թողնում դիտողի վրա և տարածքային դոմինանտ է: Հատակագծում միջնաբերդը եռանկյունաձև է, որը կրկնում է տեղանքի եզրագծի ձևը: Այն կառուցապատված է ազատ սկզբունքով՝ որոշակի գոտիավորմամբ: Բակի շուրջը խմբված էին տարբեր նշանակության կառուցներ: Հյուսիսարևմտյան մասը ամենաշքեղն ու հանդիսավորն է՝ կառուցապատված աշխարհիկ (պալատ) պաշտամունքային (Սուսի և Խալդի տաճարներ) շենքերով: Պալատն ուղղված է դեպի Արագածի և Արարատի վեհաշուք գագաթներին: Լանդշաֆտային այս դոմինանտները Երևանի համայնապատկերի և ճարտարապետական պատմական կերպարի կերտման գործընթացում հաստատուն գործոններ են: Հենց այս մասում են հայտնաբերվել Արին-բերդի 8 արձանագրություններից 6-ը [55, էջ 18]: Միջնաբերդի

հյուսիսարևելյան և մասամբ նաև՝ հարավային կողմում տեղադրված են տնտեսական գործառություններ իրականացնող շինություններ (հացահատիկի պահեստներ, կարասային սենյակներ): Հյուսիսարևմտյան մասում բնակելի թաղն էր՝ կառուցապատված միահարկ տներով: Տանիքները հարթ են եղել, հողածածկ, լուսի և օդափոխության համար թողնված բացվածքներով՝ երդիկներով: Պատերը ներսից ծեփվել են կավով և ներկվել գլխավորապես կապույտ գույնով: Միջնաբերդի հորինվածքում քաղաքացիական-պալատական կառուցները միահյուսված են պաշտամունքային շինությունների հետ: Պեղումների շնորհիվ հայտնաբերվել է երկու տաճար՝ Խալդ աստծուն նվիրված տաճարը և Սուսի տաճարը՝ նվիրված Խոթշա աստծոն: Խալդի տաճարի համալիրը քաղկացած էր ուղղանկյունաձև մի դահլիճից (8x37 մ չափերով), հարակից երկու շինություններից, որոնցից վերջինի միջոցով կապ էր պահպանվում համալիրի աշտարակի հետ [45, էջ 66]: Սուսի տաճարը հատակագծում ուղղանկյունաձև է (արտաքին՝ 10x13,45 մ չափերով) և հավանաբար սպասարկել է միայն բերդում ապրողներին:

Այսպիսով, Էրեբունու միջնաբերդում վավերացվում են առանձին կանգնած կառուցների համալիրային միասնություն ստանալու և ճարտարապետական ձևերին արտահայտչականություն հաղորդելու նախնական փորձերը:

Էրեբունու բուն քաղաքը, որը փոփած էր միջնաբերդի շուրջը և որտեղ ապրում էին բնակչության և զորքի մեծ մասը, ճարտարապետական առումով հայտնի չէ, քանի որ չի պեղվել և տարածքի մեծ մասն էլ ժամանակակից Երևանի Նոր Արեգ և Վարդաշեն թաղամասերի տակ է մնացել:

Էրեբունիում որպես շինանյութ օգտագործվել են քարը (տուֆ, բազալտ), փայտը, կավը, մետաղն ու եղեգը [15, էջ 190]: Կավից պատրաստել են նաև հում և թրծված աղյուսներ, որոնք լայնորեն օգտագործվել են շինարարության մեջ: Հենց շինանյութի օգտագործման առումով կարելի է Էրեբունու կերպարային ընկալումը դիտել որպես կավի ճարտարապետություն (բացառությամբ մոնումենտալ ճարտարապետության՝ տաճարներ, դահլիճներ, պարիսպների հիմքեր, որտեղ շինանյութը քարն էր):

Էրեբունու ճարտարապետությունը, առնչվելով Մերձավոր Արևելքի բերդ-ամրոցների ճարտարապետության հետ, նաև ինքնատիպ է և իր ավանդն է ներդրել Երևանի՝ հետագա ժամանակաշրջաններում ճարտարապետական կերպարի ծևավորման գործում:

Վանի թագավորության ժամանակաշրջանին վերաբերող և Էրեբունի-Երևանի համար օժանդակ ամրոց ծառայող մյուս բնակավայրը Թեյշեբահնին է: Այն նույնպես ժամանակակից Երևանի տարածքում է՝ Հրազդան գետի ձախ ափին՝ Կարմիր բլուրի վրա և նրա շրջակայքում (այսօր՝ Զարբախ թաղամասում): Միջնաբերդը գբաղեցնում էր 4 հեկտար տարածություն և գտնվում էր քաղաքի արևելյան մասում: Քաղաքի ընդգրկած տարածքը միջնաբերդի հետ միասին 40 հեկտար էր [56, էջ 17]: Միջնաբերդում հնագիտական պեղումների շնորհիվ բացված շինությունների մեծ մասի բնույթը (շտեմարաններ, պահեստներ, մառաններ, արտադրական զանազան նպատակների ծառայող սենյակներ) հուշում է, որ քաղաքը գլխավորապես տնտեսական ուղղվածություն է ունեցել: Մինչդեռ Էրեբունին վարչական կենտրոն էր: Քաղաքն ունեցել է փողոցներ, որոնց երկու կողմում կանոնական դասավորված են եղել բնակելի տներն ու հրապարակները [54, էջ 14-15]:

Վանի թագավորության ժամանակաշրջանի Երևանի ճարտարապետության մեջ լայնորեն կիրառվել է արվեստների սինթեզը: Կառույցների պատերին հայտնաբերվել են որմնանկարների պատառիկներ: Պեղումներից գտնված բազմաթիվ բարձրաքանդակներն էլ խոսում են քանդակի օգտագործման մասին:

Վանի թագավորության անկումից հետո էլ Էրեբունի-Երևանը շարունակում է գոյություն ունենալ որպես ռազմավարական, տնտեսական ու վարչական նշանակություն ունեցող քաղաք: Այն նորից երկմաս էր՝ միջնաբերդը և նրա շուրջը տարածվող քաղաքը: Աքեմենյանների օրոք միջնաբերդում կատարվում են կառուցումներ և վերակառուցումներ: Նախորդ շրջանում հատակագծային հորինվածքի կենտրոնը հանդիսացող հրապարակն ամբողջովին կառուցապատվում է՝ վերածվելով սյունազարդ դահլիճի (ապադանա): Եթե ուրարտական ժամանակաշրջանում միջնաբերդի ճարտարապետական համալիրի հատակագծային

դոմինանտը պաշտամունքային կառուցն էր՝ տաճարը, ապա աքեմենյանների ժամանակ դրան փոխարինում է աշխարհիկ շինությունը՝ ապադանան: Բուն քաղաքի այս շրջանի կառուցները ոչնչով չեն տարբերվում Վանի թագավորության ժամանակաշրջանի բնակելի շինություններից և պահպանել էին ճարտարապետական ձևի առանձնահատկությունները: Էրեբունին սկսել են Երևան կոչել մ.թ.ա. 5-4-րդ դարերում, երբ հայկական ցեղերի հիման վրա կազմավորվում էր հայ ժողովուրդը՝ ստեղծելով իր պետականությունը [13, էջ 181] (հավելված 11):

### **2.1.3. Անդիկ և միջնադարյան ժամանակաշրջան**

Անտիկ և վաղ միջնադարյան ժամանակաշրջանում Երևանը Էրեբունիից՝ քաղաքի հարավարևելյան ծայրամասից տարածվում էր դեպի վերջինիս կենտրոնական հատված, և բավական փոփած քաղաք էր: Այն միջնադարյան Հայաստանի Կոտայք գավառի կենտրոնն էր և ուներ գյուղաքաղաքի կարգավիճակ: Ճարտարապետական նշանավոր կառուցք այս շրջանի Պողոս - Պետրոս եկեղեցին էր, որ գտնվում էր ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնի տեղում և քաղաքի վերակառուցման՝ խորհրդային ժամանակ քանդվել է: Այն եռանավ խոշոր բազիլիկա էր՝ հիմնադրված 5-րդ դարում, ենթարկվել է վերանորոգումների և վերականգնումների 7 և 12-րդ դարերում: Հիմնովին վերանորոգվել է 19-րդ դարում: Ճարտարապետական առումով անպաճույն, բայց և բավական տարողունակ կառուց է եղել և քաղաքի համար կարևորագույն նշանակություն է ունեցել՝ քրիստոնեական արարողակարգ իրականացնելու և կերպարի հաստատման համար [21, էջ 35]:

Զարգացած միջնադարում՝ 9-14-րդ դարերում, ավատատիրական կարգերի զարգացմամբ ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ՝ տնտեսական, առևտրական հարաբերությունների աճի ու աշխուժացման պայմաններում, միջնադարյան Հայաստանի շատ բերդերի և գյուղաքաղաքների նման Երևանն էլ է վերածվում քաղաքի: Այն իր կառուցվածքով տիպական միջնադարյան, մասնավորապես արևելյան էր: Ուներ միջնաբերդ, անկանոն կառուցապատված շահաստան և արվարձաններ: Ալիշանն ու նրան հետևելով Երվանդ Շահագիզը՝

Երևանի այդ ժամանակվա միջնաբերդը նույնացնում են Ծիծեռնակաբերդի հետ [3, էջ 311], [23, էջ 177]: Հետագայում թուրք-իրանական (պարսկական) տիրապետության շրջանում՝ նոր պայմաններին համապատասխան՝ 16-րդ դարի վերջերին կառուցվում է նոր բերդ՝ Հրազդանի ձախ ափին, որը 1676թ. երկրաշարժից հետո հիմնովին վերակառուցվելուց և մի շարք նորոգումներից հետո իր գոյությունը պահպանել է մինչև նորագույն ժամանակներ: Թուրք-պարսկական տիրապետության ամբողջ շրջանում Երևանի բերդը պարսկական խաների և թուրքական փաշաների նստավայրն է եղել: Ներքին կառուցապատումն իրականացված էր խանի ապարանքների, մզկիթների, բաղնիքների, խանի հարեմի, բնակելի բազմաթիվ տների, մթերային պահեստների, գինանոցների, զորանոցների շենքերով (հավելված 12):

## 2.2. Պարսկական շրջան. Քաղաքի կառուցվածքն ու հուշարձանները

Պատմագրության մեջ Երևան քաղաքի ուշ միջնադարյան արտաքին տեսքի նկարագրությունները (որոնք ել պատկերացում են տալիս քաղաքի ճարտարապետական կերպարի մասին) հիմնականում սկսվում են 17-րդ դարի երկրորդ կեսից: Դրա համակողմանի առաջին նկարագրողը Շարդենն է, ով Երևանում եղել է մեծ երկրաշարժից առաջ՝ 1673 թվականին: Շարդենի վկայությունները քաղաքի կառուցվածքի և արտաքին տեսքի մասին իրենց ընդգրկումով, մանրամասնությամբ ու արժանահավատությամբ կարելի է ասել եզակի են: Նա ներկայացնում է քաղաքն ընդհանրապես՝ մանրամասն տեղեկություններ հաղորդելով բերդի, քաղաքամասերի, հրապարակների, քարավանատների, եկեղեցիների ու մզկիթների, տների կառուցվածքի, գլխավոր շուկայի և այլ շինությունների մասին: Տեքստային նկարագրություններից բացի, գրքում զետեղված է նաև այս ժամանակաշրջանի Երևանի գլխավոր հատակագիծը [61, էջ 241-243]: Տավերնիեի թողած հատակագծից երևում է, որ քաղաքն այդ ժամանակ տարածվում էր Հրազդանի ձորում և նրա ձախակողմյան ժայռոտ ափերին գտնվող Զորագյուղից հյուսիս ու մասամբ՝ հյուսիս-արևելք, դեպի Կոնդ և Շահար [23, էջ 122-123]:

Պարսկական շրջանի Երևանն ուներ եռամաս կառուցվածք՝ բերդը, բուն քաղաքը, արվարձանները: Բուն քաղաքը ձեռք է բերում ենթակառուցվածքներ՝ բաժանվելով Երեք բնակելի թաղամասերի (Շահար, Թափաբաշ, Դամիրբոլաղ) ու հարակից տարածքների, որոնք սեզոնային բնակեցում ունեին: Ի տարբերություն միջնադարյան Հայաստանի այլ քաղաքների (Անի, Կարս, Լոռէ, Վան, Կարին և այլն), Երևանի Բուն քաղաքը կամ Շահաստանը պաշտպանական ամրակառուցներ՝ քաղաքապարիսպներ չուներ: Բերդի կառուցումը վերագրվում է թուրք Ֆահրադ փաշային՝ 1583 թ.: Պատմական հավաստի տեղեկությունները ցուցում են, որ նա ընդամենը վերակառուցել է բերդը, ոչ թե՝ կառուցել: Բերդը, որի սահմանները հասնում էին հյուսիսից քաղաքապետարանին հարող տարածքին, հարավից՝ նախկին տրամվայի պարկին, արևելքից՝ Արշակունյաց և Գրիգոր Լուսավորիչ պողոտաներին, արևմուտքից՝ Հրազդանի կիրճին, գտնվել է քաղաքի հարավարևմտյան հատվածում՝ Հրազդանի կիրճի հարևանությամբ, գետից արևելք ընկած բարձունքի վրա և զբաղեցրել է 30,0 հա տարածք: Ունեցել է ձվածն տեսք: Արևմտյան կողմից պաշտպանված էր Հրազդանի՝ մոտ 32 մ խորություն ունեցող ձորով և բնականորեն անմատչելի և անառիկ էր: Այդ հանգամանքով պայմանավորված՝ արհեստական ամրությունները կառուցվել են մնացած՝ խոցելի կողմերում: Երեք կողմից շրջապատված էր 10,5-12 մետր բարձրությամբ Երկշար ատամնածն վերջավորությամբ պարիսպներով, որոնք շարված էին հում աղյուսից կամ հասարակ հողից: Պարիսպները, որոնցից առաջինը կառուցվել է 1583 թ. Ֆահրադ փաշայի կողմից, իսկ Երկրորդը՝ 1603 թ. Շահ-Աբասի՝ Նախիջևանի ու Երևանի վրա հարձակվելուց առաջ, գտնվել են միմյանցից մոտ 42 մ հեռավորության վրա և միասին ունեցել են 50-60 աշտարակ և բուրգ: Երկրորդ պարիսպն ունեցել է 350 մ Երկարություն: Կառուցվել է մոտ մեկ ամսվա ընթացքում՝ զինվորների օգնությամբ: Փաշայի հրամանով կառուցման համար օգտագործվել են հայկական գերեզմանաքարերն ու Եկեղեցիների քարերը: Պարիսպների շուրջը փորված է եղել խանդակ, որը վտանգի ու հարձակումների ենթակա պահերին լցվել է ջրով: Բերդը Երեք բավականին մեծ ու հաստ դարպասներ է ունեցել՝ Թավրիզյան, Շիրվանյան և Կամրջի [16, էջ 466]:

Վերջինը բացվում էր հյուսիսարևելյան պարսպապատի մեջ՝ դեպի այն ճանապարհը, որը Հրազդանի Մեծ կամրջի վրայով անցնում էր գետի մյուս ափը: Կար նաև բերդից դեպի կիրճն իջնող ստորգետնյա գաղտնութի: Ըստ քաղաքի 1856 թ. գլխավոր հատակագծի՝ հյուսիսային դարպասից սկիզբ է առել Աստաֆյան (1920-ից՝ Աբովյան) փողոցը:

Բերդի մեջ կառուցված են եղել խանի ապարանքը՝ բաղկացած պալատից և հարեմից, երկու մզկիթ, խանական բաղնիքը, զորանոցներ, պահեստներ, զինանոցներ, կրպակներ, խանութներ, բնակելի տներ և այլ շինություններ: Կառուցապատումն անկանոն էր՝ առանց որոշակի հատակագծման, նեղ անցքեր հիշեցնող նեղլիկ, ծուռումուռ փողոցները անկանոն դասավորված շենքերի քառում կազմել են մի բարդ լաբիրինթոս: Այդ շինությունների մի մասը ծառայել է բերդի կարիքներին, իսկ մի մասն էլ բնակարաններ են եղել, որոնց մեջ ապաստանել են պաշարումների ժամանակ բերդում հավաքված քաղաքացիները: Շարդենի վկայությամբ մեծ երկրաշարժից առաջ մշտական բնակության միայն 800 տուն է եղել, որոնք բոլորն էլ պատկանել են պարսիկներին: Հայերն այստեղ միայն խանութներ ու արհեստանոցներ են ունեցել, որոնցում նրանք ցերեկն աշխատել կամ առևտուր են արել, բայց գիշերները փակել և գնացել են քաղաք՝ իրենց տները [61, էջ 241-243]: Հետագայում, սակայն, սարդարները, ըստ Երևոյթին խոռվություններից խուսափելու նպատակով, բերդն ամբողջությամբ վերցրել են իրենց ձեռքը՝ այնտեղից դուրս քշելով նաև պարսիկ բնակիչներին: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբներին բերդում մշտաբնակ քաղաքացիներ չեն եղել, այն ամբողջությամբ գտնվել է հարեմի ու կայազորի տրամադրության տակ:

Խանի (սարդարի) ապարանքը գտնվում էր բերդի հյուսիսարևմտյան կողմում: Հատակագծում քառանկյունաձև այս շինությունը ընդարձակ էր և մասնատված տարբեր գործառություններ իրականացնող սենյակների: Կառուցված էր պարսկական ճարտարապետական ոճով: Այն բազմիցս քանդվել և վերակառուցվել է: Վերջին պալատը կառուցվել է 1798 թ. Մահմուդ խանի օրոք [24, էջ 298]: Հայտնի էր ապարանքի հայելապատ դահլիճը՝ (Շուշաբանդ-այվանը), որտեղ Երևանի սարդարը

սովորություն է ունեցել անցկացնելու իր ազատ ժամանակը: Հայելապատ է կոչվել, որովհետև շինության քիվերն ու պատուհանների պրոֆիլավորված կամարակապ պսակները պատված են եղել գույնզգույն հայելիներով, որոնք տարբեր հարթությունների վրա անդրադարձնելով լուսը՝ առաջացրել են գույների հրաշալի խաղ: Ունեցել է հարուստ ծևավորված ներքնատեսք: Առաստաղը զարդարված է եղել վառվոուն ծաղիկների՝ հատկապես վարդի ու հիրիկի նկարներով, իսկ դահլիճի պատերին փակցված է եղել կտավի վրա նկարված ութ պատկեր՝ վերջին սարդար Հուսեյն-Ղուլի խանի, Ֆաթ-Ալի շահի և այլոց նկարները [11, էջ 241]: Ապարանքի երկրորդ մասը զբաղեցնում էր տիկնանց պալատը՝ հարեմը: Այն շատ ընդարձակ էր՝ բաժանված բազմաթիվ կրկնահարկ և եռահարկ սենյակների ու միջանցքների: Առավել շքեղ ներքնատեսք է ունեցել բաղնիքը: Այն մարմարապատ էր՝ գույնզգույն նախշերով զարդարված: Բաղնիքին կից կառուցված է եղել ջրավազան՝ ամառվա շոգերին լողանալու համար: Քաղաքը ոռւսների ձեռքն անցնելուց հետո պալատը վերանորոգվել է և վերածվել հիվանդանոցի:

Խանի ապարանքից հետո իրենց ճարտարապետությամբ Երևանում աչքի են ընկել երկու մզկիթները (այդ ժամանակ Երևանում եղել է 8 մզկիթ, որոնցից երկուը գտնվել են բերդում): Սրանցից մեկը չորս սյուների վրա հենված կամարակապ մի մեծ շինություն է եղել՝ բավական շքեղ արտաքին տեսքով: Ռուսական տիրապետության ժամանակ այն վերածվել է եկեղեցու («Եկեղեցի Հովանավորության Տիրամոր Կույսին»՝ Սբ. Պոկրով, որը 20-րդ դարի սկզբներին քանդվել է և Երևանի կենտրոնում ներկայիս Շահումյանի հրապարակի տեղում, կառուցվել է ավելի մեծաչափ ռուսական Նիկոլաևյան եկեղեցին): Մյուս մզկիթը պարսկական է եղել և կառուցվել է Երևանի վերջին սարդար Հուսեին-Խանի և պարսից Ֆաթ-Ալի շահի օրոք՝ թագաժառանգի անունով կոչվել է Աբաս-Միրզայի մզկիթ (Աբաս-Միրզա-Զամի): Վերջինիս ճակատի ու գմբեթի արտաքին կողմն ամբողջապես պատած է եղել կանաչ ու կապույտ փոքրիկ քառակուսի հախճապակիներով, որոնց գործածությունն այնքան հատուկ էր արաբական ու պարսկական ճարտարապետությանը [11, էջ 242-243]:

Միջնադարյան Երևանի կարևոր ինժեներական կառուցվածքներից է Կարմիր կամ Խոջա-Փլավի կամուրջը, որը գտնվել է բերդի հյուսիսարևմտյան անկյան մոտ, հենց սարդարների ապարանքի տակ: «Կարմիր» է կոչվում, քանի որ կառուցված է կարմիր տուֆից, սակայն հայտնի է նաև քանաքեռցի մեծահարուստ «Խոջա-Փլավի» անունով, ում միջոցներով վերանորոգվել է 1679 թ. Երևաշարժից հետո (վերանորոգվել է նաև 1851 թ.): Այն քառաչքանի է՝ մոտ 80 մ երկարությամբ և 11 մ բարձրությամբ: Մինչև «Հաղթանակ» կամրջի կառուցումը՝ քաղաքը Հրազդանի աջ ափի հետ կապող հիմնական ուղին էր, որը տանում էր դեպի Էջմիածին [18, էջ 122]:

Բերդում եղել է նաև մի փոքրիկ շուկա՝ շրջապատված փոքրիկ կրպակներով: Բերդը քաղաքից բաժանված է եղել մեծ շուկա-հրապարակով: Շուկայական հրապարակն ընկած էր Կոնդի և Շահարի միջև: Հրապարակի սեղանակերպ պարագնով տեղավորված էին խանութների և արհեստանոցների երկար շարքեր, ինչպես նաև քարավանատներ (թվով յոթն են եղել, սրանցից ամենանշանավորը Գյուղի քարավանատունն էր (քարվանսարան) [16, էջ 466]):

Երևանում գործել է չորս շուկա, որոնցից գլխավորը Ղանթարն էր: Այս շուկայում է եղել Երևան քաղաքի ամենամեծ կշեռքը՝ ղանթարը, որը պատկանում էր քաղաքի վարչությանը: Շուկան գտնվում էր ներկայիս Կիրովի անվան մանկական զբոսայգու տեղում՝ Կապուտ մզկիթի հարևանությամբ: Հետագայում Ղանթարի գտնված վայրում կառուցվեց ծածկած շուկան, ժողովուրդը այդ շուկային նույնպես Ղանթար կոչեց՝ իսկ Երբեմն էլ՝ «Ղանթարի տակ»:

**Բուն քաղաքը** բաժանված էր երեք գլխավոր թաղամասերի (մահլաներ), որոնք միացած էին իրար և կազմում էին կառուցապատված մի ընդարձակ տարածություն՝ որի զգալի մասը ամփոփված էր Զանգու և նրա ծախսակողմյան վտակ Կըրիսբուլաղ գետերի միջև: Այդ թաղամասերն էին Հին թաղը (Շահար), Կոնդը (Թափաբաշ) և Երկաթաղբյուրը կամ Քարհանքը (Ղամիրբուլաղ):

**Հին թաղը** (Շահար) կամ Արարատյան թաղը Երևանի ամենամեծ թաղն էր: Դա այսօր քաղաքի, «Մոսկվա» կինոթատրոնն ու նրա շրջակայքն ընդգրկող տարածքն է: Հայտնի էր նաև որպես Բուն քաղաք: Երևանը երկար ժամանակ

պարսկական տիրապետության տակ մնալով, նրա կենտրոնը՝ Բուն քաղաքը պարսկերեն Շահար կոչեցին: Միջնադարյան այլ քաղաքներում էլ գործարար մասերը մյուսներից տարբերելու համար անվանվում էին «քաղաք»: Ժամանակի ընթացքում Երևանում «շահար»հասկացությունը դադարեց ընկալվել քաղաքի կենտրոնի իմաստով՝ քաղաքատարածքների ընդարձակման, գոտիավորման և գործառույթների փոփոխման պատճառով:

**Կոնդը** (Թափաբաշը զբաղեցնում էր քաղաքի արևմտյան մասը՝ Զանգու գետի և Շահարի միջև ընկած բարձրադիր տարածությունը՝ Կոզեռն կոչված բլուրին հարակից: Այդ անվանումը նրան տրվել է բարձր դիրքի պատճառով: Կոնդ բառը հայերենում նշանակում է երկայնաձիգ, կամ բոլորակ բլուր: «Թափաբաշ» անվանումը այս շրջանում է տրվել թաղին, որը Կոնդ բառի համարժեքն է: Կոնդը Երևանի ամենահին և հայաբնակ թաղամասերից մեկն ու միաժամանակ քաղաքի պատմական կորիզն է: Դա Երևանի ամենակենսունակ հատվածն է և գոյություն է ունեցել քաղաքի պատմության բոլոր ժամանակներում (600 տարուց ոչ պակաս): Ըստ պատմաբան, ազգագրագետ Իվան Շոպենի՝ Կոնդի սահմանները հին Երևանի հատակագծում ավելի ընդարձակ են եղել: Նրա տարածքում են եղել Զորագյուղը (Դարա-Քյանդ), Հրազդանի ձորի այգիները և Դալման: Մյուս կողմից Կոնդի սահմանները հասնում էին մինչև Բերդ: Զորագյուղը Հրազդան գետի ձախակինյա մասում էր, այն ձորափեշերը, որոնք ընկած են Հաղթանակի կամրջից դեպի վեր: Այն նույնպես ունեցել է իր ստորաբաժանումները, ինչպես՝ Վերին կամ Քարափի թաղ, Ստորին կամ Զորի թաղ և Կարբո թաղ [62, էջ 464-468]:

Կոնդում պահպանված շինություններից աչքի է ընկնում ս. Հովհաննես Մկրտիչ Եկեղեցին, որը շատ հին հուշարձան է, ավերվել է 1679 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ, բայց 1710 թվականին վերականգնվել է: Բնական լանդշաֆտի շնորհիվ թաղամասի առանձնացվածությունը լուծում էր կողմնորոշման խնդիրները: Բարձունքի նեղ, կորագիծ, լանդշաֆտի հետ համահունչ փողոցների ցանցը բարձրացնում էր տարածքի գեղագիտական արժեքը: Կոնդում, ի տարբերություն կենտրոնական թաղամասերում, կառուցապատման կերպարի/ բնույթի ընդգծումը

բարձունքի ուղուցիկությամբ հանգեցրել էր գեղարվեստական անկանոն շառավղային շրջանային համակարգի- կառուցվածքի:

**Քարիանքի թաղը** (Դամըո-Բուլաղ) տարածվում էր քաղաքի հարավարևելյան մասում: Անվանումը ինքը ցոյց է տալիս, որ այստեղ եղել է քաղաքի քարի հանքը: Ինչպես շատ թաղերի անունները, այնպես էլ Քարիանքի թաղի անվանումը պարսկական շրջանում փոխվեց ու վերանվանվեց «Դամըո-Բուլաղ», որը բառացի նշանակում է «Երկաթ-աղբյուր»: Այդպես է կոչվել հատկապես քաղաքի այդ մասում եղած աղբյուրի՝ ջրերի՝ երկաթի բաղադրություն պարունակելու պատճառով: Դամըո-Բուլաղը հայտնի էր իր այգիներով [62, էջ 464]:

Այգիներով շրջապատված է եղել ամբողջ Երևանն ընդհանրապես: Դրանք գտնվելով այս կամ այն թաղի մոտ՝ կոչվել են վերջիններիս անուններով: Ինչպես օրինակ Կոնդի, Դալմայի, Դամըո-Բուլաղի այգիներ, Սարդարի բաղ և այլն: Այգիների գոյությունը պայմանավորված էր բնական բարենպաստ պայմաններով՝ ջերմություն, հող և ջուր:

Երևանի՝ առևտրական ճանապարհների խաչմերուկում գտնվելու հանգամանքով էր պայմանավորված քաղաքում քարավանատների առկայությունը: Այստեղով էին անցնում բազմատեսակ ապրանքներով բեռնված ուղտերի քարավանները, որոնց համար քաղաքում բազմաթիվ իջևանատներ էին կառուցվել: Քարավանատերերը գիշերում էին քաղաքի ծայրամասերում: Երևանի այդ հատվածը գտնվում էր ներկայիս Սարի թաղի և Նար-Դոսի փողոցի մերձակա բարձրադիր տարածքում: Քարավանատներից ամենահայտնին գտնվում էր խանի պալատի մոտ: Այն, ինչպես նկարագրում է Շարդենը, քառակուսի կառուց էր՝ կազմված 3 խոշոր և 60 մանր սենյակներից՝ ընդարձակ գոմերով և մանր խանութներով հանդերձ [62, էջ 243] :

Այս շրջանում քաղաքի ճարտարապետական կոթողներից նշանավոր էին եկեղեցիները, մզկիթներն ու կամուրջները: Երևանում կար 6 եկեղեցի և 8 մզկիթ, որոնցից երկուսը գտնվում էին բերդում, իսկ 6-ը՝ քաղաքում: Հին թաղում էր գտնվում քաղաքի եկեղեցիների մեծ մասը [11, էջ 253]:

Ամենահայտնի մզկիթը Գյոյ ջամին (կապուտ կամ երկնագույն մզկիթ) էր Զորագյուղին հարակից տարածքում այժմ Մաշտոցի պողոտայի սկզբնամասում: Կառուցել է Հուսեյն-Ալի խանը 1766թ. (շինարարական արձանագրությունն առկա է) [14, էջ 367]: Այն քառանկյուն բակի շուրջը խմբված մի համայիր է, որտեղ դոմինանտում են մզկիթի շինությունները՝ տեղակայված հարավային և հյուսիսային կողմերում, իսկ օժանդակ շենքերն ու խցերը արևելյան և արևմտյան կողմերում են: Բակի կենտրոնում ջրավազան կա, որի շուրջը ծառապատ հրապարակն է: Մզկիթն իր հորինվածքով ներկայանում է որպես երեք կամարակապ, փոխկապակցված դահլիճների ամբողջություն: Սրանցից կենտրոնականը պսակված է երկնագույն հախճապակով պատված գմբեթով: Պատերը զարդարված են արևելյան զարդանախշերով և գունային համադրությամբ: Այս մզկիթը կրկնությունն էր պարսկա-արաբական այն նույնատիպ կառույցների, որոնցում դրսնորված են պարսկական ճարտարապետության առանձնահատկություններն ու արևելյան վառ ճաշակը: Համալիրի, ինչպես նաև այս շրջանի Երևանի կողմնորոշող կառույցներից է համայիրի մինարեն, որ համայնապատկերում դոմինանտում է և տեսանելի է եղել քաղաքի բոլոր դիտակետերից: Շահարում էին կառուցված նաև Հաջի -Նովրոզ- Ալիբեկի, Զալեսանի և Դամիր-Բոլաղի մզկիթները [62, էջ 468]:

Երևանի միջնադարյան նշանավոր եկեղեցիներից է Կաթողիկե Ս. Աստվածածինը, որը կառուցված է Երևանի Շահար թաղամասի կենտրոնում (այժմ Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում): Եկեղեցին կառուցվել է 1679թ. Երկրաշարժի ժամանակ կործանված իին եկեղեցու տեղում [21, էջ 14]:

Եկեղեցին եռանավ հորինվածք ունի: Հատակագծում չորս մույթերը, որոնք կամարներով կապված են իրար և հանդիպակաց պատերի որմնամույթերի հետ, իրենց վրա էին կրում եռանավ դահլիճի երեք զուգահեռ թաղերից բաղկացած ու միասին երկթեք կտուրի տակ առնված ծածկի կոնստրուկտիվ համակարգը: Կենտրոնական թաղի գագաթին թողնված էր լուսացույց: Եկեղեցին կառուցված է կարմրադարչնագույն տուֆ քարից [17, էջ 21]:

Եռանավ բազիլիկաների տիպին պատկանող մյուս Եկեղեցին Հին թաղի կենտրոնական մասում կառուցված Պողոս-Պետրոսն է: Արդեն նշվել է, որ այն հիմնադրվել է վաղ միջնադարում: Հին մնացորդների վրա վերակառուցվել է 17-րդ դարի վերջում [21, էջ 30-32]: Ընդարձակ աղոթասրահի արևելակողմում ավագ խորանն էր՝ կողքերի ավանդատներով: Մոյքերին և պատերին հենվող երեք զուգահեռ թաղերով կազմված ծածկի համակարգն այստեղ նույնպես վերցված էր երկթեք կտուրի տակ: Եկեղեցին ուներ Պողոս և Պետրոս առաքյալներին պատկերող որմնանկարներ, որոնք Եկեղեցու քանդման ժամանակ խնամքով հանվել և տեղափոխվել են Հայաստանի Պատմության պետական թանգարան: Երևանի պատմության թանգարանում էլ պահպում է Պողոս-Պետրոս Եկեղեցու հարավային երկփեղկ դուռը, որը պատկանել է Բայազետի բերդին և 1835թ. այնտեղից բերելով՝ նվիրել էին Եկեղեցուն: Այն առանց փոփոխելու վարպետորեն հարմարեցվել էր Եկեղեցու մուտքին [21, էջ 37]:

Երևանի այս շրջանի Եկեղեցիներից է նաև Սբ. Հովհաննես-Մկրտիչ Եկեղեցին: Այն գտնվում է Կոնդում (այսօր Պոռշյան փողոցի սկզբնամասում): Նրա նախնական ձևի և կառուցման ժամանակի մասին ոչինչ հայտնի չէ, քանի որ այն կործանվել է 1679 թ. երկրաշարժի ժամանակ, իսկ ավերակների տեղում՝ նոր հիմքի վրա, 1710 թվականին կառուցվել է այժմ գոյություն ունեցող Եկեղեցին, որն էլ 1980-ական թթ. վերակառուցվել է, որի արդյունքում նաև գմբեթավորվել է: Իր հորինվածքային տիպով (Եռանավ բազիլիկա) նման էր Երևանի մյուս Եկեղեցիներին, բայց ավելի մեծ է (աղոթասրահն ունի ներքին՝ 14,3x18,5մ չափեր): Կառուցված է խառը շինարվեստով: Սրբատաշ տուֆով շարված են պատերի արտաքին և ներքին ճակատները, ավագ խորանն ու գմբեթը, իսկ անձև քարերով՝ աղոթասրահը ծածկող երեք զուգահեռ թաղերը:

Սբ. Զորավոր Աստվածածին Եկեղեցին կառուցվել է 7-րդ դարում և բազմիցս վերակառուցվել է: Սկզբնապես այն կոչվել է Սբ. Աստվածածին անունով: Հետագայում, այնտեղ պահպող «Զորավոր» կոչվող ավետարանի պատվին Եկեղեցին վերանվանել է Ս.Զորավոր: Նախապես այստեղ գտնվում էր Սուրբ Անանիա Առաքյալի

մատուտ-դամբարանը, որը նշանավոր սրբավայրի համարում ուներ: Սր. Զորավոր Եկեղեցին նույնպես պատկանում է Եռանավ բազիլիկ Եկեղեցիների տիպին [17, էջ 12]: Ուղղանկյուն պարագիծ ունեցող Եկեղեցու աղոթասրահը բաժանված է երեք նավի: Դրանք իրենց հերթին կապված են ջլապինդ կամարներով: Աղոթասրահի արևելյան կողմում ավագ խորանն է, իսկ հարավային և հյուսիսային անկյուններում՝ ավանդատները: Եկեղեցու մուտքը սկզբնապես եղել է արևմտյան կողմի Եռակամար նախասրահից, իսկ հարավային մուտքը բացվել է 19-րդ դարում: Եկեղեցու ներքին և արտաքին ճարտարապետությանը բնորոշ է խիստ պարզությունը: Արտաքին պատերի առանձին հարթություններում ագուցված են 17-րդ դարով թվագրված խաչքարեր:

Պարսկական շրջանի Եկեղեցիները բաժանվում են երկու խմբի՝ ավելի վաղ շրջանում գոյություն ունեցողների տեղում վերակառուցվածներ և տվյալ ժամանակաշրջանում հիմնադրվածներ: Վերջիններս իրենց հորինվածքային և գեղագիտական առանձնահատկություններով զիջում էին առաջիններին: Ընդհանրապես այս շրջանի բոլոր Եկեղեցիներն աչքի են ընկնում իրենց պարզ հատակագծային և ծավալատարածական լուծումներով՝ անպաճույն գեղագիտական առանձնահատկություններով:

Բնակելի շենքերը պարսկական շրջանում գերակշռող էին քաղաքի ընդհանուր համայնապատկերում (պարզ կավաշեն տներով միահարկ բնակելի կառուցապատում): Մոնումենտալ ճարտարապետությունը հիմնականում ներկայանում էր ամրաշինական (պարիսպներ, աշտարակներ), պաշտամունքային (մզկիթներ, Եկեղեցիներ), պետական, կառավարական կառուցների (Սարդարի պալատ) և բարձրաստիճան խավի ներկայացուցիչների առանձնատների (խաների տներ, ամառանոցներ) տեսքով՝ կրելով արևելյան (պարսկական) ճարտարապետության գեղագիտությունը: Գերակշռող շինանյութը կավն է:

Պարսկական շրջանում Երևան քաղաքի հյուսվածքը զարգանում էր անկանոն կերպով: Չկար քաղաքաշինական մարտավարություն: Ընդհանրապես միջնադարյան քաղաքներում ուղղաձիգ կառուցների հարաբերական գերակշռելիությունը քաղաքի տնտեսական բարձր կարգավիճակի ցուցանիշն է եղել: Հենց դրանով էր

պայմանավորված, որ միջնադարյան Երևանի ընդհանուր համայնապատկերում շատ չէին բարձր կառուցները (ի հակադրություն Եվրոպական մի շարք քաղաքների՝ Վենետիկ, Ֆլորենցիա, Փարիզ, Քյոլ): Որպես բնակելի թաղամասերի հորինվածքային դոմինանտներ և քաղաքի համայնապատկերի ուրվագծային կազմակերպման ակցենտներ՝ կողմնորոշչներ հանդես էին գալիս պաշտամունքային կառուցները՝ մզկիթներն ու եկեղեցիները [27]:

Այսպիսով կարելի է ասել, որ մինչորուսական շրջանում Երևանը բերդաքաղաք էր և մի քանի դար շարունակ Արևելքում հոչակված էր որպես անառիկ քաղաք: Ժամանակագրական առումով բերդերը ներկայանում են հետևյալ հաջորդականությամբ. Էնեոլիթում Շենգավթի ամրոց-բնակատեղի, Վանի թագավորության ժամանակաշրջանում՝ Էրեբունի, անտիկում և վաղ միջնադարում Ծիծեռնակաբերդ, թուրք-պարսկական շրջանում Երևանի բերդ:

### **Կերպարի դարածական մոդելը**

Քաղաքային կառուցվածքում առկա էր երեք հիմնական շրջան՝ Կոնդ, Բուն քաղաք և Բերդ, որոնց համար որպես եզրագիծ էին ծառայում դրանց միջև գտնվող այգեպատ տարածությունները: Քաղաքի արտաքին եզրագծերն էին Հրազդան և Գետառ գետերը: Զկար հանգուցների հստակ համակարգ, թեպետ որոշ տարածություններ՝ հրապարակներ (Ղանթար, Զալ խանի) հանգուցային նշանակություն ունեին: Կողմնորոշման համակարգը կետային էր՝ հիմնված առանձին կողմնորոշչների վրա, ինչը պայմանավորված էր հստակ ուղիների բացակայությամբ (Հավելված 13):

### **Կերպարի պատկերային մոդելը**

Նկատի ունենալով Շարուենի և Տավիերնեի նկարագրոված հատակագիծ-համայնապատկերները՝ ակնհայտ է, որ այդ ժամանակաշրջանում Երևանի քաղաքային ընդհանուր ուրվագիծը եղել է պարզ՝ միօրինակ ճարտարապետությամբ պայմանավորված՝ բնորոշ գավառական քաղաքին: Համալրվածության աստիճանով առանձնանում էր մահմեդական ճարտարապետությունը: Հայկական ճարտարապետությունը, նոյնիսկ պաշտամունքային, կրում էր պարզության,

կարգավորվածության բարձր աստիճան: Քաղաքի ճարտարապետական կերպարի ընդհանրականությունը կերտվում էր բնակելի կառուցների միօրինակությամբ: Վերջիններիս բնական լանդշաֆտի հետ ներդաշնակ փոխհարաբերությունը շեշտում էր առանձին միջավայրերի կերպարայնությունը (հավելված 14):

**2.3. Ռուսական շրջան. Քաղաքային միջավայրի կազմավորումն ու հուշարձանները**  
Վերջին 200 տարում Երևան քաղաքի կայացումն ու զարգացումն իր վրա կրել է մշակութային չորս տարբեր ազդեցություններ՝ պարսկական, ռուսական, խորհրդային և հետխորհրդային, ինչն ի վերջո հանգեցրել է քաղաքի ինքնության ձեռք բերմանը: Այդ ընթացքում քաղաքը եղել է երեք սոցիալ-քաղաքական կացութաձևների (ավատատիրական-կապիտալիստական-սոցիալիստական-կապիտալիստական) ազդեցությունները, որոնցից յուրաքանչյուրն իր դրոշմն է թողել քաղաքի ճարտարապետական կերպարի կայացման վրա [28]: Ռուսական շրջանում ձևավորվում է քաղաքաշինական նոր կառուցվածք: Ճանապարհների կանոնավոր ցանցը դառնում է նոր ճարտարապետական կերպարի կերտման տարրերից մեկը [38, էջեր 30-31]:

1828 թ. ռուս-պարսկական հաշտության պայմանագրի արդյունքում և մինչև 1917 թ. ռուսական հեղափոխությունը՝ Արևելյան Հայաստանն անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ: Այս ժամանակաշրջանի Երևանի մասին Լինչը գրում է, թե՝ «Արևելյան քաղաքները, - իսկ Երևանը ավելի լիակատար ասիական քաղաք է, - կարելի ասել բոլորը կառուցվել են երկու հարթության վրա: Մեկ հարթությունը կազմում են փողոցները, մյուսը՝ տափակ կտուրները, որոնք բոլորը գտնվում են գրեթե միևնույն մակարդակի վրա» [52, էջ 269]: Ստեղծված քաղաքական իրավիճակում ք. Երևանին բացառիկ հնարավորություն է ընձեռվում վերածվելու մշակույթի և կառավարման գավառական կենտրոնի:

Երևանի քաղաքային ճարտարապետությունը համակարգային և համալիր մոտեցմամբ սկսել է ձևավորվել հենց այս ժամանակաշրջանում: Քաղաքային ճարտարապետությունն ու քաղաքային միջավայրի կերպարը կտրուկ փոփոխություն

Են կրում և վերածնավորվում: Արմատական վերակառուցման է ենթարկվում քաղաքի հաղորդակցական ցանցը, հայտնվում են կանոնավոր երթուղիներ: Քաղաքակենտրոնացումը համապատասխանում է երկրի ներքին պահանջմունքին՝ բազմաէթնիկ բնակչության հանդուրժողական կեցության ապահովմանը: Քաղաքի զարգացումը կատարվում է մի կողմից տարրական մակարդակի գլխավոր հատակագծով, մյուս կողմից՝ խանության ժամանակներից մնացած ինքնակազմակերպման սկզբունքով, ինչն էլ հանգեցնում է երկու տարբեր քաղաքների ձևավորվելուն, մեկը՝ վերահսկվող, մյուսն՝ անվերահսկելի [29]:

Քաղաքի հիմնական կողմնորոշող օբյեկտներն էին բնական լանդշաֆտի տարրերը և չեզոք ֆոնային կառուցապատում ունեցող պաշտամունքային կառուցները: Բազմազանության տարրն առկա էր հատկապես անկանոն հատակագիծ ունեցող շրջաններում (Կոնդ, Զորագյուղ): Ուղիների նման կառուցվածք ունեցող շրջանները հիմք էին հանդիսանում միջավայրում հետիոտնի ընկալման մեջ առեղծվածայնության տարրի ներմուծման համար: Միջավայրը ներկայացնում էր ուղղագծի այլընտրանքային տարբերակներ. մի կետից մյուաը հասնելու համար տարբերակների թիվը շատ ավելին էր, քան կանոնավոր փոխուղղահայաց հատակագիծ ունեցող կենտրոնում:

1828 թ.<sup>1</sup> Արևելյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո, Երևանը դառնում է Ռուսաստանի հայկական երկրամասի, այնուհետև գավառի կենտրոնը, իսկ 1850 թվականի հունիսի 9-ից կազմավորվում է Երևանյան նահանգը<sup>2</sup>՝ յոթ գավառներով: Այդ ժամանակ պարսկական տիրապետությունից ժառանգություն մնացած քաղաքի ծուռումուու փողոցների ցանցը, անբարեկարգությունը, միահարկ կավաշեն, աղքատիկ և սակավ քարե բնակելի տները չեն համապատասխանում նահանգային կենտրոնի պահանջներին: Սկսվում է պետական վարչական շենքերի շինարարությունը: Մասնավոր ու պետական շենքերին հողամասերի հատկացման, փողոցների ցանցի քաղաքաշինական կարգավորման համար անհրաժեշտ էր գլխավոր հատակագծի մշակումը, ավելին՝ նկատելի դարձավ քաղաքի տարածքի սահմանների ընդարձակման ձգտումը:

Երևան քաղաքի շրջագիծը, Ռուսաստանին միացման նախօրյակին կազմում էր 30կմ, սկսած Զանգվի (Հրազդան) կամրջից և վերադարձած նոյն տեղը: Ռուսական տիրապետության շրջանում՝ 1834 թ., Նորքը միացնելուց հետո, այն իր բնակելի թաղերով և քաղաքապատկան հողերով գրավում էր մոտ 45կմ շրջագիծ ունեցող տարածություն, որը սահմանակցվում էր Քանաքեռ, Նորագավիթ, Վերին Շենգավիթ և այլ գյուղերի հանդամասերին [11, էջ 553]: Տարածքի ընդարձակմանը նպաստեցին ոչ միայն անջատված թաղերը մի ամբողջության մեջ՝ ընդգրկելու միտումը, այլև անօգտագործելի և չորացած այգիների հողերը նոր շինարարության նպատակներին հատկացնելու գործընթացը:

Դառնալով Հայկական մարզի, ապա համանուն նահանգի կենտրոն՝ Երևանը վերաբնակեցվում է հայերի նոր խմբերով, մեծանում, կառուցվում են նոր թաղամասեր:

1856 թ. նոր գլխավոր հատակագծով (հեղինակ Ա. Ստացկի) փորձ է արվում քաղաքի անվերահակելի ընդարձակման հետևանքով քաղաքին միացած արվարձանային թաղամասերի (Նորք) և կենտրոնական միջուկի միջև համապատասխանեցում ստեղծել:

Նախկին 3 թաղերի փոխարեն ստեղծվում են 7-ը՝ Հին թաղը, որից առանձնանում են Շեն թաղը և Նոր թաղը, Կոնդը, որի բարկացուցիչ մասերից էր

Ծիրանի թաղը, որից առանձնանում է Զորագյուղը (Դարաքենդ), ինչպես նաև՝ Քարհանքը և Նորքը (Չոլմաքչի) [46, էջ 10]: Քաղաքի հարավում գտնվում էր Երևանի բերդը:

**Նոր թաղը** գտնվում էր ներկայիս Թումանյանի տունթանգարանի շրջակայքում: Երևանի կենտրոնական հարթ մասում գտնվող՝ այն ժամանակվա Խանի այգու ընդարձակ ու բարձիթողի դարձած տարածքը հատկացվում է բնակելի «նոր» կոչված թաղամասի կառուցապատման համար: Այն բնակեցվել էր 1828 թվականից հետո Ատրպատականից Երևան տեղափոխված բնակիչներով, որի պատճառով ստացել էր «նոր» անվանումը: Զբաղեցնելով Շահարի, Կոնդի քաղաքային գլխավոր շուկայական հրապարակի միջև ընկած տարածքը՝ Նոր թաղը կապ էր ստեղծում

Դրանց միջև: Թաղամասը կառուցապատվեց կանոնավոր հատակագծման սկզբունքով՝ ուղղագիծ և միմյանց գուգահեռ առանցքային փողոցներով: Սրանով նախաձեռնվեց Երևանի կենտրոնական մասի հիմնական վերակառուցումը՝ կառուցապատման մեջ արմատավորելով կանոնավորություն: Կենտրոնում գտնվող Աստաֆյան (այժմ Աբովյան) փողոցը դարձավ քաղաքի առաջին նախագծով կառուցված գլխավոր փողոցը, որն ունի ավելի քան մեկ դարի պատմություն: Նախապես փողոցը կոչվում էր Կրեպոստնայա՝ քանի որ բերդից էր սկսվում, հետո արդեն Աստաֆյանկայա, ի պատիվ Երևանի նահանգապետի՝ Աստաֆյանի, որն այդ պաշտոնը վարել է 1864-1869 թվականներին: Չնայած փողոցը պաշտոնապես Աստաֆյանկայա էր կոչվում, Երևանցիները հայկականացրած տարբերակով անվանում էին Աստաֆյան, ինչն ավելի մեծ ճանաչում ստացավ: Մայրուղին սկիզբ առնելով հարավ-արևմուտքից՝ կենտրոնական շուկայից՝<sup>1</sup> կմ Երկարությամբ ծգվում էր դեպի հյուսիս-արևելք՝ Պլանի գլուխ (Աբովյանի հրապարակ) դեպի Քանաքեռի փեշերը՝ հատվելով Նոր թաղի մի քանի կառուցապատված փողոցների հետ [60, էջ 42]: Դրանք էին Նազարովսկայա (Ամիրյան), Բեյբուդովսկայա (Սվերդլով-Փավստոս Բուզանդ), Յարսկայա (Սպանդարյան-Արամ), Թարխանովսկայա (Պուշկինի), Դոկտորսկայա (Թումանյան) փողոցները, որոնք հետզհետեւ, 19-րդ դարի ընթացքում կառուցապատվեցին բնակելի տներով: Աստաֆյան-Աբովյան փողոցի կառուցապատումը մեկ-երկու հարկանի բնակելի և վարչական շենքերով տևել է 20 տարի: Նոր թաղում է կառուցվել մինչ այժմ կանգուն Սր. Զորավոր Աստվածածին Եկեղեցին: Եկեղեցական փողոցի վերջում գտնվում էր Գեթսեմանի մատուռը, որի տեղում այժմ կառուցված է Երևանի Օպերայի և Բալետի Ազգային Ակադեմիական Թատրոնը: Այդ ժամանակ Քանաքեռը, Ավանը և մի շարք այլ գյուղեր առանձին բնակավայրեր էին: Երևանից դուրս էին գտնվում նաև Դալմայի այգիները:

Այս շրջանում Զորագյուղը միանում է Կոնդ թաղամասին: Այն ընկած էր Կոնդից ներքև, Զանգու գետի ձախակողմյան նեղ հովտում և զաղիթափ լանջին: Զորագյուղում հիշատակվում են ավելի փոքր թաղեր՝ Ենթաթաղեր՝ Քարկափի թաղը, Ներքին (ստորին) կամ Զորի թաղը և Կարբիի թաղը [11, էջ 231]:

**Շիլաչին** արհեստավորների ու մանր առևտրականների թաղամասն էր: Այն տարածվում էր քաղաքի հարավարևելյան մասում: Անվանումը ցուցում է հին արհեստավորական Երևանի այդ թաղում գործող արտադրության բնույթը: Շիլաչի թարգմանաբար նշանակում է ներկարարների թաղամաս, որտեղ տեղադրված էին նրանց արհեստանոցները: Շիլաչին արհեստավորների այն շարքն էր, որտեղ կտորեղենը ներկում էին կարմիր գույնով: Համանման ձևով՝ Հրազդանի ձորի ներկատներում օգտագործում էին առավելապես կապույտ գույնի ներկեր, որի պատճառով թաղը կոչվում էր Բոյախչի, իսկ ներկատները՝ Բոյախանա [11, էջ 231]:

**Շուկայական հրապարակը** (այժմյան Կիրովի այգու տեղում) շարունակում էր մնալ (ինչպես պարսկական շրջանում) քաղաքի գործարար առևտրական կենտրոնը: Այն զբաղեցնում էր Բերդի և Կապույտ մզկիթի միջև ընկած տարածությունը՝ կենտրոնում ունենալով Ղանթար կոչված կառույցը: Այն հարավային կողմից սահմանափակվում էր 1-2 հարկանի շենքերով, որոնց առաջին հարկերում տեղավորված էին խանութների շարքեր [38, էջ 22]:

**Բոլվար:** Պարսկական շրջանի Երևանում զբոսայգու դերը ստանձնել էին եկեղեցիների և մզկիթների ստվերախիտ և փոքրիկ բակերը: Քաղաքի առաջին հեռանկարային հատակագծի աստիճանական իրականացման ընթացքում (1850-60-ական թվականներ) ծևավորվում և բարեկարգվում են զբոսայգիները: Այս շրջանի Երևանի կենտրոնական զբոսայգին «բոլվար» էր կոչվում, Այն մի ընդարձակ և երկայնաձիգ ծառուղի էր, որը տեղակայվում էր Երևանի Հանրապետության հրապարակից դեպի քաղաքապետարան ընկած հատվածում: Ժամանակին Երևանը փոքր էր, իսկ բոլվարն էլ իր դիրքով քաղաքի նկատմամբ կենտրոնական դիրք ուներ և դարձել էր Երևանցիների նախընտելի հանգստավայրը: Այստեղ էր գտնվում նաև քաղաքի «Ֆանտազիա» (հետագայում պրոլետար) կինոթատրոնը, որը տեղադրված էր քաղաքային վարչության հին շենքում: Շենքի գլխին էր գտնվում քաղաքի ժամացույցը: Բոլվարը կապում էր Ղանթարը քաղաքի կենտրոնին՝ Շահարիին [38, էջ 29]:

**Եկեղեցիները:** Ռուսական շրջանում գոյություն ունեցող Եկեղեցիների կողքին հիմնադրվում են նորերը: Սբ. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին գտնվել է քաղաքի կենտրոնական մասում՝ Ներկայիս Ամիրյան փողոցում՝ Ե. Զարենցի անվան դպրոցի տեղում: Այն Երևանի ամենառու կառուցված Եկեղեցիներից էր՝ հիմնադրվել է 1869թ., սակայն տարբեր պատճառներով շինարարությունն ընթացել է ընդմիջումներով և ավարտվել 1900թ.: Մի փոքր ուշ՝ արևելյան կողմից կցակառուցվել է վերասլաց ծավալով մի զանգաշտարակ: Արձանագրություններով վկայված է, որ Եկեղեցին կառուցվել է Երևանցի Գրիգոր Ղազարյանի, զանգաշտարակը՝ Գևորգ Տեր-Սահակյանի նվիրատվությունների հաշվին: Տուֆակերտ գմբեթավոր Եկեղեցին քանդվել է 1940-ական թվականների վերջին [23, էջ 222]:

Երևանի բերդի դիմաց, Զորագյուղի կամ Խնկելո ձորի վերևում՝ Հրազդան գետի ծախ ափին, քրիստոնեության վաղ շրջանից գործել է վանք-անապատ: Այն պարհսպներով շրջապատված մի ընդարձակ համալիր էր՝ բաղկացած Սբ. Սարգիս, Սբ. Գևորգ և Սբ. Հակոբ Եկեղեցիներից, առաջնորդարանի ու թեմական դպրոցի շենքերից, այգուց և այլ կառուցներից: Սբ. Սարգիս Եկեղեցին առաջնորդանիստ էր, անապատը՝ կաթողիկոսական իշխանատեղ: Զորագյուղը Խնկելո ձոր էր կոչվում նաև այն պատճառով, որ այստեղ էր գտնվում կաթողիկոսի ժամանակավոր աթոռանիստը, Երևանի Եպիսկոպոսանիստը և որտեղ հիմնականում իրականացվում էր ծիսական արարողակարգը [14, էջ 340]:

Սբ. Սարգիս Եկեղեցին վանքի հետ միասին կործանվել է 1679 թվականի Երկրաշարժի ժամանակ և վերակառուցվել նոյն տեղում՝ Նահապետ կաթողիկոսի գահակալության շրջանում (1691-1705): Ներկայիս Եկեղեցին կառուցվել է 1835-1842 թթ.: 1972թ. Վազգեն Ա կաթողիկոսի օրոք այն նորոգվեց ու ամբողջովին բարեկարգվեց (ճարտարապետներ Ռ. Իսրայելյան, Ա. Գալիկյան): 1971-1976 թթ. Եկեղեցին հիմնովին բարեկարգվեց: Հին գմբեթի փոխարեն կառուցվեց առավել բարձրադիրը՝ բազմանիստ թմբուկով և հովհարածն վեղարով:

Սբ. Սարգիս Եկեղեցին իր գոյության բոլոր ժամանակներում Երևանի ճարտարապետական կերպարի ձևավորման գործում կարևոր դերակատարում է

ունեցել: Այսօր էլ այն, ներգրավված լինելով քաղաքային կառուցապատման մեջ, միաժամանակ պահպանում է միջավայրային դոմինանտի և կողմնորոշողի իր առաքելությունը:

### **2.3.1. Երևանի քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին**

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ռուսական կայսրությունում պատմական, ռազմաքաղաքական և մշակութային գործոնների ազդեցությունը Անդրկովկասի քաղաքաշինության և նաև Երևանի քաղաքային միջավայրի ձևավորման ու ճարտարապետական կերպարի կերտման գործում կարևոր եղավ: Երևանում, սակայն, առաջընթացն ու զարգացումը ավելի դանդաղ էին ընթանում: Կայսրության ծայրամասային, հեռու ու հետամնաց գավառական քաղաք, արդյունաբերական զարգացման աննպաստ հեռանկարներ, արտաքին աշխարհի հետ հաղորդակցության ճանապարհների բացակայություն և վերջապես, պարտված, բայց դեռ ուժեղ ու անհանգիստ հարևան թշնամական տերություններ, այս վիճակով Հայաստանը դիտվում էր որպես միայն ռազմատրատեգիական տարածք: Այս գործոնները խոչընդոտում էին արտաքին կապիտալի հոսքը դեպի տեղական տնտեսության ոլորտները [31, էջ 60]:

**Քաղաքաշինություն:** Երևանի քաղաքաշինության և ճարտարապետության զարգացման համար այս շրջանում երկու քաղաքական և տնտեսական կարևոր իրադարձություն տեղի ունեցավ՝ քաղաքն ստացավ նահանգային կենտրոնի կարգավիճակ և գործարկվեց Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուֆա երկաթուղին, որը նպաստեց արտաքին աշխարհի հետ քաղաքի հաղորդակցմանը և տնտեսական կապերի զարգացմանը: Տնտեսական կյանքի փոփոխման և զարգացման, գործարանների կառուցման, առևտրի շրջանակների ընդարձակման, նոր գերատեսչությունների կազմավորման հետ սկսվում է նաև քաղաքաշինության զարգացումը: Երևան քաղաքի միջնամասը ձևավորվում է որպես քաղաքի կենտրոն՝ ենթարկվելով զգալի փոփոխության [60, էջ 43], այստեղ տեղակայվում են վարչական,

ֆինանսական հիմնարկություններ, հյուրանոցներ, հիվանդանոցներ, թատրոններ, ռեստորաններ, արդյունաբերական, առևտրային և բնակելի շենքեր: Դրանք կրում էին ընդհանուր տիպաբանական բնութագրեր՝ հատակագծի չափերի և բարձրության (քաղաքաշինական տվյալ կառուցվածքում տեղադրվածության համապատասխան) չնչին տարբերություններով: Մոնումենտալ ճարտարապետությունը ավելի մեծ ընդհանրություն է ձեռք բերում: Ճարտարապետա-շինարարական գործընթացներում ձևավորվում է Երևանի ճարտարապետական ֆոնը: Երևանը դառնում է միաժամանակ Եվրոպական (հանրային օգտագործման կանոնավոր տարածքներով) և ասիական (գյուղաքաղաք, չվերահսկվող տարածվածություն) մի քաղաք, ինչն առ այսօր էլ որոշ չափով պահպանվում է:

Քաղաքի տարերայնորեն առաջացած կառուցապատումը փոխարինվում է հարուստ քաղաքացիների առանձնատներով, վարչական և հանրային երկու-երեք հարկանի քարե շենքերով ձևավորված փողոցների ուղղանկյունաձև ցանցով:

1906-1911 թթ. քաղաքային ճարտարապետ-տեխնիկ Բ. Մեհրաբյանը կատարում է քաղաքի գլխավոր հատակագծի մանրամասն հանույթը, որը և դառնում է հետագա քաղաքաշինական հիմնական սխեման: Երևանի գլխավոր հատակագծում ներդրված էին ռուսական գավառական կանոնավոր հատակագծման սկզբունքները: Սակայն այստեղ բացի Կոնդից, հաշվի չեն առնված գոյություն ունեցող մյուս թաղամասերը: Նաև հաշվի չեն առնված և գլխավոր հատակագծի գործվածքում չեն ներգրավված քաղաքը շրջապատող բնապատկերները՝ Նորքի և Քանաքեռի բարձունքները, Հրազդանի գեղատեսիլ կիրճը [31, էջ 63]:

Այս շրջանին է վերաբերում նաև կենտրոնական հրապարակին կից քաղաքային գրոսայգու կանաչապատումը, որի հիմքում դրված էր կանոնավոր հատակագծման անգլիական տիպի պուրակների սկզբունքը: Շնորհիվ նոր գլխավոր հատակագծի, Երևանը աստիճանաբար ստանում է կանոնավոր հատակագծված հստակ կառուցվածք: Հարավ-արևելքից և հյուսիս-արևմուտքից սկիզբ առնող ուղղագիծ փողոցների ցանցը կազմավորեց ուղղանկյուն թաղամասեր և հրապարակներ, որի շնորհիվ քաղաքը ստացավ որոշակի կազմակերպված

սահմաններ և ընդհանուր առմամբ՝ բարվոք տեսք: Առաջանում են գլխավոր ու երկրորդական փողոցներ: Փողոցների միջին մասի սալահատակումը, մայթերի քարե սալերի ծածկույթը, գիշերային լուսավորության լապտերների սյուների շարքը քաղաքի կենտրոնին հետզհետե մասնակի բարեկարգություն են հաղորդում: Քաղաքն, այնուամենայնիվ, ամբողջապես չքարեկարգվեց. Նոր փողոցների միջև դեռ պահպանվում էին միահարկ կավաշեն կամ գետնափոր տնակներով կառուցված, հնից եկած ծուռումու նրբանցքներն ու փակուղիները, սակայն այստեղ ևս, դանդաղորեն մուտք են գործում տների հիանալի նմուշներ [31, Էջ 63]:

**Ճարտարապետությունը:** Այս շրջանի ճարտարապետությունը բնորոշվում է ավանդույթների կտրուկ փոփոխությամբ, որը տեղի էր ունենում հյուսիսից և արևմուտքից ներմուծված ճարտարապետական ուղղությունների՝ էկլեկտիկայի, մոդեռնի և նեոկլասիցիզմի ազդեցությունների ներքո: Այս գործընթացն ուներ իր հիմնավորումներ՝ փոփոխված քաղաքական, սոցիալական և տնտեսական պայմանները: Նոր արտադրական հարաբերություններն ու դասակարգային շերտավորումը բացառում էին ճարտարապետության աստիճանական զարգացումը: Փոխվում է վերջինիս դերի հասկացությունը հասարակական-սոցիալական կյանքում, նրա հին ավանդույթների պահպանման սովորույթը: Փոխվում են քաղաքային միջավայրի ձևավորման պատկերացումները և ճարտարապետական կերպարի ընկալումները: Ճարտարապետական կերպարի կերտման բոլորովին նոր գեղագիտություն է մշակվում:

Սոցիալ-պատմական և տնտեսական փոփոխված իրավիճակով և 1890 թվականին Երևանը նահանգային քաղաք դառնալով պայմանավորված՝ առաջանում է նոր տիպի շենքերի (նահանգապետարան, քաղաքային և ոստիկանական վարչությունների, գանձարանի և պետական դրամատան շենքեր, գիմնազիաներ, ուսումնարաններ, հիվանդանոց և այլն) կառուցման անհրաժեշտություն: Ընդլայնվում են 1-ից մինչև 3 հարկանի մասնավոր բարեկարգ բնակելի տների, հյուրանոցների, խանութների, ֆիրմային վաճառատների շինարարության մասշտաբները: Միահարկ պարզունակ տներին փոխարինում են ճարտարապետական բարդ

հարմարություններով ապահովված շքեղ մենատները, բազմահարկ այսպես կոչված եկամտաբեր բնակելի տները: Այս ծավալների ի հայտ գալը նոր Երևանի ճարտարապետական կերպարի կերտման այն կարևոր գործոններ էին, որոնցով ձևավորվում էր քաղաքային ճարտարապետությունը և հետզհետեւ ուրվագծվում է Երևանի նոր քաղաքաշինական դեմքը:

**Բնակելի բներ:** 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի քաղաքային տները կառուցվում էին սրբատաշ քարից և հիմնականում մեկհարկանի էին՝ բարձր կիսանկուղային հարկով: Վերին հարկը, որտեղ տեղաբաշխվում էին բնակելի սենյակները, փողոցի և բակի կողմերից ունեին պատշգամբներ՝ ցանցկեն քանդակազարդերով: Ի տարբերություն ավանդական ժողովրդական բնակարանի՝ Երևանի բնակելի տները ունեին սենյակների երկշարք տեղաբաշխում: Առևտրականների և արհեստավորների տները երկհարկանի էին՝ առաջին հարկի խանութով կամ արհեստանոցով: 19-րդ դարի վերջերին ի հայտ եկան նաև բազմաբնակարան շենքեր, որտեղ բնակվում էին պետական հիմնարկների ծառայողները: Տեղական սև տուֆից կառուցված Երևանի բնակելի տների ճարտարապետությամբ ազգային ավանդույթները գուգակցվում էին ռուսական կլասիցիզմի հետ: Բնակելի տների դեկորատիվ հարդարանքի համար կիրառվում էր ճակատների մշակումը միայն եզրերը տաշած քարերով՝ «ռուսական»: Պատուհանների և դռների բացվածքները շրջանակվում էին բարդ տրամատում ունեցող պարակալով: Տների ճակատները ձևավորվում էին պահունակներին հենվող պատշգամբներով, դեպի բակը տանող կամարածն քանդակազարդ մուտքերով [60, էջ 44]: Տարածում է ստանում շենքերի ճակատների երեսպատումը քարով, գունավոր ծեփով կամ այյուսի ձևավոր շարվածքով: Ճակատների մշակումներում դիտվում է ճարտարապետական մանրամասերի, որմնասյուների և պսակող քիվերի ձևերի հարստացում: Ճակատների գեղարվեստական ձևավորումներում ոչ պակաս կարևոր նշանակություն են ստանում մետաղե կամ փայտե ճաղերով, կամարակապ ու փայտե սյուներով կախովի պատշգամբները: Այս ամենին նպաստում էին նաև սոցիալական գործոնները: Մեկ-երկու հարկանի մենատները, ինչպես և եկամտաբեր տները

արտաքնապես սակավ դեպքերում էին արտահայտում տեղական ճարտարապետական ավանդույթները և ավելի ենթարկվում էին քաղաքաշինական նոր պահանջներին և նորամուտ ոճերին, սակայն ներսում հատակագծերում և ընդհանուր կառուցվածքում, պահպանվում էին ավանդույթները՝ բակային, ողջ շենքի երկայնքով ձգված փայտե պատշգամբները, թաղածածկ ներքնահարկերը՝ բնության բարիքները պահելու, իսկ հաճախ դրանց վերամշակման արտադրական գործատեղերին ծառայեցնելու նպատակով: Ժամանակի ընթացքում ավանդական բնակելի տան կառուցվածքում նկատելի են դառնում վերափոխությունների ձգտումները, որոնք ստեղծում են բնակելի տան նոր տիպ՝ եկամտաբեր տուն: Նախատեսվում է փակ աստիճանավանդակով մի ընդհանուր շքամուտք, որը տանում է դեպի իր բոլոր օժանդակ սպասարկման մասերով մեկուսի բազմասենյակ բնակարաններ: Վերջիններս մոտենալով եվրոպական բնակարանային հորինվածքներին, պահպանում են 1-2 հարկանի, բայց ժամանակակից հատակագծերով բնակելի շենքերի հորինվածքը [31, էջ 64]:

Աֆրիկյանների տունը կառուցվել է (1902 թ., ճարտ. Վ. Միրզոյան) Շարիսանյան (Պուշկինի) փողոցում, որի առաջին հարկը լուծված է պարզ, խորը ոռոստավոր շարվածքով և ուղղանկյուն պատուհաններով: Երկրորդ հարկի ճակատը, որպես կառույցի հորինվածքի ավարտապատ, լուծված է ավելի բարդ ու հարուստ, որի արդյունքում ստեղծվել է հակադիր հարաբերություն երկու հարկերի միջև: Պատուհանների ոիթմը ընդմիջված է որմնասյունների շարքով և հարուստ տրամատի քիվով ու պարապետով: Վերջինս ավարտում է պատի մշակումը և ամբողջացնում որմնասյունների և պատուհանների ոիթմը որպես մի ընդհանուր հորինվածք: Այն անցյալ դարի սկզբի Երևանի ճարտարապետական կերպարի կերտման գործում բերել է իր ավանդը [31, էջ 224]:

Մի այլ ոճով էր լուծված Գրիգոր և Բորիս Եղիազարյան Եղբայրների տունը Աստաֆյան (Աբովյան) փողոցում (1903 թ., ճարտ. Վ. Միրզոյան): Այստեղ ավելի զգացվում է իտալական Վերածննդի, քան կլասիցիզմի ոճը: Տան երկիակ ճակատն ամբողջովին ոռոստավատ շարվածքով է իրականացված: Այս եղանակով են շարված

պատուհանների միջև ընկած պատերը, շենքի անկյունները, նաև պատուհանների կամարները, որոնց վրայով անցնում են հարկաբաժան գոտին ու մոդուլոններով զարդարված պսակող ծանր քիվը: Այս մոնումենտալ շենքի ճակատի ճարտարապետությունն իր ողջ զանգվածով խիստ ռելիեֆային է և թողնում է փորագիր քարե պատի տպավորություն:

Աֆրիկյան եղբայրների եկամտաբեր տունը կառուցված էր Մայարնայա (Տերյան) փողոցի վրա, մոդեռն ոճով՝ երևանյան մեկնաբանությամբ. զուսպ ու պարզ (ճարտ. Բ. Մեհրաբյան): Գլխավոր ճակատի պատի դեկորի հիմնական հորինվածքը ձևավորված է երկիարկ բարձրության ուղղանկյուն մույթերով, որոնք ընդմիջվում են լուսամուտների ոիթմով: Մույթերի մակերեսը փորագրված է հյուսքածն զարդաքանդակներով և ավարտվում է խորանարդածն, փորագիր ծավալներով: Շենքի ընդհանուր հորինվածքային խստությունը խախտում են զուգ կախված մետաղե բազրիքներով պատշգամբները [31, էջ 243]:

Թաղեսույանների երկիարկ մենատունը Ցարսկայա (Արամի) Մայարնայա (Տերյան) փողոցների անկյունում, տիպիկ երևանյան բնույթ ունի. շենքի սկզբնամասում տեղադրված շքամուտք, երկրորդ հարկ տանող հանդիսավոր աստիճաններ: Բակի կողմից առկա է հարավային բնակելի տան անբաժան տարրը՝ ողջ շենքի երկայնքով ձգված փայտե պատշգամբ-սղահը: Ճակատները հարդարված են նրբորեն: Դա դիտելի է դեկորի մշակման մեջ, պատուհանների համաչափություններում, ոուստապատ շարվածքում և պսակող հարուստ քիվում:

Վարչահասարակական շենքերն աչքի էին ընկնում համեմատաբար խոշոր չափերով, տեղադրվում էին քաղաքի տարածքի կարևոր հանգույցներում: Երևանում դրանց տիպական օրինակներն են նահանգապետարանի, քաղաքապետարանի, արական գիմնազիայի, հյուրանոցների, կինոթատրոնի շենքերը, հիվանդանոցային և ուսումնական շենքերը: Ստորև կներկայացվեն այդ կառույցների տիպական օրինակները՝ դիտարկված գեղագիտական առանձնահատկությունների տեսանկյունից:

**Հանրային շենքեր:** Նահանգապետարանի շենքը (ճարտ. Վ. Միրզոյան) կառուցվել է Գուբերնսկայա (Հանրապետության) փողոցում 1900թ.: Այս շենքում նախատեսված էր նաև նահանգապետի բնակարանը, ուստի հեղինակը առաջարկել է չեղոք ճարտարապետական լուծումներ: Անկյունային դիրք գրավող շենքի ճարտարապետությունը խիստ է և պարզ: Բացակայում են որմնասյուների համակարգերը, ընդգծված շքամուտքերն ու ճակատի հարդարման ռելիֆային այլ տարրերը: Ռուսապատ ճակատը ձևավորված է պատուհանների ոիթմիկ շարքով և բրգածն տարրերով պսակվող քիվով: Ճակատին աշխուժություն է հաղորդում երկու գույնի տուֆի (սև տուֆից շարված պատը լրացվել է կարմիր քարից շարված զանազան տարրերով՝ հարկաբաժան գոտի, պատուհանների պսակներ, քիվ) կիրառությունը:

Պետական գանձարանի երկիարկ շենքը կառուցված էր (1902թ., Վ. Միրզոյան) Թարխանյանի (Պուշկին) և Տեր-Ղուկասովի (Նալբանդյան) փողոցների անկյունում: Հորինվածքը խիստ սիմետրիկ է՝ ճակատի երկու ծայրում նախատեսված են ոչ մեծ ելուստներ՝ կողային առանցքներ՝ ավելի ընդգծելու համար գլխավոր ճակատի կենտրոնը: Առաջին հարկի ռուսապատ, ուղղանկյունաձև պատուհաններով պատվանդանի վրա բարձրանում է որմնասյուների և կամարակապ պատուհանների ռելիեֆ ոիթմիկ շարքը, որը պսակվում է հորինվածքն ամփոփող քիվով [31, էջ 225]:

Յարսկայա (Արամի) փողոցի վրա գտնվող պետական դրամատան շենքը նույնպես ճակատների մշակման ճարտարապետական հետաքրքիր լուծումներով և արտահայտչամիջոցներով է առանձնանում: Այստեղ ևս առկա է պատի հարուստ մշակումը, բայց ընդհանուր ռելիեֆայնությունը թեթևացված է:

Ուսումնական շենքերից առանձնանում է Աստաֆյան (Աբովյան, 1910թ., ճարտարապետ Միրզոյան) փողոցում սև տուֆով կառուցված սեմինարիայի շենքը (որտեղ հետազայում բացվեց Երևանի պետական համալսարանը, որը գործում է մինչև այսօր և իր գույնի պատճառով կոչվում է համալսարանի սև շենք): Ուսումնական շենքին ներկայացվող բոլոր պահանջներն այս կառուցում բավարարված են ծավալատարածական օրինակելի լուծումներով, որի արդյունքում այսօր էլ այն

ծառայում է իր նպատակին: Հարուստ ու գրավիչ է ճակատների՝ կլասիցիզմի ոճով կերտված ճարտարապետությունը (ներդաշնակ միասնության մեջ գտնվող բարեկազմ որմնամույթեր, բարձր պատուհաններ, փարթամ քիվեր, վայելզակազմ լրացուցիչ մանրամասներ): Հետագայում՝ 1930-ական թթ., ավելացված վերնակառուցը ինչ-որ չափով խաթարել է ճարտարապետական կառուցիչ ներդաշնակությունը:

Աստաֆյան փողոցի վրա էր կառուցված մեկ այլ ուսումնական հաստատություն՝ արական գիմնազիայի շենքը, որն իր ճարտարապետական դասական պարզությամբ և երկգույն՝ սև ու կարմիր քարերի գեղեցիկ համադրությամբ Երևանի 20-րդ դարի ամենահաջողված հուշարձաններից էր:

Քաղաքային վարչության շենքն իր հատակագծային լուծումներով առնչվում է ուսումնական համանման կառուցվածքներին (1906թ. ճարտ. Բ.Մեհրաբյան): Կառուցիչ հորինվածքային կենտրոնը գլխավոր մուտքն է, որ տանում է դեպի նախասրահ: Այստեղից աստիճանները բարձրացնում են դեպի երկրորդ հարկ, որտեղ աշխատասենյակներն են և դահլիճը: Ճարտարապետական տարբեր ոճերի կիրառություն է իրականացվել այս շենքում: Հրապարակի կողմն ուղղված գլխավոր ճակատի ճարտարապետությունն իր համաշափություններով և գեղարվեստական արտահայտչամիջոցների նկարվածքով բնորոշ է կլասիցիզմին, շենքի գլխավոր մուտքի ճարտարապետությունում առկա են Վերածննդի ձևակազմության օրինաչափություններ: Այս շենքն իր ընդհանուր հորինվածքով, ճակատների դեկորի մշակման և գեղարվեստական արտահայտչամիջոցների նուրբ նկարվածքով կարելի է դասել Երևանի և, ընդհանրապես, Անդրկովկասի քաղաքների քննարկվող ժամանակաշրջանի ճարտարապետության հաջողված ստեղծագործությունների շարքը: Երևանի քաղաքային հիվանդանոցը (1910 թ., ճարտ. Պ. Զուրաբյան) այդ տիպի շենքերի առաջնեկն էր քաղաքում: Այն կառուցված է նախկին Աստաֆյան (այժմ՝ Աբովյան) փողոցի վերին՝ քաղաքի այդ տարիներին առավել նպաստավոր կլիմայական գոտու և Գետառի միջև ընկած բավական ընդարձակ հողամասում (որը արխիվում պահպանված գլխավոր հատակագծի գծագրում անվանված է «Երևանի հիվանդանոցային տարածք») և գլխավոր ճակատով ուղղված է դեպի հյուսիս-

արևմուտք: Հատակագծում իիվանդանոցը երեք՝ Երկիարկ բարձրության ծավալների միասնություն է կազմում: Երկու գուգահեռ, անհավասար Երկարության թևերի միջև տեղադրված է երրորդ ծավալը, որով գլխավոր ճակատի առջև ստեղծվել է շքարակ: Գործառույթով թելադրված թևերի նման դասավորությունը միաժամանակ հարստացնում է նաև շենքի ծավալատարածական հորինվածքը, ընդգծված լրացուցիչ՝ գլխավոր մուտքի և աստիճանների ծավալների Ելուստներով: Ներքին տարածությունները և բուժման գործընթացի հետ կապված բոլոր տարրերը կազմակերպված են նպատակահարմար: Ճակատների ճարտարապետությունը համեստ է, առանց դեկորատիվ միջոցների կիրառման: Սակայն բազմածավալ հորինվածքի հարկաբաժան գոտիները, պսակող քիվը, սակավաթիվ որմնասյուներն ու մեծադիր պատուհանների ոիթմը առատ լուսատվեր են ստեղծում, որի շնորհիվ չի զգացվում ճարտարապետության խստությունը: Շենքը կառուցված է բաց շագանակագույն տուֆ քարով [31, Էջեր 162-163]:

Մբ. Նիկոլայ Եկեղեցի: Եկեղեցին կառուցված էր Տաճարային (այժմ՝ Ստեփան Շահումյանի անվան) հրապարակում, քաղաքային Բուվարի դիմաց: Այն խորհրդային իշխանության տարիներին ամբողջությամբ ոչնչացվել է: 1894 թվականին Նիկոլայ II կայսեր օրոք նախագիծը հաստատվում է և երևանաբնակ ոուսների համար սկսվում է Եկեղեցու շինարարությունը, որն ավարտվել է 20-րդ դարի սկզբին (1901թ.): Ոուսական Եկեղեցիների ճարտարապետության ոճն իր արտահայտությունն էր գտել այս տաճարի հորինվածքում, որտեղ ճարտարապետության ավանդույթներն օգտագործվել են մեխանիկորեն: Եկեղեցու հատակագիծն ունեցել է հավասարաթև խաչի տեսք: Պսակված էր հինգ գմբեթներով, որոնց գագաթներին դրված էին ոուսական ոսկեզօծ խաչեր: Եկեղեցու ներքին հարդարանքին լրացուցիչ շքեղություն էին հաղորդում Աստվածաշնչի թեմայով արված մանրանկարներն ու որմնանկարները՝ կատարված հայ և ոուս վարպետների կողմից: Խնամքով ու ճաշակով էր պատրաստված Եկեղեցու կահույքը: Տաճարը կառուցված էր հայկական սև և վարդագույն տուֆով, որը կառուցին մոնումենտալություն էր հաղորդում: Նախատեսված էր ոչ միայն ոուսների, այլև հայ առաքելական

Եկեղեցու հետևորդների համար: Եկեղեցին կառուցելիս հաշվի է առնվել Հայաստանի սեյսմակտիվ վիճակը:

Այս շրջանում Երևանում կառուցված ռուսական Եկեղեցիների ճարտարապետական կերպարը ձևավորվել էր մշակութային փոխազդեցությունների ոլորտում և ներկայանում էր որպես ռուսական ավանդական Եկեղեցու փոխակերպված տարբերակ, որի ձևագոյացումը պայմանավորված էր հայկական գործոններով՝ ռելիեֆ, շինանյութ, կառուցման ավանդական եղանակ, համաչափություններ, զարդարվեստ:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին Երևանում կառուցվում են նոր տիպի հասարակական շենքեր՝ Եկամտաբեր տներ, որոնց առանձնացված սենյակներ կամ ամբողջական հարկեր որոշ հարմարությունների ստեղծումով վերածվում են հյուրանոցների: Քաղաքում նմանատիպ հյուրանոցներն էին «Գրանտ Իոթել», «Օրիանտ», «Լիոն», «Ֆրանսիա», «Մարսել»: Սրանցից ամենահայտնին «Օրիանտ» էր Երկրորդ քաղաքամասում, (այժմյան Կառավարական 2 մասնաշենքի՝ «Սպիտակ տան», նախկին «Սևան» հյուրանոցի բակում): «Գրանտ Իոթել»-ը գտնվում էր Աստաֆյան փողոցի թիվ 7 տանը՝ վերջինիս Երկրորդ հարկում, իսկ առաջին հարկում Ամիրյան-Եղիազարյանի ունիվերսալ խանութն էր: Այս փողոցում էր նաև «Մարսել» հյուրանոցը: Ֆրանսիական անուններով մյուս Երկու հյուրանոցներից «Լիոն»-ը Տեր-Ղուկասովի (Նալբանդյան) փողոցում էր, մյուսը՝ «Ֆրանսիա»-ն Շեյխ-ով-իսլամ կոչված քարավանատան Երկրորդ հարկում: 1902 թ Երևանի հյուրանոցների ընդհանուր թիվը 11 էր: Նշվածներից բացի Երևանի հյուրանոցներից էին նաև «Կովկասը», «Կարաս-չայը», «Սովիտ-Սովիտը», «Երկաթուղին», «Ծաղկեփունջը» [12, էջ 359]:

Այս բոլոր հյուրանոցներն իրենց հորինվածքով և ճարտարապետությամբ նման էին Եկամտաբեր տներին: Առաջին հարկերն իրականացնում էին առևտրական, իսկ Երկրորդները՝ բնակեցման գործառույթներ: Տարբերությունն այն էր, որ հյուրանոցներում խանութների հետ մեկտեղ գործում էին նաև ռեստորաններ և

սրճարաններ: Այս բոլոր հյուրանոցները գտնվում էին մասնավոր տներում, առանց այդ կառույցներին ներկայացվող հատուկ հարմարությունների և շուքի:

Հասարակական շենքերի շարքում էին նաև թատրոններն ու կինոթատրոնները, որոնք հավաքված են հանրային այգում: Դահլիճի և բեմի փոխկապակցվածությունը խորքային է: Բաղնիքների ծավալատարածական լուծումները կանոնական և համաչափ են: Շեշտադրված է կենտրոնական առանցքով տեղադրված գլխավոր մուտքը:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ ձևավորվում է ներկայիս քաղաքաշինական կերպարի կամ կերպարի եռաչափ մոդելի կմախքը (հիմնական ուղիներ, հանգույցներ՝ իրապարակներ): Հետագայում այն կրել է առավելապես քանակական փոփոխություն (աճ), իսկ որակական առումով պահպանվել է: Փոփոխություն է կրել հյուսվածքը (հյուսվածքի տարրերը՝ առանձին հանգույցներ, համալիրներ, կառույցներ: Երևանի զարգացումը կատարվում է մի կողմից տարրական մակարդակի գլխավոր հատակագծով, մյուս կողմից՝ խանության ժամանակներից մնացած ինքնակազմակերպման սկզբունքով, ինչն էլ հանգեցնում է երկու տարրեր քաղաքների ձևավորվելուն, մեկը՝ վերահսկվող, մյուսն՝ անվերահսկելի: Այսպիսով, սկսվում է քաղաքի կենտրոնախույս կառուցվածքի ձևավորումը. մի շարք կենտրոնամերձ գոտիներ (Կոնդ, Զորագյուղ, Շիլաչի, Քարհանք) չեն ընդգրկվում ընդհանուր կերպարում:

### **Կերպարի դարածական մոդելը**

- Կանոնավոր ցանցի ձևավորում,
- առանձին կետային կողմնորոշողների (հիմնականում եկեղեցիներ) բարձր կերպարայնություն՝ ֆոնային միահարկ, երկիհարկանի հարթ տանիքներ ունեցող տներից (գծային-փողոցային կառուցապատում) առանձնացվածության շնորհիվ,
- ուղաձիգ նոր կողմնորոշողների (գմբեթներ, զանգակատներ) կառուցման և ընդհանուր հարկայնության աճի հետ քաղաքի կողմնորոշելիության համակարգում բնական լանդշաֆտի կարևորության աստիճանաբար նվազում,

- հստակ հանգույցների ձևավորում, որոնցից շատերը (Չալ խանի հրապարակ, այսօր՝ Սախարովի, Մեծ հրապարակի հանգույցի մի հատված, այսօր՝ Մյասնիկյան և Ռուսաստանի հրապարակներ, Բուլվարի հանգուցային կետեր, այսօր՝ Շահումյան և Հանրապետության հրապարակներ) թամանյանական հատակագծի հիմնական հանգույցները ձևավորելու հիմքը հանդիսացան (հավելված 15):

### **Կերպարի պատկերային մոդելը**

Մինչև 19-րդ դարի վերջը քաղաքային համայնապատկերը ձուլված էր լանդշաֆտի հետ՝ չունենալով առանձնակի արտահայտչականություն: Միայն դոմինանտ եկեղեցական գմբեթներն ու մզկիթներն էին ստեղծում որոշակի շեշտադրումներ: Արդեն 1990-ներից քաղաքի համայնապատկերային ուրվագիծը ձեռք է բերում որոշակի գծվածություն: Ստեղծվում են նոր կառույցներ՝ ճակատային համայնապատկերային բարձր աստիճանով: Զեսպորվում է կերպար՝ ունենալով ընդհանրականության բարձր աստիճան: Արդեն 20-րդ դարի սկզբում Երևանի ճարտարապետության մեջ գծագրվում է գեղագիտության ընդհանրական լեզու: Այդ շրջանի առանձին կառույցներ նույնացվում են Երևանի քաղաքային ճարտարապետության հետ՝ ունենալով որոշակի ոճական ինքնություն (հավելված 16):

### **Եզրակացություններ երկրորդ գլխի վերաբերյալ**

1. Երևան քաղաքի պարսկական շրջանի ճարտարապետական կերպարը ներկայացնում էր սոցիալական խավերի տարանջատվածությունը՝ արտահայտված մոնումենտալ և ժողովրդական ճարտարապետության օրինակներով: Քաղաքի համայնապատկերում՝ բնական լանդշաֆտի շնորհիվ ակնառու էր քաղաքամասերի առանձնացվածությունը:

Պարսկական շրջանի Երևանի ճարտարապետական կերպարի առանձնահատկություններն են.

- հստակ ուղիների բացակայությունը (անկանոն ցանց),
- հանգույցների և ուղիների տարբերակելիության անհնարինությունը,
- կերպարային կողմնորոշողների առկայությունը (բերդ, Եկեղեցիներ, մզկիթներ)՝ ֆոնային միահարկ հարթ տանիքներով միատիա տներից առանձնացվածության շնորհիվ,

- կառուցապատման ցածր խտության և ցածրահարկ բնակելի շենքերի առկայության պայմաններում՝ բնական լանդշաֆտի դերի գերակայությունը:
2. Ուսական շրջանում նորամուտ ոճերը՝ Էկլեկտիկան, մոդեռնն ու նեոկլասիցիզմը ենթարկվում են որոշակի ստեղծագործական փոխակերպման, և այդ ընթացքի հիմնական գործոնը՝ հայկական ճարտարապետության լակոնիկությունն ու տրամաբանվածությունն է՝ հրաժարումը, Էկլեկտիկային բնորոշ տարբեր դասական ոճերի խառնուրդից, հարդարանքի տարրերի զայվածությունը, ճակատների հզոր սյունաշարերի և ճակտոնների զարդարման մերժումը։ Դրանք նոր մեկնաբանություն են ստանում, որտեղ կարևորվում է լայնորեն օգտագործվող հիմնական շինանյութի՝ բնական քարի (հատկապես սև տուֆ) դերը, որն իր գունային, ֆակտուրային և ֆիզիկամեխանիկական հատկանիշներով և մշակման եղանակով (ռուստիկ) զգալի ազդեցություն է նոր Երևանի ճարտարապետության ձևավորման և զարգացման վրա և ինքնատիպ գեղագիտություն է մշակում։
3. Ուսական (ցարական) շրջանի ճարտարապետական կերպարի առանձնահատկություններն են.
- գծային կողմնորոշման համակարգի ձևավորումը,
  - քաղաքի կենտրոնական կորիզի (բուն քաղաքի կենտրոն) ներքին եզրագծերի վերացումը, այդպիսով՝ առանձին ներքին շրջանների տարածությունների ընդլայնումը,
  - բարձր համալրվածություն ունեցող ճարտարապետության զարգացումը,
4. Ուղաձիգ նոր կողմնորոշողների (գմբեթներ, զանգակատներ) կառուցման և ընդհանուր հարկայնության աճին զուգընթաց շեշտվում է առանձին օբյեկտների դիտողականության կարևորությունը՝ քաղաքի կողմնորոշելիության համակարգը հատակագծայինից աստիճանաբար վերածվելով եռաչափի (կերպարը կերտվում է ըստ եռաչափ մոդելի):

# ԳԼՈՒԽ 3

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Խորհրդային ժամանակաշրջան

Թեպետ Երևանը որպես քաղաք (տվյալ ժամանակաշրջանի հասարակական հարաբերություններին և կարգավիճակին համապատասխան) ձևավորվել է ավելի վաղ՝ խանական շրջանում, որպես արևելյան քաղաքի մոդել, նրա քաղաքային ճարտարապետությունն ու տարածքները համակարգային և համալիր մոտեցմամբ սկսել են ձևավորվել Ռուսական կայսրության և հատկապես խորհրդային կարգերի հաստատումից հետո: Այս ժամանակահատվածում տեղի ունեցավ քաղաքային ճարտարապետության, միջավայրի կերպարի, մասնավորապես ճարտարապետական կերպարի կտրուկ փոփոխություն, վերածնավորում:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոխակերպումների և քաղաքի տնտեսաքաղաքական նոր կարգավիճակով (Սովետական Հայաստանի մայրաքաղաք) պայմանավորված, ք. Երևանը վերապրեց տարածքային ու ժողովրդագրական աճի նոր փուլ: Քաղաքի փոխակերպումն ու քաղաքակենտրոնացումը մեծապես կախված էին խորհրդային տնտեսությունից ու պլանավորումից, որոնք տարվում էին Խորհրդային Միության ռազմավարական, գաղափարախոսական երկխոսության բոլոր սկզբունքներին հավատարիմ: Խորհրդային ժամանակաշրջանը ք. Երևանի համար քաղաքաշինության մեջ նախադեպը չունեցող քաղաքակենտրոնացման և քաղաքային մշակույթի զարգացման շրջան էր [29]:

#### 3. 1. 1. Հիմնադրման ժամանակաշրջան (1920-1940-ական թթ.)

Խորհրդայնացման առաջին տարիները՝ անցումային շրջանը (պետության և հասարակության կառուցվածքի բոլոր շերտերում ու ոլորտներում), հանգեցրին ճարտարապետական կերպարի կտրուկ փոփոխության: Զանգվածային

վերակառուցումները և քաղաքային հին շերտերի վերացումը կերպարաստեղծ հիմնական գործոններից էին: Քաղաքաշինական և ճարտարապետական հայեցակարգի իրականացման մեջ առանցքային դեր ուներ Ա. Թամանյանը, ով հիմք դրեց մի ամբողջ շրջանի ճարտարապետական ուղղվածության զարգացմանը [44, էջ 7]: Թամանյանական Երևանի ճարտարապետության մեջ գեղարվեստականության գաղափարների կիրառումն առավելապես դրսևորվեց հենց 1920-ականներից՝ նեոդասական, ազգային-ավանդական ոճական առանձնահատկությունների տեսքով: Խորհրդային կարգերի հաստատման շրջանը՝ 1920-ական թվականները, բնորոշվում են որպես որոնման փուլ [39, էջ 35]: Երկրի հետպատերազմյան անվերահսկելի իրավիճակը, կառավարման և տնտեսական համակարգերի հաջորդական փոփոխումը (ռազմական կոմունիզմ, նոր տնտեսական քաղաքականություն, ստալինյան ամբողջատիրական համակարգ), նոր գաղափարախոսությունները (սոցիալիստական, կոմունիստական) ազդում էին ճարտարապետական հայեցակարգերի կայացման վրա: Ժամանակի սոցիալիստական և ուսուպիստական գաղափարախոսությունների վերարտադրությունն էր կոնստրուկտիվիստական ճարտարապետությունը: Այն գերակշռող չդարձավ ընդհանուր կերպարի ձևավորման մեջ, թեպետ իր հետքը թողեց 1960-ներին ձևավորված մոդեռնիստական ճարտարապետության վրա: Իր բնույթով լինելով գծային ռացիոնալիստական (որպես սովետական կոնստրուկտիվիզմի տարատեսակ)՝ այն կրում էր տեղական մի շարք առանձնահատկություններ:

**Քաղաքաշինություն:** Ալեքսանդր Թամանյանի անվան հետ է կապված հայ նոր ճարտարապետության հիմնադրումն ու զարգացումը, Հայաստանի քաղաքների և հատկապես Երևանի նախագծումը, հայ իրականության մեջ քաղաքաշինության՝ որպես գիտության ստեղծումը:

Ակադեմիկոս Ալ. Թամանյանը 1920-ականների սկզբին 50 հազարից էլ պակաս բնակչությամբ Երևանի գլխավոր հատակագիծը կազմեց մոտ 150 հազար բնակչության հաշվով: Սակայն շատ կարճ ժամանակահատվածում արհեստական

գերաճի հետևանքով Երևանի բնակչության թիվը գերազանցեց նրա կանխատեսումը: Անհրաժեշտ էր մայրաքաղաքը քաղաքաշինական առումով ապակենտրոնացնել: Երևանի Գլխավոր հատակագծի ստեղծման ընթացքում Շամանյանը լայնորեն օգտագործել է արևմտաեվրոպական «քաղաք-այգու» չափանիշներն ու դրույթները, որոնք առաջարիել էր Հովարդը: Նա իր տեսակետերում խստորեն քննադատության էր ենթարկում եվրոպական խոշոր քաղաքներն ու դրանց համատարած անկազմակերպ կառուցապատումը: Նա գտնում էր, որ մարդկանց քաղաքից կարելի է ետ պահել միայն ստեղծելով ավելի մեծ ձգողականություն ունեցող նոր տեսակի բնակավայրեր՝ քաղաք-այգիներ, որոնք իրենց մեջ պետք է համատեղեն գյուղական և քաղաքական կյանքի առավելությունները: Քաղաք-այգու հատակագիծը Հովարդը պատկերում էր շրջանի տեսքով, փողոցների շառավղային-օղակաձև դասավորությամբ: Կենտրոնում գտնվում էին հանրային շենքերն ու պուրակը: Բնակելի տները մեկ-երկու հարկանի էին՝ անհատական հողամասերով: Քաղաքի եզրում տեղադրված էին արդյունաբերական ձեռնարկություններն ու երկաթուղին: Տնտեսապես ինքնավար քաղաք-այգիները պետք է կառուցվեին բնության գրկում և իրենց մեջ օրգանապես միավորեին քաղաքային և գյուղական կյանքի բոլոր առավելությունները: Դրանք պետք է կառուցվեին մեծ քաղաքներից ոչ շատ հեռու և իրենց մեջ ներքաշեին քաղաքների անընդհատ ավելացող բնակչության որոշ մասը՝ թեթևացնելով մեծ քաղաքների վիճակը: Հատակագծման սկզբունքը նույն էր՝ քաղաքի կենտրոնում պետք է լինեին գրոսայգին և գլխավոր հասարակական ու մշակութային շինությունները և համատարած կանաչապատումը [70]:

Շամանյանը վերցրել էր միայն քաղաք-այգու հատակագծման սկզբունքները՝ չշոշափելով Է. Հովարդի առաջարիած սոցիալական դրույթները, որոնք չեն համապատասխանում սոցիալիստական գաղափարախոսությանը: Այդ սկզբունքները միահյուսված էին Հայաստանի յուրահատուկ պայմանների և տեղագրության հետ: Նոր քաղաքը կառուցվեց հնի տեղում՝ շտկվեցին գոյություն ունեցող փողոցների ուղղությունն ու չափերը՝ լրացվելով անհրաժեշտ նոր տարածքներով ու փողոցներով: Դեռևս 19-րդ դարի հատակագծի ուղղանկյունաձև ցանցը պահպանվել էր և ավելացել

մասշտաբներով, հրապարակն ու բոլվարների օղակը կենտրոնական մասում միանում էին Գլխավոր պողոտայի անկյունագծով, երկրորդ մեծ հրապարակը՝ Թատերականը, ավելի հյուսիս էր ընկած և միանում էր կենտրոնական հանգույցին Հյուսիսային Պողոտայով: Թամանյանի քաղաքը բաժանված էր «Վարչական», «քուհական», «մշակութային», «արդյունաբերական» և «թանգարանային» գոտիների: Յուրաքանչյուրն ուներ հորինվածքային կենտրոնով, փոքր հրապարակներով և պուրակներով իր հատակագիծը: Քաղաքի բոլոր գոտիները միանում էին միմյանց և կենտրոնին ամենակարճ ճանապարհներով [63, էջեր 26-27]: Ընդ որում, գոտիների ինքնուրույնությունը ոչ միայն չէր խաթարում քաղաքի ամբողջականությունը, այլ ընդհակառակը՝ դարձնում էր այն ասես կենդանի մարմին: Քաղաքի ամբողջական հորինվածքն այսպիսին էր. նրա երկու գլխավոր տեղագրական հանույթները, դրանց միավորող Հյուսիսային պողոտան և այս ամենը դիրքային առումով պիտի ուղղված լինեին դեպի Արարատը: Լուծվեցին նաև քաղաքի կառուցվածքային կազմի խնդիրները: Կարևորված էին քաղաք-այգու համապիտանի արժեք ունեցող հատկանիշները: Դրանցից էին քաղաքի տարածքի գործառութային գոտևորումը, գեղագիտական բարձր մակարդակը և վերջապես կանաչի առատությունը քաղաքում և նրա շուրջը, որի առկայությունը պակասեցնում էր փոշու քանակն ու քամու հզորությունը: Թամանյանը նախատեսում էր կրկնակի գաղոն, մայթը կանաչով էր անջատվում շենքերից և տրանսպորտային ուղիներից: Թամանյանի «արևային» քաղաքն ուներ ուղղահայաց կառուցվածք: Կառավարության շենքն ու Օպերան երկու դոմինանտն էին, որոնց շուրջը քաղաքի մյուս բոլոր կառուցներն էին: Սակայն գլխավոր դոմինանտը, գլխավոր ուղղահայացը Արարատն էր: Հետագայում բարձրահարկ շենքերի կառուցումը խախտեց այն հիմնական գաղափարը, որը Թամանյանը դրել էր իդեալական քաղաքի կառուցման հիմքում: Երևանի՝ դեպի վեր կառուցումը սիսալ է, այդպես կառուցում էին ցարական ժամանակաշրջանում, նպատակ ունենալով փակել Արարատի հեռանկարը: Երևանի գլխավոր ուղղությունը դեպի առաջ է, այսինքն դեպի Արարատը:

Անկախություն, ժողովրդավարություն, ազգային ավանդույթների պահպանում, ժողովրդի միասնականություն ու պատմական տարածքների ամբողջականություն-սրանք էին այն հիմնական տեսակետները, որոնք իրենց արտահայտությունը գտան թամանյանական հատակագծում: Թամանյանի Երևանի տեսլականը անցյալի լավագույն ավանդույթներով կառուցված, ազգային ռիմագիծ, գեղագիտական բարձր մակարդակ ունեցող, կանաչապատ ու հարմարավետ քաղաքի կերպարն էր:

Երևանի տարածակառուցվածքային նախագծման առանձնահատկությունը քաղաքի տարբեր մասերի միջև միատարրության ներդնումն էր՝ գործառույթների տարանջատմամբ (բնակելի, արդյունաբերական և հանգստի գոտիներ), կենտրոնի ու ծայրամասերի տարածքային անընդհատության ապահովմամբ [29]:

1930-50 թթ. ք. Երևանում հիմնական շինարարությունն ընթանում էր ոչ թե քաղաքամերձ նոր տարածքների յուրացնելով, այլ արդեն եղած կառուցապատումների շրջանում, ավելի խիտ ու բարձրահարկ շինարարություն իրականացնելով: Ներքին Շենգավիթ և Զարբախ թաղամասերում արդյունաբերական ձեռնարկություններին կից վեր խոյացան բանվորական թաղամաս-շենքեր [39, էջեր 64-64]: Շինարարության մեջ սկսեցին կիրառվել երկաթետոնե բլոկները, որոնք ավելի էժանացնում ու արագացնում էին կառուցումը: 1940-ներին, հայրենադարձների նոր հոսքը Հայրենիք խթան հանդիսացավ բնակելի նոր կղզյակների առաջացման՝ Այգեստան, Նոր Կիլիկիա, Նոր Ջեյթուն, Նոր Արեշ:

**Ճարդարապետությունը:** Երևանի քաղաքային ճարտարապետության կայացումն ընթանում է հայ ճարտարապետության ծավալատարածական և արխիտեկտոնիկ առանձնահատկությունների, մանրամասերի անկրկնելիության և բազմազանության սկզբունքի նոր մեկնաբանությամբ:

Այդ ժամանակ սկսվում է քաղաքի համալիր վերակառուցումը: Նոր շենքերը (առավելապես նեոդասական) քաղաքաշինական կառուցվածքում կրում էին տեղեկույթի պարզության բարձր մակարդակ, որը հիմնված էր գլխավոր և երկրորդական փողոցների հեշտ ընկալվող դասավորության վրա: Անհատական նախագծային մոտեցումների և յուրաքանչյուր կառուցում որոշակի ոճական

յուրահատկությունների արտահայտման շնորհիվ նոր ձևավորվող քաղաքային միջավայրն ու ճարտարապետությունը հիմնակետեր հանդիսացան հետագա տարիներին քաղաքում կառուցապատման և վերակառուցման քաղաքականության ձևավորման համար և դարձան կերպարի կերտման ամենավառ շերտը [39, էջ 48-51]: Ճարտարապետության յուրաքանչյուր միավորի ինքնատիպությունը հանգեցնում էր ընդհանուր միջավայրի և համայնապատկերի բազմակերպության բարձր աստիճանի: Այն ներկայանում էր որպես նմանօրինակային (անալոգային) ձևի ոիթմիկ ձևափոխություններ, բայց արդյունավետ կերպով բարձրացնում էր տեղեկույթի բարդությունը:

Տեսողական տեղեկույթի առումով ռացիոնալիզմի նպատակն էր հասնել կառուցապատ միջավայրի ընկալման պարզեցմանը [27]:

Քաղաքաշինական համակարգում կարևորվում էր բնակելի տունը: Տարածության մեջ միավորի դերը ստանձնած բնակելի շենքերը դառնում են կառուցապատման տարբեր գործառույթները միավորող, դրանք քաղաքի համալիրում կազմակերպող, փողոցի հագեցած միջավայրն ապահովող և ինքնուրույն համալիրներ ձևավորող ճարտարապետական կառուցներ: Դրանք ոչ միայն կազմավորում են քաղաքի փողոցները, այլև՝ թաղամասերը [2]: Ձևավորվում է պարագճային-թաղամասային կառուցապատման սկզբունքը: Բազմաթիվ բնակչության շենքերը տեղադրվում են թաղամասերի պարագծով՝ սկզբնավորելով փողոցների վերահատակագծման և դրանց նոր մասշտաբ հաղորդելու գործընթացը: Շենքերի խոշորացմամբ և հարկայնության բարձրացմամբ (մինչև 4-5 հարկ) խոշորանում է նաև բակային տարածության մասշտաբը: Կառուցապատման մասշտաբի խոշորացումը իր արտացոլումն է գտնում Լենինի (ճարտ.' Ն. Բունիաթյան), Հոկտեմբերյան պողոտաներում (ճարտարապետներ՝ Մ.Գրիգորյան և Ս. Սաֆարյան) իրականացված բնակելի համալիրներում՝ որոնց ճակատային լուծումներն արտահայտում են մայրուղուն հարող բնակելի տան ճարտարապետության երկակի գործառույթների միասնությունը՝ իբրև խոշոր համույթի բաղկացուցիչ և իբրև բնակելի տան ներքին կառուցվածքի մարդկային մասշտաբի ճշմարտացի արտացոլում: Երևանում

թաղամասերի ներքին խիտ կառուցապատումը դժվարացնում էր քաղաքաշինական առաջադիմական հնարների կիրառումը՝ թելադրելով «փողոց-միջանցք» հնացած համակարգի իրագործումը:

Երևանի բնակելի թամանյանական ճարտարապետության հորինվածքն առանձնանում էր մասնատվածության բարձր աստիճանով, համաչափ լուծումներով, չափային շարքերի առկայությամբ (սյունաշարեր, կամարաշարեր, որմնասյուներ) և հավասարակշռությամբ: Հաճախ ճակատներն ունեին հորիզոնական տրոհվածությունը: Ստորին հատվածները կամարների կամ կամարաձև պատուհանների շարք էին: Մասնատումները հանգեցնում էին հորինվածքի խոշոր մաշտաբների, այն ամբողջանում էր պարզ ծավալների համադրության մեջ, իսկ դրա արտահայտչականությունը առանձին տարրերի՝ զարդաքանդակների, քարի շարվածքի առանձնահատկությունների գեղագիտության մեջ էր, որոնք պարզ ճարտարապետությունը (մինիմալիստական, ռացիոնալիստական որոշ առումով) դարձնում էին քանդակային արվեստի գործ: Շեշտը հաճախ դրված էր հորինվածքի կենտրոնական հատվածի (մուտքի) վրա, որը հանդիսավորություն էր հաղորդում կերտվածքին [28]:

Թամանյանական Երևանի ճարտարապետական կերպարի կերտման նախասկիզը դոմինանտներն էին Կառավարական տան և Օպերայի հանրային շենքերը:

Ալեքսանդր Թամանյանը յուրաքանչյուր շենք նախագծելիս հաշվի էր առնում հայկական ճարտարապետության հազարամյա փորձը և շենքերը դիտում միջավայրի մեջ: Հրապարակի հորինվածքային լուծման թելադրող գործոններն են Հյուսիսային և Գլխավոր լայն պողոտաները: Սրանցից առաջինը խաչվում էր Կառավարական տան կենտրոնական մասի հետ և միանում Հարավային (ներկայիս Տիգրան Մեծի) պողոտային, իսկ երկրորդը՝ խաչվում է Հյուսիսայինի հետ հրապարակից դուրս: Տարածական այս համակարգը ենթադրում էր նաև հորինվածքային համապատասխան կապ: Այդ նպատակով Թամանյանը Կառավարական տան հորինվածքում նախագծեց մոտ 62 մետր բարձրություն ունեցող աստիճանավոր

թմբուկի ծավալ: Վերջինս փոխադարձ կապ էր հաստատում Կառավարական տան և կառույց միավորվում էին տարածականորեն: Օպերայի թատրոնի միջև: Որպես հետևանք՝ մայրաքաղաքի համար կարևոր երկու կառույց միավորում էին տարածականորեն:

Կառավարական տունն (այն ժամանակ կոչվում էր Հռոժողկոմատի շենք) առաջին շենքն է, որ կառուցվել է Ալ. Թամանյանի՝ 1924թ. քաղաքի գլխավոր հատակագծով՝ նախատեսված կենտրոնական ձվածկ հրապարակում, և դրանով իսկ իրենով պայմանավորել է հետագայում կառուցված շենքերի բարձրությունը, հորիզոնական ջլատումները, մասշտաբը, ոիթմը և ոճական առանձնահատկությունները: Կառավարական տան հատակագծային-հորիզոնվածքային սկզբունքը պարզ է, գործառական առումով՝ նպատակահարմար, կենտրոնական առանցքային միջանցքների երկու կողմում տեղադրված աշխատասենյակներ՝ նիստերի մեծ ու փոքր դահլիճների, ճեմասրահների և աստիճանավանդակների ներդաշնակ համադրությամբ: Ճակատների մշակումները տարբեր են՝ համաձայնեցված դրանց քաղաքաշինական դերին և շրջակա կառուցապատմանը: Կորագիծ հատակագծով հրապարակահայաց գլխավոր ճակատը մշակված է մոնումենտալ սյունափնջերի վրա հենվող հինգ կամարների ոիթմով, որի վրայով ծգվում է բաց սյունասրահի գոտին: Հյուսիսային կողմում այն հարում է ուղղանկյուն ռոտոնդայով պսակված աշտարակին: Հրապարակին հարող փողոցներում ճակատների մշակումն ավելի պարզ է և զուապ, սակայն այս տարբերությունը հակադրություն չի ենթադրում: Շնորհիվ անկյունային աստիճանական և սահուն անցումների, կառույցի ողջ հորինվածքը ընկալվում է միասնական և հարմոնիկ: Հեղինակը դեկորատիվ մշակումներով ստեղծագործաբար օգտագործել է հայկական միջնադարյան ճարտարապետության (Տեկոր, Դվին) և մոնումենտալ քանդակագործության տարրեր: Թամանյանը այս շենքում կարողացել է համադրել դեկորատիվ նույնական մի կտորի ոիթմիկ կրկնության ռուսական դասական ավանդույթը դեկորի բազմազան ձևերի հայկական ավանդույթի հետ՝ մշակելով

սեփական հարուստ ճկուն լեզու [63, էջ 34]: Շենքը կառուցված է վարդագույն ֆեղիտային տուֆով՝ բազալտե գետնախարսխի վրա:

Քաղաքաշինական մյուս դոմինանտում՝ Օպերայի (այն ժամանակ ժողոտան) շենքում նույնպես վառ կերպով արտահայտված են Թամանյանի գեղագիտական ճաշակն ու մոտեցումները. ճակատային հարթության մեջ ծավալային ընկալում ձևավորելը՝ մանրամասների, խորշերի, լուս-ստվեր խաղի միջոցով, հարստացնելով հարթ ճակատը և տալով դրան բաղադրյալ, համալիր որակներ՝ հակադրվելով մոնոտոնությանը և միևնույն ժամանակ դրանք պահպանելով հորինվածքային կարգավորվածության մեջ: Այս ամենը միաձուված էր զարդարանդակային իրականացումներով:

1932-1945 թվականներին Երևանը համալրվում է կերպարաստեղծ նոր շենքերով, որտեղ նկատվում են Թամանյանի ստեղծած կերպարների զարգացման և բազմազանման միտումներ: Այդ գործընթացը կարելի է տեսնել արդեն 1930-ական թթ. սկզբին, Երևանի կենտրոնական հանրախանութի (Ա. Ահարոնյան, Մ. Մազմանյան, Հ. Մարգարյան, Գ. Քոչար), «Մոսկվա» կինոթատրոնի (Տ. Երկանյան, Գ. Քոչար), «Արարատ» տրեստի գինու մառանների (Գ. Քոչար, Ռ. Խորայելյան) և այլ բազմաթիվ հանրային և բնակելի շենքերի ճարտարապետության մեջ: «Մոսկվա» կինոթատրոնի ճարտարապետության մեջ հաջողված կարելի է համարել տարբեր գույների քարերի ներդաշնակ համադրումը, որը ինչպես կառուցին, այնպես էլ միջավայրին կենսախնդություն է հաղորդում [35, էջ 184]:

Նորարարական, փորձառական հայեցակարգերից անցում է կատարվում դեպի դասականի (նեոկլասիցիզմ, ստալինյան ամպիր): Այս անցումային շրջանի կառուցներն աչքի են ընկնում արհեստականորեն ավելացված դասական և ավանդական մոտիվներ կրող տարրերով (թեպետ ճարտարապետական հորինվածքը շարունակում էր կրել ռացիոնալիստական տարրեր):

### **Կերպարի դարածական մոդելը**

- Պաշտամունքային կառուց-կողմնորոշիչներին փոխարինելու են գալիս նոր կողմնորոշողները՝ վարչական, մշակութային կառուցները (Կառավարական տուն, Օպերա):
- Առավել ընդգծվում է գծային կողմնորոշման համակարգի նշանակությունը՝ հատկապես կենտրոնում՝ ընդհանուր հարկայնության միջնացմամբ և պարագծային-բակային կառուցապատմամբ պայմանավորված: Առանձին կողմնորոշիչների դերը հետզհետեւ թուլանում է՝ մեծանալով ուղղորդող ուղիների դերը:

Ըստ ոճական առանձնացվածության դասակարգելի կողմնորոշող օբյեկտները ծևավորվում են ճարտարապետական երկու հիմնական շերտերի հակադրության արդյունքում՝ մինչխորհրդային միահարկ, երկիարկանի ժողովրդական (որպես ֆոնային կառուցապատում) և խորհրդային շրջանի մոնումենտալ (հիմնականում մինչև հինգ հարկ) (հավելված 17):

Ճարտարապետության մեջ լինելով որոնման փուլ՝ դրսևորվում էին ճարտարապետների անհատական ձեռագրերը: Ճարտարապետական նոր շերտի բազմազանության և նախորդի (մինչխորհրդային) հետ հակադրության շնորհիվ քաղաքային միջավայրում հայտնվում էին իրենց ձևի մեջ ինքնատիպ եզակի կառուցներ (հավելված 18):

### **Կերպարի պարկերային մոդելը**

Ընդհանուր համայնապատկերային ուրվագծերի սիմետրիան և ասիմետրիան - Մինչև 1930-ների կեսերը քաղաքում իշխում էր ասիմետրիկ համայնապատկեր: Նախախորհրդային շերտի անականոն ուրվագիծը դեռևս մասն էր կազմում ընդհանուր համայնապատկերի՝ նոր չորս և հինգ հարկանի կառուցների հետ կազմելով ասիմետրիկ պատկեր: Արդեն 1930-ների վերջերից ձեռք է բերում որոշակի կարգավորվածություն:

Առանձին կառուցների ուրվագծի սիմետրիա-ասիմետրիա - հիմնականում սիմետրիկ էին, բացառությամբ որոշ կնստրուկտիվիստական կառուցների (հավելված 19):

Ճարտարապետության մեջ կոնստրուկտիվիզմ և նեոկլասիցիզմ ուղղությունները առանձնանում էին նաև ճակատների դետալների համալրվածության (հավելված 20) և մասնատվածության յուրահատկությունների շնորհիվ (հավելված 21) :

- Նեոկլասիցիզմ - դետալներով համալրված ճակատներ, որը մի տեսակ խորհրդանիշն էր նոր ազգայնականության, ազգային և պետական զարթոնքի ու բարգավաճման: Զևային առումով այդ հորինվածքների համար նախատիա էին ծառայում ռուսական նեոկլասիցմն ու հայ միջնադարյան Եկեղեցական ճարտարապետությունը:
- Կոնստրուկտիվիզմ - համալրվածության նոր հիմնավորում՝ իմաստային և գաղափարական առումով: Հորինվածքային տարրերի համալրվածության կամ բարդության չափորոշիչները սկսեցին ծևափոխվել՝ դրանց դասական դարձած պատկերացումներն ընկալվելով որպես դեկորատիվիզմ:

#### *Գեղարվեստական կամ զարդարանքային դեղալներ*

Ճարտարապետությունը գտնվելով որոնման փուլում՝ հիմնվում էր գեղարվեստական տարրեր հարացուցերի վրա.

- պատմականություն, որը պատմական-էթնիկ մշակույթի մոտիվների վերարտադրությունն էր, երբեմն Էլ՝ կոկրնօրինակում:
- ոճականություն՝ օտար մշակույթում կերտված, այլ համատեքստերից ներմուծած և տեղայնացված (հիմնականում կատարվում էին բարձր պրոֆեսիոնալիզմով՝ ի տարրերություն հետագա ժամանակաշրջանների մի շարք կառուցների):  
Ընդհանուր առմամբ այս շրջանի կերպարն առանձնանում էր գեղագիտության ընդհանրականության ցածր աստիճանով՝ արտահայտվելով ճարտարապետական առանձին կառուցներում:

#### **3.1.2. Հասդարման ժամանակաշրջան (1950-1960-ական թթ.)**

Երկրի հետպատերազմյան անվերահսկելի իրավիճակը, կառավարման և տնտեսական համակարգերի հաջորդական փոփոխումը (ռազմական կոմունիզմ, նոր

տնտեսական քաղաքականություն, ստալինյան ամբողջատիրական համակարգ), նոր գաղափարախոսությունները (սոցիալիստական, կոմունիստական) ազդեցություն էին ունենում ճարտարապետական հայեցակարգերի կայացման վրա: Ժամանակի սոցիալիստական և ուսուպիստական գաղափարախոսությունների վերարտադրությունն էր կոնստրուկտիվիստական ճարտարապետությունը: Այն գերակշռող չդարձավ ընդհանուր կերպարի ձևավորման մեջ, թեպետ իր հետքը թողեց 1960-ներին ձևավորված մոդեռնիստական ճարտարապետության վրա: Բազմաթիվ նախագծեր մնացին հայեցակարգի մակարդակում: Իր բնույթով լինելով գծային ռացիոնալիստական (որպես խորհրդային կոնստրուկտիվիզմի տարատեսակ՝ հայկականը կրում էր տեղական մի շարք առանձնահատկություններ):

1950-թվականներից սկսած թամանյանի կողմից ձևավորված ազգային նեոդասական ճարտարապետությունը նոր որակներ է ստանում: Մեծանում է իմաստակիր տարրերի դերը, հաճախ են կատարվում հղումներ դեպի ավանդականը: Մատենադարանի շենքը (ճարտ.՝ Մ. Գրիգորյան) դրա լավագույն օրինակներից է, որտեղ գերակշռում են միջնադարյան հայկական ճարտարապետության մոտիվները, իսկ դասական տարրերը գրեթե բացակայում են [51, էջեր 22-24]: Մատենադարանի շենքը նաև միջավայրաստեղծ համալիր է և քաղաքի այս տարածքի դոմինանտը, որը դիմակայել է ժամանակի բոլոր մարտահրավերներին և նվաճել այդ կարգավիճակը [34, էջ 251]:

Հետպատերազմյան շրջանում կառուցվել են հասարակական շենքերի համալիրներ, որոնք Երևան քաղաքի կերպարաստեղծ կոթողներ են: Ամենախորհրդանշականն այդ շարքում իր ավարտուն տեսքն ստացած Լենինի (այժմ Հանրապետության, որի կառուցապատումն ավարտվել է հիմնականում 1958 թվականին) հրապարակն է: Այստեղ հայկական ճարտարապետության նվաճումները մարմնացած են մոնումենտալ շենքերի կերպարներում, որտեղ ակներն է գեղագիտությունը՝ հատուկ վերաբերմունքը հայկական ճարտարապետական ժառանգության նկատմամբ: Համակառուցի առաջնեկը՝ Կառավարական տունը, կանխորոշել է ապագա շենքերի ծավալատարածական հորինվածքն ու ոճական

կերպարը: Պատի՝ որպես շենքի կոնստրուկտիվ և գեղարվեստական տարրի պահպանումը Կառավարական տան ճարտարապետության ազգային բնույթի կարևոր հատկությունն է: Զների անկրկնելիության ու գեղարվեստական բազմազանության սկզբունքը, որ բնորոշ է հայկական ճարտարապետությանը, ակնհայտ է ճակատների առանձին հատվածների լուծումներում, խոյակների ու ռելիեֆների նկարվածքներում: Կառավարական 2-րդ շենքը, ինչպես և հրապարակի մյուս կառույցները («Արմենիա» հյուրանոց, Արհեստակցական միությունների ու Կապի նախարարության միացյալ շենքը, թանգարանների շենքը), ճարտարապետական ձևերի բնույթով, ընդհանուր բարձրությամբ, ուրվագծով, ծավալային շեշտերով, ճակատային քայլքերի չափերով ներդաշնակ են Կառավարական տանը, որով և պայմանավորվում է հրապարակի հորինվածքային և ոճական միասնությունը: Մայրաքաղաքի հանրային կենտրոնի ճարտարապետական-գեղարվեստական կերպարը հարստացնում և ամբողջացնում էր Լենինի բարձրարվեստ արձանը (քանդակագործ Ս. Մերկուրով, ճարտարապետներ՝ Ն. Փարեմուզովա և Լ. Վարդանյան), որը անկախության տարիներին ապամոնտաժվեց: 1996թ. բարբարոսաբար, ինչպես նշում են որոշ հետազոտողներ, քանդվել է նաև պատվանդանը՝ որպես ատելի գաղափարախոսության հավաքական մարմնացում [57, էջ 74], չնայած, որ կոթողը գեղարվեստական մեծ արժեք էր ներկայացնում, ինչպես նաև խորհրդային ժամանակի ք. Երևանի խորհրդանշաններից մեկն էր:

Հետպատերազմյան Երևանի ճարտարապետական կերպարն ամբողջանում էր նաև մի շարք այլ հանրային շենքերում. Երևանում՝ <ԿԿ Կենտկոմի շենքը (ճարտ.՝ Մ. Գրիգորյան), Կենտրոնական ծածկած շուկան (ճարտ.՝ Գ. Աղաբաբյան, կոնստրուկտոր՝ Հ. Առաքելյան), <ՍՍՀ ԳԱ նախագահության շենքը (ճարտ.՝ Ս. Սաֆարյան), Երկաթուղային կայարանի շենքը (ճարտ.՝ Է. Տիգրանյան): Այս շրջանի Երևանի կոթողային՝ ամենավառ համալիրը Հաղթանակի «մոնումենտն» է (ճարտարապետ Ռ. Խորայելյան, քանդակագործ Ս. Մերկուրով-«Մայր Հայաստան» քանդակը, քանդակագործ՝ Ա. Հարությունյան):

Ռացիոնալիստական ճարտարապետությունը Ենթադրում էր տեսողական տեղեկույթի ծավալի ծայրահեղ աստիճանի կրճատում, դրանում տարրերի դասավորության ցածր աստիճան՝ պարզեցվածություն, բազմազանության բացակայություն, որը հանգեցնում է միօրինակության, որն էլ իր հերթին՝ կողմնորոշելիության բացակայության: Դրա վառ օրինակներն են Աջափնյակն ու Նորքի 1-ին զանգվածը [39, էջ 126]:

Այս շրջանում Հրազդանի կիրճը հանգստի գոտու վերածելու աշխատանքներ են տարվում: Զրային մակերեսները դառնում են քաղաքային լանդշաֆտի ակտիվ բաղադրամասերը (արհեստական լճեր - Երևանյան, Հաղթանակի գրոսայգու, Կարապի), ինչպես նաև քաղաքի կերպարային ընկալմանը նպաստող տարրեր: Քաղաքային համայնապատկերի ձևավորման մեջ գերիշխող էր բնական լանդշաֆտը, ֆոնային կառուցապատումը՝ 2-5 հարկանի, կողմնորոշող կառուցները հիմնականում հանրային էին՝ Օպերա, կառավարական կառուցներ: Կառուցապատումները ներդաշնակված էին լանդշաֆտին:

Շամանյանական ճարտարապետության կորածն, նուրբ անցումներին (վերածննդի, ոռմանտիզմի տարրեր պարունակող) փոխարինելու են գալիս կտրուկ և հստակ գծային լուծումները, որոնք կրում էին կոնստրուկտիվիստական որոշակի ազդեցություն, քանի որ այդ շրջանի մի շարք ճարտարապետներ՝ Ս. Սաֆարյան, Գ. Քոչար, Տ. Երկանյան, Նախկին կոնստրուկտիվիստներ էին և այդ ձեռագիրը դրոշմվում էր նոր տիպի հորինվածքներում: Զարդանախշերը Ենթարկվում էին նոր ոճավորումների՝ հատկապես Ռ. Իսրայելյանի կառուցներում) և առավել զուսպ կիրառում ստանում: Կառուցների քիչ մասնատումները բերում են նոր մասշտաբայնության կերտման: Շարունակում է լայնորեն կիրառվել վարդագույն տուֆը: Ճարտարապետությունը որոշակի ընդհանրություններ է ձեռք բերում շնորհիվ ամբողջատիրական համակարգի ամրապնդման: Զևափոխվում է նաև քաղաքաշինական կերպարը՝ գետնախորշերի, ժողովրդական տների մի շարք թաղամասերի վերակառուցումով: Նախկինում որպես ֆոնային կառուցապատված

շերտ հանդիսացող այդ շրջանները մնում են պարագծային կառուցապատմամբ ձևավորված կղզյակ-թաղամասերում:

### **Կերպարի դարածական մոդելը**

- Քաղաքատարածքների ընդլայնման հաշվին կերպարի քանակական փոփոխություն:
- Քաղաքի առանցքային ուղիների երկայնքով գծային կառուցապատման ամբողջացման և հանգուցային դիտակետերից մինչխորհրդային շրջանի շերտերի վերացմանը զուգընթաց գծային կողմնորոշման համակարգի կատարելագործում:

Ամբողջանում է կենտրոնի տարածական կերպարը: Ընդհանրական և անընդհատ կառուցապատումը, ներքին եզրագծերի բացակայությունը պայմանավորում են կենտրոնի՝ որպես մեկ ամբողջական շրջանի ձևավորումը (հավելված 22):

Ծայրամասային զանգվածներում տիպային շենքերի կառուցապատման արդյունքում դրսևորվում է կերպարի միօրինակություն և ցածր ընթեռնելիություն: Դրանք կենտրոնին կապող ուղիների մասնատված լինելը և հարակա բաց տարածքների կերպարային տարրերից զուրկ լինելը այդ թաղամասերի կենտրոնից անջատված լինելու հիմնական պատճառներից էին (հավելված 23):

### **Կերպարի պատկերային մոդելը**

Ընդհանուր համայնապատկերային ուրվագծերի սիմետրիա-ասիմետրիա - տիպարային շենքերով համալիր կառուցապատված քաղաքի ծայրամասերն (Աջափնյակի, Էրեբունի փողոցի, Կոմիտասի պողոտայի կառուցապատում) ունեին համընդհանուր փողոցային համայնապատկերի սիմետրիկություն:

Կենտրոնում որոշակի ասիմետրկության դրսևորում կար՝ նախորդ շրջանի առավել ազատ ուրվագիծ ունեցող բազմատիպ կառուցների կողքին օրինաչափ նոր շարքերի (հիմնականում հինգհարկանի քառաթեք տանիքով բնակելի շենքեր) հայտնվելով պայմանավորված: Առանձին կառուցների հորինվածքներ ձևավորում էին կենտրոնաձիգ, հստակ և սիմետրիկ ուրվապատկեր (ստալինյան ամպիր,

նաև ավանդական ճարտարապետության հիմքերի հաստատում, որը նույնաեւ սիմետրիկ էր և դեպի կենտրոն ձգտող) (հավելված 24):

Համալրված ճակատները ձեռք են բերում ընդհանրականություն:

Դետալների գեղարվեստականությունը նույնաեւ ձեռք է բերում ընդհանրականություն (հավելված 25): Գերիշխող էին ուղղահայաց բաժանումները, որի պատճառներից է նաև միջնադարյան եկեղեցական ճարտարապետության (որի հորինվածքն իր բնույթով ուղղահայաց էր) առանձնահատկությունների դրսևորումը քաղաքային ճարտարապետության մեջ (հավելված 26):

Ընդհանուր առմամբ այս ժամանակաշրջանի ճարտարապետական կերպարը դրսևորեց ընդհանրական որակներ: Տեղի չունեցան արմատական փոփոխություններ. չկար սուր կոնֆլիկտ նախորդ շրջանի ճարտարապետության հետ, ընդհակառակը՝ այն հաճախ 1920-ականներին ծևավորված թամանյանական ճարտարապետության պատմական շարունակությունն էր կազմում:

### **3.1.3. Ծավալման և փոխակերպման ժամանակաշրջան (1970-1980-ական թթ.)**

Քաղաքական և գաղափարական փոփոխություններով պայմանավորված («Նախագծման և շինարարության մեջ ավելորդությունների վերացման մասին» 1955 թ. ԽՄԿԿ-ի №1871 որոշում)՝ նոր փուլ է սկսվում ճարտարապետության պատմության մեջ՝ կոչվելով խորհրդային մոդեռնիզմ: Համապատասխանաբար փոխվում են նաև գեղագիտությունն ու քաղաքի կերպարը: Երևանյան ճարտարապետության մեջ նույնաեւ այդ փոխակերպումն առկա է՝ դրսևորված երկու տարբեր մոդելներում (տիպային և առանձնահատում՝ ինքնատիպ): Առաջինը զարգացավ երկու ուղղությամբ՝ արվարձանային զանգվածների կառուցապատում և կենտրոնում առանձին շենքերի կառուցում, իսկ երկրորդ տեսակի կառուցներում առավելապես դրսևորվում է ճարտարապետների անհատական ձեռագիրը [59]:

Երևանի քաղաքային տարածքներն ավելանում են՝ զարգանում է արվարձանային ճարտարապետությունը: Նոր թաղամասերը կերտվում են ազատ

կառուցապատման սկզբունքով (ՀԱՇ, Ավան-Աղինջ) ոչ թե ավանդական դարձած պարագծային կառուցապատմամբ: Սրանցում նախատեսված էին բոլոր սպասարկման՝ մշակութային, կենցաղային, առևտրական գործառույթներ իրականացնող շենքերը: Թաղամասերն ունեին հեռանկարային զարգացման միտումներ:

Այստեղ նկատվում է մասշտաբային հորինվածքային մտածողության նշանակության ընդգծվածություն: Հաղթահարվում էր կառուցապատման միօրինակությունը ոիթմիկ շարքերի տարբերակների և բակային տարածությունների կազմակերպման միջոցով (ՀԱՇ Ա): Քաղաքաշինական ամբողջությունների հորինվածքային հարաբերությունները (ՀԱՇ Բ-ում): Այս թաղամասերում կառուցապատման անկյունները շեշտվում էին կցորդ-սեկցիաներով, որով բարելավվում էր շենքերի ճարտարապետական արտահայտչականությունը և ստեղծում ծավալատարածական բազմազան լուծումներ՝ նորարարություններ, որոնց շնորհիվ շրջանի (ՀԱՇ) ընդհանուր կերպարը իր թարմությամբ տարբերվում է 50-60-ական թվականների շրջաններից: Կանաչապատ բակային տարածությունների շուրջ խմբված 9 և 16 հարկանի կառույցների համալիրներով էր կառուցապատված Ավան 3 թաղամասը: Ներքին տարածություններում կառուցվում էին մանկապարտեզներ, դպրոցներ:

Բարձրահարկերի կառուցմամբ ծևափոխության է ենթարկվում նաև Կենտրոնի ծավալատարածական հորիվածքը (Բաղրամյան - Պոռշյան, Մաշտոց - Ամիրյան անկյուններ): Վերջինիս քաղաքաշինական նշանակությունն այն էր, որ դոմինանտվում էր Լենինի (այժմ Հանրապետության) հրապարակի և Լենինի (այժմ Մաշտոցի) պողոտայի կապման հանգույցը՝ դառնալով կողմնորոշող օբյեկտ:

Մինչև 1980-ական թվականները Օպերան, կառավարական կառույցները մասամբ հանդիսանում էին կողմնորոշողներ քաղաքային համայնապատկերում, սակայն 1980 թվականների վերջերին կառուցված բարձրահարկերը ( ֆոնային կառուցապատումը՝ 5-6 հարկանիներ, առանձին շրջաններում՝ մինչև 9-12, 2000-ական թվականներից սկսած - ֆոնային կառուցապատումը՝ 10-12 հարկանիներ)

նվազեցրեցին դրանց նշանակությունը: Բարձրահարկ դոմինանտների ոչ համակարգված դասավորությունը քաղաքում հանգեցնում էր նաև կառուցապատ տարածքների և լանդշաֆտի ներդաշնակ փոխհարաբերության խախտման: Ակսվում է քաղաքի համընդհանուր ուղղաձիգ զարգացումը:

Հասարակական տարբեր ոլորտների ազատականացումն ուղղակի ազդեցություն էր ունենում քաղաքային միջավայրի և ճարտարապետության վրա: Ձևավորվում էր մի շարք նոր պահանջմունքներ ունեցող միջավայրի նոր սպառող: Քաղաքային միջավայրերը դառնում են առավել բազմազան, հայտնվում են մշակութային նոր շենքեր և երևույթներ (օրինակ՝ սրճարաններ) [28]: Կերտվում է Երևանի նոր կերպարը: Քարին փոխարինելու են գալիս բետոնը, ապակին, մետաղական թեթև կոնստրուկցիաները: Ճարտարապետության մեջ մեծանում է ամբողջական տարածության գաղափարի դերը՝ քաղաքային միջավայր - կառույց փոխկապակցվածության առավել կարևորմամբ:

1980-ական թվականներին մոդեռնիզմի լեզուն նոր զարգացումներ է ապրում և դրսևորվում Երևանյան մի շարք իրականացումներում: Նկատվում են միտումներ ազգայինն արտահայտել հորինվածքատարածական և կերպարային-խորհրդանշանային մակարդակներում: Ուղղության էությունը հանգում է նրան, որ ճարտարապետությունը հայացք է նետում դեպի հարուստ ավանդույթներ ունեցող միջնադարյան հուշարձաններ՝ հասկանալու և արտահայտելու համար մասնագիտականի ազգային մտածողությունը, տարածական սկզբունքները, կոնստրուկտիվ, հորինվածքային և գեղագիտական դրսևորումները: Պարզ և երբեմն չափավոր ազգային մոտիվներ կրող ձևերին փոխարինելու են գալիս արտահայտչական ձևերը (Ռոսիա կինոթատրոն, Երիտասարդական պալատ, Մարզահամերգային համալիր, «Երիտասարդական» մետրոյի կայարան այլն: Փոխակերպվում է նաև քաղաքի ճարտարապետական միջավայրի գնահատման արժեքային համակարգը: Սուբյեկտի ընկալումներն այդ միջավայրի նկատմամբ դառնում են կարևոր:

Այսպիսի մտածողության արդյունքում ք. Երևանում հայտնված առաջնեկը «Ռոսիա» կինոթատրոնն էր (ճարտ. Ա.Շարիսանյան, Հ.Պողոսյան, Ս. Խաչիկյան): Այստեղ փորձ է արված ստեղծել տարածության ազգային ընկալմանը մոտ կերպար, որն իր արտահայտությունն է գտել այնպիսի հասկացություններում, ինչպիսիք են երկրաշափականությունը, ծավալների փոխկապակցվածությունը, արտաքին ծավալների ենթարկվածությունը կոնստրուկցիային, մասշտաբների, հորիզոնականի և ուղղաձիգի հակադրվածությունը [37, էջ 160]:

Քաղաքի կերպարաստեղծ մյուս դոմինանտը «Երիտասարդության պալատ»-ն էր (ճարտ. Ա.Շարիսանյան, Հ.Պողոսյան, Ս. Խաչիկյան, Մ.Զաքարյան): Շենքի երկարածիգ ծավալը դարավանդների և դիտահարթակների միջոցով բացվում էր դեպի հարթավայրին ծովվող թամանյանական Երևանի համայնապատկեր, դեպի լանդշաֆտային դոմինանտ՝ Արարատ: Միաժամանակ կառուցի ծավալատարածական լուծումն այնպիսին էր, որ ողջ քաղաքը ծգում էր դեպի իրեն: Ազգային մտածողության և գեղագիտության արտահայտությունն են կրում փոխակերպված կամարային ձևերը: Կամարի թեման գլխավորն է այս համալիրի ճարտարապետության մեջ [37, էջ 162-163]:

Նորարարական հետաքրքիր հնարքներ են դրսնորված Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տան լուծումներում (ճարտ. Ս.Քյուրքչյան): Այն տեղավորված է Օղակաձև զբոսայգում՝ սիմետրիայի առանցքից մի փոքր շեղված: Այստեղ շատ կարևոր են ոչ թե ավանդական և նորարարական ճարտարապետության ֆորմալ դրսնորումները (դեկորային մանրամասներ՝ կամարներ, կամարունքեր, զարդաքանդակներ և այլն), այլ՝ խորքային: Կերպարը, շենքի ծավալները ծանր են, քարային, բացվածքները չեն խաթարում պատի ամբողջականությունն ու զանգվածեղությունը: Լուսը ինտերիեր թափանցում է պատերում առաջացած ուղղաձիգ ճեղքերի միջոցով: Շենքն ամբողջությամբ ներդաշնակված է զբոսայգու միջավայրին և կանաչին: Առանձին ծավալներ ձուվում են վերջիններիս՝ միաժամանակ դրանց ներառելով իրենց մեջ [37, էջ 176], այսպիսով կապելով ճարտարապետությունը բնությանը՝ ինչը բնորոշ է հայ ավանդական մշակույթին:

Գեղագիտական ուսուպիային փոխարինելու է գալիս բարոյագիտական ուսուպիան՝ տեխնիկայի զարգացման նկատմամբ առավել ազատ մոտեցմամբ:

Ճարտարապետությունը, կորցնելով իր ներդաշնակ կապը շրջակա միջավայրի, բնական լանդշաֆտի հետ, հիմնվում է տեխնիկական գեղագիտության, դիզայնի վրա: Նրա գնահատման չափանիշները դառնում են առավել կոնստրուկտորական և տեկտոնիկ: Կոնստրուկտորական, տեխնիկական հաջողությունները նշանավորվում են որպես «նորարարություն» [8, էջ 25]:

Երևանի կերպարի կերտման գործում իրենց մասնակցությունն ունեցան նորարարական այդ գաղափարներով տոգորված վերը քննարկված շենքերը: Ժամանակի նոր տեխնոլոգիական, գործառական և կոնստրուկտիվ լուծումները կարևոր դեր խաղացին ծավալատարածական հորինվածքների ձևավորման գործում: Ստեղծվում էր մի ճարտարապետություն, որը ձգտում էր ձևի ինքնահաստատմանը՝ հիմնված կառուցների տարածական հնարավորությունների և կառուցվածքի գործառնական ռացիոնալ կառուցման վրա: Ազգայինը կառուցվում էր երկաթբետոնով, բարդ տարածական կոնստրուկտիվ հնարքներով՝ առանց ավանդական ձևերի և մանրամասների:

### **Կերպարի դարածական մոդել**

Կողմնորոշման համակարգը դառնում է առավել բազմազան՝ ծայրամասային նոր շրջանների ճարտարապետական հորինվածքների բազմազանությամբ պայմանավորված: Ի տարբերություն 1960-ական թթ.-ի հետ, այս ժամանակշրջանում կառուցապատվող բարձրահարկերի զանգվածներում (ՀԱԹ, ԱՎԱՆ-ԱՐԻՆՉ) կերպարային տարրերը առավել վառ էին դրսնորվում՝ ապահովելով միջավայրերի լութեռնեխությունը:

Քաղաքաշինական հորինվածքը (հատկապես կենտրոնում) և գեղագիտական տարրերը կրում են որոշակի բարդացումներ, որոնց հաշվին քաղաքային միջավայրում զարգանում է առեղծվածայնության տարրը՝ արտահայտված հատկապես հնի և նորի հատման վայրերում (հավելված 27) :

- Կենտրոնն աստիճանաբար դադարում է դիտվել որպես մեկ ամբողջական շրջան, նոր որակի և մասշտաբների կառուցների պատճառով: Քառսային պատկեր է դրսնորվում հատկապես Խորենացի (Նախկին Կ. Մարքս), Սարյան, Մոսկովյան, Նալբանդյան փողոցներով շրջապատված տարածքներում՝ ճարտարապետական նոր, հաճախ նախորդներից արմատապես տարբերվող լեզվով կառուցների հայտնվելով պայմանավորված: Ծայրամասերում նոր շրջաններ են ձևավորում: Այդ միջավայրերի միօրինակության (մոնուտոնության), ուղիների ոչ հստակ ուղղվածության արդյունքում դրսնորվում է ցածր ընթեռնելիություն,
- Հեշտվում է կողմնորոշողների դերը բարձրահարկ դոմինանտների կառուցման արդյունքում (հավելված 28):

### **Կերպարի պարկերային մողել**

Ծայրամասային նոր թաղամասերի (Նոր Նորք, ՀԱՇ, Ավան-Առինջ, Դավթաշեն, Էրեբունի զանգված) շենքերի համայնապատկերային ուրվագծում դրսնորվում է ասիմետրիկ տարբերի առկայություն, ոիթմիկ լուծումներ, ի տարբերություն նախորդ շրջանի միօրինակ շարքերի (Աջափնյակ, Նոր Նորք 1-ին զանգված, Արցախի պողոտայի շենքեր): Կենտրոնում ուրվագծի ասիմետրիան առավել է շեշտվում՝ հարկայնության կտրուկ բարձրացմամբ պայմանավորված: Պարագծային-բակային կառուցապատում ունեցող շրջանների ներսում վեր խոյացող 9-12 հարկանի շենքերը կտրուկ հակադրության մեջ են մտնում նախորդ շրջանների մինչև 5 հարկանինիերի հետ:

Առանձին կառուցների ուրվագիծ - ասիմետրիա, բազմիմաստություն, երբեմն որոշակիորեն կենտրոնախույս հորինվածքներ (ի տարբերություն արևմտյան մոլեռնիզմի, խորհրդայինում առկա էր ձևերի զավածություն, ամբողջատիրական համակարգի որոշակի արտահայտվածություն՝ մոնումենտալության շնորհիվ):

Ձևերի բազմազանությամբ պայմանավորված՝ առկա էր ուրվագծի անկյունային աստիճանների բազմազանություն (հավելված 29): Ճարտարապետական ձևերն ու ծավալները կրում են բարդացումներ: Հարթ ճակատները կրում են կտրուկ փոխակերպումներ: Համալրվածությունը պայմանավորվում է ոչ թե դետալների

քանակական, այլ՝ դրանց որակական հատկանիշներով և ամբողջական հորինվածքի ու դրա առանձին տարրերի հետ փոխհարաբերություններով (հավելված 30): Ճակատային հորիվածքների մասնատվածության մեջ այլ սկզբունքներ են նկատվում (հավելված 31):

Գեղարվեստական դետալներում չկա նոր բովանդակություն և գեղագիտության մեջ նոր ինքնության որոնում (բացառությամբ որոշ գործերի): Միջնադարյան հայկական մոնումենտալ արվեստի (նեոազգային) և սոցեալիստական գաղափարների ոճավորումներ, ճարտարապետական ձևի նոր, մինիմալիստական (մոդեռնիստական) շերտերի վրա, այսինքն՝ գեղարվեստական դետալները ամբողջովին կորցնում են իրենց կերպարային իմաստները՝ ձեռք բերելով առավել խորը «գեղարվեստականություն» և մակերեսային բնույթ, հաճախ հակադրության մեջ են մտնում ճարտարապետական ձևի հետ:

### **3.2. Անկախության ժամանակաշրջան**

**3.2.1. Երևանի քաղաքաշինական և ճարտարապետական գարգացումները**  
Ինչպես 20-րդ դարի սկիզբն էր Երևանի քաղաքաշինության և ճարտարապետության համար որոնումների շրջան, այնպես էլ նրա վերջն ու 21-րդի սկիզբը դարձան ոճական կողմնորոշման որոնումների ժամանակաշրջան [89]: 1991թ. Խորհրդային Միության փլուզմամբ Երևանը նոր կարգավիճակ ստացավ՝ անկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք: Կորցնելով իր նախկին դերակատարումը՝ քաղաքը գտնվում է իր առաքելության և կարգավիճակի վերահմատավորման փուլում [86]:

Քաղաքը կրում է նոր կայացող կապիտալիստական հասարակարգի սոցիալ-մշակութային արժեհամակարգերի ազդեցությունը: Ի տարբերություն նախորդ՝ խորհրդային շրջանի, նորօրյա Երևանի ճարտարապետությունը չի կերտվում հստակ ձևավորված որևէ գաղափարախոսությամբ, ինչի պատճառով դեռ առկա է սեփական լեզվի որոնման գործընթացը: Որոշ դեպքերում այն հանգեցնում է պատմական և էկլեկտիկ դրսնորումների՝ շատ հաճախ հղում կատարելով թամանյանական

ժամանակաշրջանի ճարտարապետությանը [90], որոշներում էլ՝ մոդեռնիստական և այլն: Արդյունքում քաղաքի ճարտարապետական կերպարն ունի ներկապնակի բազմազանություն:

Ճարտարապետության մեջ կրկին գերիշխող են դառնում «անհատականացված» ստեղծագործությունները, որոնք հաճախ դուրս են մնում քաղաքային ճարտարապետության ընդհանուր համատեքստից: Կերպարը ձևավորվում է առանձին կառուցների գեղագիտության արդյունքում, այդ պատճառով էլ չունի համընդհանուր բնույթ, ընկալվում է մասնատված և չի նույնացվում քաղաքի հետ: Երևանի այս շրջանի ճարտարապետությունը կարելի է բաժանել որակապես տարբեր երկու հիմնական տիպի՝ պատմագեղարվեստական և արևմտյան պատրաստի մոդելներ կիրառող ճարտարապետություններ: Առաջինի հիմնական սկզբունքն է՝ վերակերտել իին քաղաքի միջավայրերը, որը սակայն հանգեցնում է արհեստականության և «կեղծ» պատմականության: Նոր շուկայական հարաբերությունների առանձնահատկությունները ճարտարապետության՝ որպես քաղաքային միջավայր կերտող առանցքային գործունեության առևտրականացման պատճառ են դառնում [91]:

Վերոնշյալով պայմանավորված՝ անկախության տարիների Երևանում քաղաքային միջավայրը զարգանում է նոր հայեցակարգով, իսկ քաղաքային ճարտարապետությունը՝ ազգայինի և միջազգայինի նորարարական միտումների համադրությամբ:

Երևանի քաղաքաշինական զարգացումներում առանձնանում է համաքաղաքային մասնագիտացված գոտիների ստեղծումը (բանկային ենթահատվածը, հանգստի և ժամանցի գոտիները և այլն): Այս հանգամանքով պայմանավորված՝ քաղաքի կանաչ գոտին վերածվել է ժամանակավոր կառուցներով հարստացած քաղաքային հանգստի տարածքի [32, էջ 6]: Ճանապարհիաշխնությունն ու կամրջաշինությունը, որոնք միտված էին տրանսպորտային գերբեռնվածության թոթափմանը, մեծ մասշտաբներ են ձեռք բերել:

Երևանի հանրային տարածքների կառուցվածքային բաղադրիչները նոր զարգացումներ են ունեցել՝ մասնակիորեն իրականացվել են Հանրապետության (նախկին՝ Ալավերդյան) փողոցի պատմամշակութային գոտու վերակառուցումը [87] և Մյասնիկյանի հրապարակի ձևավորումը: Ավարտվել են Հյուսիսային պողոտայի կառուցապատման և, դեռևս շարունակվում են Գլխավոր պողոտայի վերակառուցման, նախագծման և կառուցապատման աշխատանքները:

Այս ժամանակահատվածում ստեղծված փողոցներն ու ճեմուղիները տարածության նոր արժեք են ստեղծում՝ միաժամանակ թերևացնելով տրանսպորտային ծանրաբեռնվածությունը: Քաղաքապետարանի և Հյուսիսային պողոտայի ճարտարապետության գաղափարաբանությունը և հորինվածքային որոշ տարրեր կրում են ժառանգորդական առանձնահատկություններ: Գլխավոր պողոտան ավելի ռացիոնալիստական բնույթ է կրում: Քաղաքային միահարկ՝ ծանրաբեռնված հանգույցները փոխարինվել են բազմահարկերով (Կիւյան-Բաղրամյան խաչմերուկ, Հերացի-Չարենց-Ալեք Մանուկյան, Բաբայան-Ազատության, Կոմիտասի-Ազատության, Իսակով-Լենինգրադյան և այլն): Տարածքային կառուցվածքի այս բաղկացուցիչները ժամանակակից Երևանի ուրբան միջավայրի խորհրդանիշներից են:

Անկախության տարիների Երևանի ճարտարապետությունը հարստացավ հանրային շենքերի նոր տիպերով (վարչական, գրասենյակային և կոռուպորատիվ շենքեր-բանկեր, տեխնոպարկեր, բիզնես-կենտրոններ), որոնք նոր կերպար հաղորդեցին քաղաքին: Այս շենքերում մեկտեղված են ժամանակակից ճարտարապետության հիմնական տարրերը՝ դիզայնը, շինարարությունը, միջավայրի կազմակերպումն ու մշակումը: Կերպար, հաճելի և հարմարավետ աշխատանքային միջավայրի ստեղծում. սա է այս տիպի շենքերի գաղափարաբանությունը (Հայաստանի ամերիկյան համալսարանի կենտրոնը, Արմենիա հեռուստակայանը, ԱՄՆ-ի, Ուրուգվայի, Ֆրանսիայի, Շայլանդի, Միացյալ թագավորության դեսպանատների շենքեր) [32, էջ 16]:

Վարչական խոշոր իրականացումների՝ քաղաքապետարանի և Կառավարական նոր շենքի ճարտարապետության մեջ դրսնորվել են աղերսներ

խորհրդային շրջանի ազգային նեռկասիցիստական ոճի և մտածողության հետ: Քաղաքապետարանի ճարտարապետությունը իսրայելյանական գծի շարունակության կրողն է՝ առանձնանալով մասշտաբայնությամբ, մոնումենտալությամբ: Հորինվածքին բնորոշ են խոշոր կտորներով և ոչ բաղադրյալ ճակատներով լուծումները: Մոնումենտալությունն ու մաշտաբայնությունը բնորոշ են նաև Կառավարական տան շենքին: Առանցքային նշանակություն ունեցող այս շենքերը նաև կերպարաստեղծ են և ցուցում են մերօրյա Երևանի նախընտրելի՝ կազմավորվող կերպարը՝ ազգային պատմականության ու միջազգային նորարարության համադրությամբ [32, էջ 17]: Անկախության տարիների գաղափարական իդեալները և միջազգային փորձի ձեռքբերումները իրենց արտահայտությունն են գտել ուսումնական շենքերի ճարտարապետության մեջ («Այբ» ավագ դպրոց, «Թումո» կենտրոն, Հայֆրանսիական և Եվրոպական ուսումնական համագործակցության կենտրոնը Զեյթուն թաղամասում):

Ժամանակակից Երևանի ճարտարապետական կերպարի կերտման նորամուծություններ են նաև քաղաքում կառուցված բազմաթիվ ռեստորանային և հյուրանոցային համալիրները (Բելաջիո, Արքայաձոր, Վենետիկ և այլն), որտեղ ուրվագծվում են միջազգային էլիտար ճարտարապետության զարգացումները՝ մանավանդ նոր շինանյութերի կիրառության տեսակետից: Այս շենքերը միջավայրաստեղծ են և իրենց շուրջը ստեղծել են գոտիներ՝ ժամանցի, հանգստի և այլն: Ռեստորանային, ժամանցի և սպասարկման նշանակության շենքերով կառուցապատումները հաճախ նաև խաթարում են Երևանի քաղաքաշինական դոմինանտների և կերպարաստեղծ կառուցների տեսադաշտերը և առաջացնում դիտելիության խնդիրներ: Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքն իր հարակից կառուցապատումներով ասվածի վառ վկայությունն է: Շրջակա խիտ կառուցապատումները փոքր ճարտարապետական ձևերով ջլատում են դոմինանտի մասշտաբը՝ խոչընդոտում տեսանելիությանը և նվազեցնում տարածքի գեղագիտական արժեքը [6, էջ 295]:

Անկախության տարիները, ինչպես որ մեկ դար առաջ, Երևանում նշանավորվեցին բնակելի կառուցապատմամբ: Ինչպես արդեն նշվել է նախորդ ենթագլուխներում, բնակարանաշինությունը խորհրդային ճարտարապետության առաջնայնություններից էր: Բայց ի տարբերություն խորհրդային վերջին ժամանակաշրջանի՝ բնակելի կառուցապատումը ծայրամասերից տեղափոխվեց կենտրոն: 1970-80-ականների Երևանի բնակելի՝ միկրոշրջանային կառուցապատման փոխարեն այսօր գերիշխող է կետային և պարագծային համակարգով իրականացվող կառուցապատումը: Այս ամենը հետևանք էր ճարտարապետության գաղափարական բովանդակության փոփոխության, որն առաջնահերթ առևտրային է: Հետխորհրդային Երևանի բնակարանաշինության ակտիվ զարգացումը առավելապես կապված է ճարտարապետության մասնավոր դաշտ մտնելու, ինչպես նաև Երևանյան շինարարական շուկա օտարերկրյա կապիտալի ներթափանցման հետ [88]: Սրանցով պայմանավորված՝ Երևանում կառուցվեցին և կառուցվում են եկամտաբեր շենքեր: Այս շենքերն, իհարկե, նախատիպեր չեն, ուղղակի սրանցում ամբողջությամբ արտահայտված են մերօրյա կյանքի փոխակերպումները. լինի դա գեղագիտական, էկոլոգիական, պահանջարկ-առաջարկի, նոր շինանյութերի օգտագործման, թե առողջ ապրելակերպի առումներով: Տեխնիկական գեղագիտության զարգացման արդյունքում Երևանում կառուցվել են բարձրաբերձ շենքեր (Դամա Գարդեն մոլի հարևանությամբ բնակելի համալիրը), որտեղ առաջանում են միջավայրի և ուղղահայաց դոմինանտի ներդաշնակեցման (մասշտաբ, տեղակապում, կոնստրուկցիայի ընտրություն և այլն) խնդիրները: Այսպիսի խնդիրներ էին առաջանում նաև 19-րդ դարի առաջին երկնաքերների կառուցման ժամանակ [32, էջ 33]:

Անկախության տարիների Երևանի ճարտարապետությունը կերտվում է նաև եկեղեցաշինությամբ: Սրանք հայկական եկեղեցիների ճարտարապետության ժամանակակից կերպարի վերակերտման օրինակներ են: Դրանք հիմնականում եկեղեցական պատմական տիպերի սինթեզման (Նոր Նորքի Սբ. Սարգիս, Մալաթիայի Սբ. Երրորդություն), ինչպես նաև ժամանակակից չափանիշներով և

հասկացություններով կերպարի արտահայտման (Մայր տաճար՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ) փորձեր են: Դրանք պատկանում են մի քանի ոճական ուղղությունների՝ պահպանողական (Մալաթիա-Սեբաստիա - Սբ.Մարիամ Աստվածածին), ռացիոնալիստական (Նոր Նորք - Սբ.Սարգիս), մոդեռնիստական (Սիլիկյան թաղամասի Եկեղեցի), արտահայտչապաշտական (Եռաբլուրի հուշահամալիրի Եկեղեցի):

Այսօր Երևանի հարազատ դարձած քաղաքային միջավայրը, որն առաջնահերթ ձևավորված է տարածական կառուցապատման մեջ, օտարանում է, քանզի վերանում է նաև քաղաքի ընդհանրական կերպար հասկացությունը [10, Էջ 101]: Նոր շոկայական հարաբերությունների առանձնահատկությունները պատճառ են դառնում ճարտարապետության, որպես քաղաքային միջավայր կերտող առանցքային գործունեության առևտրականացման: Այդ հանգամանքով պայմանավորված, տեղի են ունենում լայնածավալ փոխակերպումներ, որոնք էլ դառնում են նոր կերպարի հիմնական բնութագրիչները:

### **3.2.2. Երևանի կերպարային գործերի վերլուծություն. Գնահատականներ կերպարի գործական մոդելը**

Այս շրջանում քաղաքի տարածաբանական կառուցվածքը գրեթե փոփոխություն չի կրում: Տեղի չի ունենում լայն մասշտաբով նոր տարածքների իրացում, այսինքն՝ նոր շրջանների ձևավորում: Ընդհակառակը՝ շրջանները, ձեռք բերելով բազմակերպար և քառսային հատկություն, դադարում են դիտվել որպես շրջան՝ ինչպես սահմանված է տվյալ տեսության մեջ: Քաղաքի բնական ներքին եզրագծերը՝ բնական լանդշաֆտի տարրերը (գետեր, ուլիկային կտրուկ անցումներ), որոշ առումով կորցնում են իրենց կերպարայնությունը՝ անկանոն կառուցապատման հետևանքով: Դրա օրինակներն են Հրազդանի կիրճի և օղակածն այգու քառսային, համակարգային առումով չլուծված ճարտարապետություն կրող կառուցապատումը: Քաղաքում հայտնվում է տարածական-կառուցվածքային առումով նոր

քաղաքաշինական Երևոյթ՝ Հյուսիսային պողոտան՝ հանգույց-ուղին (հավելված 32):

Քաղաքի ներկայիս հատակագծի վրա կատարվել է հիմնական կերպարային տարրերի վերլուծություն և առանձնացվել են խնդրահարույց կետերը (հավելված 33): Այսօր Երևանի քաղաքաշինական գոտիների գործառույթները ամբողջ քաղաքի տարածքում անհամաչափ են բաշխված: Հանրության սոցիալ-մշակութային հաղորդակցությունը հիմնականում կատարվում է պատմական կենտրոնում: Կենտրոնում են տեղակայված պետական կառավարման հիմնական կառուցները՝ օբյեկտները, քաղաքի ուսումնական և մշակութային կենտրոնները, հանգստի գոտիները, զբոսաշրջության համար հետաքրքրություն ներկայացնող այլ միջավայրերը նույնպես այստեղ են կենտրոնացված: Ի տարբերություն քաղաքի ծայրամասային թաղամասերի (Նոր Նորք, Նոր Զեյթուն, Աջափնյակ, ՀԱՇ և այլն), կենտրոնում նշանակալի հանրային վայրերի հարաբերական թիվը շատ ավելի մեծ է: Առաջիններն ի սկզբանե նախագծված են եղել որպես բնակելի շրջաններ՝ հիմնված քաղաքաշինական և ճարտարապետական այլ մոտեցումների վրա (տիպային շենքերի գանգվածային կառուցապատում): Կրելով նաև պատմական իմաստների կարևորությունը (օրինակ՝ Երևանի ընկալումը որպես «թամանյանական քաղաք»)՝ կենտրոնի ճարտարապետական կերպարն այսօրվա քաղաքի ամբողջական կերպարի կորիզն է՝ ներկայացուցչական շերտը [25, էջ 104]: Եվ թեպետ վերջին տասնամյակների անկանոն կառուցապատման ու քաղաքային համայնապատկերների, առանձին միջավայրերի քառային կարգավիճակին՝ այն կրում է կերպարային ընդհանրական տարրեր, որոնց արտահայտչականությունը վերականգնելու տարբեր հնարավորություններ կան այսօր: Քառսային կառուցապատումը իր վառ արտահայտությունն է գտնում հատկապես կենտրոնում, Բաղրամյան և Կոմիտասի պողոտաների հարակից տարածքներում:

Երևանի (կենտրոնի) հյուսիսից մինչև արևելյան հատված ձգվող եզրագիծը բնական լանդշաֆտն է՝ որը յուրատեսակ ամֆիթատրոն է ներկայացնում: Կենտրոնը,

գտնվելով տոպոգրաֆիկ մեկ հարթության վրա (թիզ թե շատ), ընկալվում է որպես մեկ ամբողջական շրջան:

Քաղաքային գործառույթների և լանդշաֆտային առանձնահատկությունների տեսանկյունից բացի, կենտրոնն առանձնացված է քաղաքի մյուս հատվածներից նաև դրանք կենտրոնի հետ կապող ուղիների և հանգույցների կերպարայնության պակասի պատճառով։ Այսօր, ավելի քան երեսէ հրատապ խնդիր է դառնում կենտրոնի հատակագծային զարգացման ռազմավարության մշակումը [4, էջ 72]:

Երևանի կերպարի հիմքում ընկած կազմական տարրերն առավելապես կրում են տեղային (լոկալ) բնույթ։ Դրա հիմնական պատճառներից մեկը քաղաքային հյուսվածքի տարրեր ժամանակներում ծևավորված շերտերի (հատկապես 1920-ական թթ. մինչև 1960-70-ական թթ. ժամանակշրջանում և մինչ այսօր կազմավորված միջավայրերի միջև) փոխհարաբերությունների աներդաշնակությունն ու անհամատեղելիությունն է, որի արդյունքում այսօր քաղաքի մի շարք հատվածներ, հատկապես լայն համայնապատկերներ ընթեռնելի չեն [39, էջ 188]։ Ընդհանուր կերպարի հիմքում առանձին կառույցների ու միջավայրերի կերպարներ են ընկած, որոնք հաճախ դժվար են ամբողջացվում քաղաքի մեկ կերպարի մեջ։ Զկան որոշակի ընդհանրական առանձնահատկություններով օժտված կերպարաստեղծ միջավայրեր ու քաղաքային համայնապատկերներ։

Հատակագծային լուծման առումով կենտրոնը նույնպես դիտարկվում է որպես մեկ շրջան, որի փոխուղղահայաց ցանցավոր կառուցվածքը, ընդգրկված շրջանակի մեջ, առանձնացված է քաղաքի այլ հատվածներից (հենց Թամանյանի կողմից նախագծված գլխավոր հատակագծի պահպանված կառուցվածքն է)։ Քաղաքի կառուցվածքի ընկալման ժամանակ գրեթե չկան երկակիություններ. այն բավականին հստակ է, թեպետ քաղաքային համայնապատկերների կամ առանձին շենքերի ճակատների ընթեռնելիությունը ցածր է։

Կանոնավոր կառուցվածք ունեցող քաղաքներում սովորաբար կողմնորոշման խնդիրները առավել պարզ են, քան՝ անկանոններում (օրինակ՝ Եվրոպական միջնադարյան մի շարք քաղաքներում՝ Վենետիկ, Սիենա, Ամստերդամ, Լիսաբոն ևն)։

Քաղաքը կրելով գեղագիտական բարձր որակներ՝ առեղծվածային միջավայրեր, բազմատարր և բազմազան համայնապատկերներ, կարող է չունենալ հստակ և ընթեռնելի կերպար. ընթեռնելին պարտադիր չի ենթադրում գեղագիտական [84, 201-202 էջեր]: Այդուհանդերձ, միջանադարյան քաղաքների էական առանձնահատկությունն էլ հենց դրանց անկատարության (ոչ հստակության) մեջ է, որն էլ հիմնականում գեղագիտականության գրավականն է (կարելի է եզրակացություն անել թեկուզ հենց վերը թվարկված քաղաքների զբոսաշրջային կենտրոն լինելու փաստի հիման վրա):

Երբ միջավայրը կրում է որոշակի ծև, դրա կերտած կերպարն առավել հստակ է լինում. միջավայրի առանձնահատկությունները առավել հեշտ են հիշվում և ճանաչվում: Տծև (ընկալման իմաստով, այսինքն՝ ոչ հստակ ծև ունեցող) տարածությունը կարող է լինել նշանակալից (մարդու վրա իր թողած ազդեցության շնորհիվ), սակայն ոչ ընթեռնելի և մտապահելի [74, էջ 44]: Օրինակ, Մյասնիկյանի և Ռուսաստանի հրապարակները, որոնց միջև չկա հստակ եզրագիծ, ընկալվում են որպես մեկ ամբողջություն, չնայած՝ հստակ ընդգծված ծև չունեն: Եվ թեպետ երկու գլխավոր կողմնորոշողների՝ քաղաքապետարանի և Նոյ կոնյակի-գինու գործարանի աշտարակների առկայությանը, հստակ ծև չունենալու պատճառով ընդհանուր միջավայրը չունի հստակ կերպար (ի տարբերություն, օրինակ, Հանրապետության հրապարակի փակ եզրագծված տարածությանը, որի շնորհիվ այն ունի հստակ կերպար՝ ընկալվելով որպես Երևանի խորհրդանշական մեկը):

Երևանի ճարտարապետական կերպարը ներկայանում է հիմնականում առանձին կողմնորոշող օբյեկտների (շենքեր, հուշարձաններ) միջոցով: Դասակարգման հիմքում ընկած է կողմնորոշող օբյեկտի հակադրության մեջ լինելը շրջակա այլ օբյեկտների և ընդհանուր շրջակա միջավայրի հետ:

Հիմնվելով կողմնորոշողների հիմնական ֆիզիկական  
առանձնահատկությունների վրա՝ դրանք դասակարգվում են  
• ըստ դիրքողական հասանելիության.

- քաղաքի «սահմաններից դուրս» գտնվողներ, բայց հասանելիության շնորհիվ դրա սահմաններում գտնվողներ. Ծիծեռնակաբերդի հուշակոթող, Մարզահամերգային Համալիր, Խորհրդային Հայաստանի 50 ամյակին նվիրված հուշայուն, «Հյուսիսային ճառագայթ» բարձրահարկերը, Մայր Հայաստան, հեռուստաաշտարակ և այլն,
- քաղաքի «սահմաններում» գտնվողներ. քաղաքապետարանի և Նոյ գործարանի աշտարակներ, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, «Elite Plaza» բիզնես կենտրոնի բարձրահարկ, «Double Tree» հյուրանոց և այլն,
- քաղաքի «սահմաններում» գտնվողներ, բայց դիտողական հասանելիության առումով տեղային բնույթ կրողներ (հասանելի են համեմատաբար սահմանափակ կետերից). Օպերա, Կառավարական տուն 1, Մատենադարան, Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տուն և այլն,
- ըստ ոճական առանձնացվածության, հակադրության . օբյեկտի արտաքին հարդարանքի (գույն, տեքստուրա, կառույցի ճակատի հորինվածքային առանձնահատկություններ), դրա հորինվածքային առանձնահատկությունների ու շրջակա մակերեսների միջև հակադրության հիման վրա. Կապույտ մզկիթ (Դարպասային մուտքի խճանկար), Շախմատի տուն (ճակատի պատկերներ), Ծածկած շուկա (ճակատի կամարակապ հատվածի նախշազարդ) և այլն:

### **Կերպարի պարկերային մոդելը**

Քաղաքի ընդհանուր ուրվագիծը զարգանում է ամբողջովին անկանոն և ոչ օրինաչափ: Չկան հստակ հորինվածքային լուծումներ: Քաղաքաշինական մի շարք սկզբունքների խախտմամբ կենտրոնի պարագծային-բակային կառուցապատման համակարգում ներդրված շենքերը ստեղծում են համընդհանուր փողոցային համայնապատկերների ասիմետրիկություն (հավելված 34): Համալրված ճակատները ձեռք են բերում որոշակի ընդհանրականություն՝ հատակապես ժառանգորդական ներկայացվող ճարտարապետության մեջ: Դետալների գեղարվեստականությունը կորցնում է ընդհանրականությունը՝ հաճախ դրսևորվելով որպես քառսային նախշ (նախշային կառուցվածք) (հավելված 35): Հաճախ լակոնիկության ձգտումն

արտահայտվում էր պարզ ճակատային լուծումներով և ցածր մասնատվածության աստիճանով (հավելված 36):

Ընդհանուր առմամբ, այս ժամանակաշրջանի ճարտարապետական կերպարը դրսնորում է ոչ ընդհանրական որակներ:

### **3.2.3. Քաղաքային ճարտարապետության փոխակերպման հիմնական դրսնորումները**

Դրանք առանձնացվում են մի քանի խմբերում.

- Ճարտարապետական հորինվածքի փոխակերպություն.
  - ճակատային (Երեսպատում, ճակատի ներկում, պատուհանների չափերի համաչափությունների փոփոխություն, գովազդային տարրերի ներմուծում) - շենքի ընդհանուր ծավալային համաչափությունները պահպանվում են, ծևափոխությունները կատարվում են մեկ հարթության մեջ: Անհամապատասխանություն է առաջանում նախօրինակի հետ՝ ինչպես գունային, այնպես էլ մասշտաբային առումով, ի վերջո խոչընդոտելով միջավայրի գեղագիտական ընկալմանը (հատկապես հին շենքերի առաջին հարկերի ոչ գրագետ լուծված խանութ սրահներն ու ցուցափեղկերը),
    - կցակառուցների միջոցով երկրորդ և ավելի ճակատների ծևավորում - փոխվում են շենքի ընդհանուր ծավալային համաչափությունները,
    - ուրվապատկերի փոփոխություն՝ ավելացված հարկերի, անկանոն մանսարդների հետևանքով:
  - Միջավայրի փոխակերպություն.
    - Նոր իմաստներ կրող տարրերի կիրառման միջոցով (ճարտարապետական փոքր ծևեր, դեկորատիվ, քանդակային տարրեր, Կասկադի օրինակը) միջավայրի համալիր վերակազմակերպում,
    - սպասարկման ոլորտի տարրերի ներմուծում (Ազատության իրապարակ, Աբովյան փողոցի լայն հատված, կենտրոնի մի շարք սրճարանների, կրպակների տեղակայում):
  - Պատմաճարտարապետական շերտի վերացում:

- Նոր ճարտարապետության ներմուծում պատմականորեն կամ համալիր նախագծային մոտեցմամբ ձևավորված միջավայրում (Հյուսիսային պողոտայի բարձրահարկերը, Աբովյան, Արամի, Բուզանդի, Պուշկինի փողոցների մեջ, երկու հարկանի կառույցների ֆոնին 2000-ական թթ. դրությամբ, քանի որ այսօր այդ կառույցների զգայի մասն արդեն չկա, և «Ելիտար» ճարտարապետությունն այլս չի դիտարկվում որպես նոր և եզակի):

Նույն կառույցում նոր ճարտարապետական լեզվի ներմուծում՝ ճարտարապետության հիբրիդ (Հանրապետության - Բուզանդ խաչմերուկում գտնվող համալիրը) (հավելված 37):

### **3.2.4. Կերպարի որակական առանձնահավկությունները կամ կերպարայնությունը**

Քաղաքի և քաղաքային միջավայրի կերպարայնությունը կախված է քաղաքաշինության մեջ ընդունված ձևաստեղծման որոշակի օրինաչափությունների համաձայն հղումներ կատարելուց: Դրանք ձևակերպվում են որպես ինքնապիկություն կամ եզակիություն, հանգույցի հսկակություն, ուղղվածության դարրերակելիություն, դեսահասանելիություն [74, էջ 45]: Դիտարկելով ընդհանուր քաղաքային մասշտաբում՝ կենտրոնի եզակիությունն արտահայտվում է դրա տեղագրական (տոպոգրաֆիկ) առանձնացվածության և հատակագծային կառուցվածքի մեջ: Ոճական ինքնատիպությունը հստակ չէ, ինչպես, օրինակ՝ Եվրոպայի միջնադարյան մի շարք քաղաքներում (Բարսելոնա, Մադրիդ, Ամստերդամ, Լիսաբոն, Պրահա և այլն):

Զարդ պարզություն. մաքրությունը (մասերի բազմազանության սահմանափակում) հիմնականում արտահայտվում է հատակագծային կառուցվածքի (քաղաքի կմախքի) և ճարտարապետական միջավայրի ծավալատարածական լուծումների (քաղաքի հյուսվածքի ու պլազմայի) մեջ [42, էջ 90]: ճարտարապետական ձևի պարզությունն առավելապես արվարձաններում է արտահայտված (տիպային պարզ կառույցներ):

*Հանգույցի հսկակությունը* նույնպես կարևոր ցուցանիշ է ամբողջ քաղաքի կերպարայնության համար, քանի որ սովորաբար հենց հանգույցներն են քաղաքի գլխավոր հանրային վայրերը, օրինակ, *Հանրապետության իրապարակը*: Այն բնութագրվում է որպես հստակ փոխկապակցվածություն օբյեկտի՝ կառույցի և միջավայրում դրա տեղադրության միջև: Երևանի կենտրոնի խաչմերուկները (փոխուղղահայաց) սովորաբար հստակ հանգույցներ են, ի տարբերություն անկանոն հատակագիծ ունեցող քաղաքների կենտրոնների:

*Ուղղվածության լրարերակելիությունը* ուղղու մասերի (երկու ծայրերի) տարբերակելի առանձնահատկությունների առկայությունն է: Այն արտահայտվում է ուղին ընդգրկող ընդհանուր ճակատային համայնապատկերի ասիմետրիայով (ոչ միաչափ, միատոն ճակատներ, ասիմետրիկ շարք, այլ՝ ռիթմիկ աստիճանավորում): Հաճախ այս խնդիրը լուծվում է լանդշաֆտային առանձնահատկությունների (օրինակ՝ փողոց, որն ուղղված է դեպի վեր՝ բարձունք, դեպի բնական կողմնորոշող՝ ծով, լիճ), ուրբան կառուցվածքի (օրինակ՝ փողոց, որն ուղղված է դեպի քաղաքի կենտրոն), ուղղու տարածական հատկանիշների՝ լայնության փոփոխության (Աբովյան փողոցի օրինակը) շնորհիվ: Երևանում հիմնականում ուղին տարբերակվում է կողմնորոշող օբյեկտների միջոցով (օրինակ՝ փողոց՝ ուղղված դեպի Օպերա, դեպի Հանրապետության իրապարակ և այլն):

*Ուղղվածության տարբերակելիության բնորոշ օրինակ* է Մաշտոցի պողոտան, որի մի ծայրը հանգուցալուծվում է երկու տարբեր կողմնորոշողների համակարգով՝ Մայր Հայաստան հուշարձան և Մատենադարան, իսկ ամբողջ երկայնքով առկա են այլ տարբերակելի միջավայրեր և կառույցներ՝ Օպերան Ֆրանսիայի իրապարակի հանգույցով, Մաշտոցի պողոտակի հանգույցը, Ամիրյան հատվածի բարձրահարկը, Ծածկած շուկան, Կապույտ Մզկիթը, ստորգետնյա ավտոճանապարհի հանգույցը: Վերջինս նաև ուղղու բաժանարար է՝ կերպարի ընկալման առումով (ուղին վերջանում կամ սկսվում է այդտեղից):

Երևանի տիպային շենքերով կառուցապատված թաղամասերում ուղիների տարբերակելիության խնդիրն առավել բարդ է վերոնշյալ առանձնահատկությունների պակասի կամ բացակայության պատճառով:

*Տեսահասանելիությունը* տարբեր վայրերից և դիրքերից օբյեկտի տեսանելիության, ինչպես նաև տարբեր կողմերի՝ ճակատների տեսանելիության հնարավորությունն է: Այս տեսակետից Կառավարական տունը, Մատենադարանը առավելապես ճակատային կողմնորոշողներ են, քանի որ կողմնորոշողի գործառույթը (ընթեռնելիություն, ճանաչելիություն) հիմնականում իրականանում է միայն մեկ ճակատային համայնապատկերի հետ հաղորդակցության միջոցով, այդպիսով՝ նվազեցնելով տեսահասանելիությունը: Իսկ արդեն Կասկադի դեպքում հաղորդակցությունն ուղղորդված և հստակեցված է, չկան այլ դիրքեր կողմնորոշողն ընկալելու համար՝ այլ միայն առջևից մոտենալիս (ճակատային ընկալում) [22, էջ 17]: Այս տեսակը կանվանենք մեկուսացված կողմնորոշող:

Քաղաքային միջավայրի կերպարայնությունը հարստացնում և ընթեռնելիությունը մեծացնում է տեղանունների բառային ներկայացումը միջավայրում: Դա հատկապես կիրառելի է ոչ ինքնատիպ, մոնուտոն միջավայրերում, որտեղ չկան կողմնորոշող օբյեկտներ: Տեղանունների ցուցադրությունը մեծացնում է միջավայրի ճանաչելիությունը, ինքնությունը (օրինակ՝ գրված Աջափնյակ՝ Լենինգրադյան և Հասրաթյան փողոցների անկյունում կամ Նոր Նորքում գանգվածների համարակալումները թվերով վավերացնելը և այլն):

### **3.2.5. Քաղաքային միջավայրի կերպարայնության բարելավմանն ուղղված համակարգային մոդելումներ:**

Այսօրվա քաղաքաշինական նախագծային գործունեության հիմքում անհրաժեշտ է դնել ք. Երևանի ճարտարապետական ամբողջական կերպարի կերտմանն ու բարելավմանը միտված հետևյալ առանցքային ուղղությունները.

- Կենտրոնում ազատ տարածք. կառուցապատված տարածք» ներկայիս բալանսի սահմանում (հնարավորության դեպքում ազատ տարածքների ավելացում) առանձին

օբյեկտների ուրվապատկերային (սիլուետային) առանձնացվածության պահպանման համար, այսինքն՝ ուրվագծային կողմնորոշողների (Օպերա, քաղաքապետարան, Հանրապետության իրապարակ և այլն) պահպանման համար:

- Քաղաքի շրջանների ոճական ինքնատիպությունների ստեղծում և վերհանում՝ դրանք մեկ ընդհանուր կերպարի մեջ ամբողջացնելով՝
  - փողոցների ընդհանուր համայնապատկերների բարեկարգում (կոմերցիոն մասի կարգավորում, վերականգնողական աշխատանքներ, ներկում, տիպային կառույցների ճակատներին հետաքրքիր գրաֆիկական լուծումներ՝ կոնկրետ խնդիրներ լուծելու համար՝ մոնոտոնություն, կողմնորոշման խնդիրներ),
  - ընդհանրական առանձնահատկություններով օժտված միջավայրերի վերականգնում, ստեղծում (որոշ առումով «Հին Երևան» նախագիծ, սակայն այս դեպքում թանգարանային, ոչ բնական զարգացման արդյունք),
  - «Կոնդ» թաղամասի վերակառուցում՝ ինի և նորի համադրությամբ քաղաքաշինական միջավայրի ձևավորում՝ պատմական կոլորիտի պահպանմամբ: Կոնդի, արդեն բավական վատ վիճակում գտնվող ժողովրդական ճարտարապետության օրինակներով վերստեղծել հին Երևանի ճարտարապետական կերպարը՝ վերակառուցելով գոյություն ունեցող արժեքավոր տները և լրացնելով փողոցները: Վերակառուցվող բակերի շուրջը համախմբված տներն օգտագործել որպես արվեստանոցներ, ժողովրդական վարպետների արհեստանոցներ, խեցեգործական, մետաղի դրվագման, փայտամշակման, ոսկյա և արծաթյա իրերի պատրաստման, ցուցադրման և վաճառքի սրահներ: Նախատեսել նաև բիզնես կենտրոնների ստեղծում՝ սրճարաններ, ռեստորաններ, բարեր և այլն: Արդյունքում՝ արևելյան շուկա հիշեցնող աշխույժ միջավայրը կնպաստի քաղաքի միջնադարյան կերպարի վերակենդանացմանը՝ դառնալով նաև զբոսաշրջության կենտրոն, ինչպես Մոն-Մարտրը՝ Փարիզում, Ալֆաման և Մուլերիան՝ Լիսաբոնում, իսպանական Տոլեդո քաղաքը:

- Հնարավորության սահմաններում ճակատային ուրվագծի կարգավորում (մանսարդների ունիվերսալացում, այսինքն, երբ ամբողջ շենքի վրա կառուցված է մանսարդ՝ քանդում, հակառակ դեպքում՝ կառուցում),
- Ճարտարապետական փոքր օբյեկտների միջավայրում տեղադրության կարգավորում, ձևի, արտաքին տեսքի ընդհանրացում:
- Կերպարային միջավայրերում՝ Հանրապետության հրապարակ, Կասկադ, Օպերա, Աբովյան, Թումանյան, Տերյան, Նալբանդյան փողոցներ. նոր օբյեկտների չեզոքության ապահովում, ոչ կերպարային միջավայրերում՝ նոր օբյեկտների միջոցով կերպարի ձևավորում (հատկապես կենտրոնն արվարձաններին կապող հատվածներում):
- Քաղաքային տեքստի ու գրաֆիկայի (կոմերցիոն և ոչ կոմերցիոն) համայիր նախագծում,
- «Կենտրոն» շրջանի ընդլայնում՝
  - ուղիների միջոցով, որոնց երկայնքով ձգվում են տիպային կառուցների (Արցախի պողոտա, Էրեբունի փողոց՝ հանգուցալուծված Էրեբունի հնավայրանգարանով, որը նաև խորհրդանշական իմաստներ է կրում՝ իին քաղաքը կապելով նորին) կամ պարզապես ոչ կերպարային կառուցների (Մյասնիկյան, Արշակունյաց պողոտաներ) շարքեր կամ ամայի տարածքներ (Մյասնիկյան, Խակովի պողոտա, Ծիծեռնակաբերդի խճուղի, Սարալանջի փողոց) և որոնք չունեն հստակ կողմնորոշող օբյեկտներ (այսպիսով՝ դրանք ընկալվում են որպես «քաղաքից դուրս»). Դրանց երկայնքով հստակ և ընթեռնելի կառուցապատում և վերականգնողական աշխատանքներ՝ ճակատային կերպարային համայնապատկեր ձևավորելու համար և «քաղաքից դուրս» շրջանները քաղաքի՝ կենտրոնի մեջ ներառելու համար,
  - շրջանների միացումով՝ կերպարային հանգուցների (մուտքեր դեպի նոր շրջաններ) ձևավորման արդյունքում: Որոշ շրջաններ (Կոնդ, Այգեստան, Նորք, Մարաշ, Սարի թաղ), գտնվելով քաղաքում (կենտրոնում կամ կենտրոնին կից), ընդգրկված չեն քաղաքային միջավայրում, որոշակիորեն մեկուսացված են քաղաքից: Օրինակ՝ Այգեստանի, Նորքի, Մարաշի և կենտրոնի միջև եզրագիծ է հանդիսանում

Չարենցի փողոցը (որոշ տեղերում շեշտված, օրինակ՝ Սայաթ-Նովա հատվածի քարե պատնեշը): Այդ եզրագիծը, ներառելով միջավայրի կազմակերպման մեջ և ստեղծելով կերպարային հանգույցներ՝ նեղ փողոցներ (որոշ հատվածներում՝ միայն հետիոտն), աստիճանային ուղիներ (ինչպես, օրինակ՝ Փարիզի Մոնմարտր, Լիսաբոնի Մուրերիա և Ալֆամա թաղամասերում), այդ շրջանները ներառել քաղաքի ամբողջության մեջ՝ ստեղծելով ընդհանրական կերպար:

- Մոտակա բարձունքների՝ լադափտի բարձր կետերի խթանում՝ համայնապատկերային գոտիները զարգացնելու համար: Լանդշաֆտային բազմազանության օգտագործում՝ քաղաքի կերպարն արտահայտիչ դարձնելու համար (հատկապես Կասկադից աջ և ձախ ընկած լանջերը):
- Արվարձաններում հստակ կողմնորոշողների ստեղծում (նոր կառույցներ, հների ծևափոխում, հարթ լուծումներ՝ տիպային շենքերի ճակատային ծևափոխություններ՝ գունավորում, պատկերավորում):
- Կենտրոնում արդեն գոյություն ունեցող կողմնորոշողների նշանակության հստակեցում (իրականացված օրինակ՝ Մոսկովյան փողոցից դեպի Ֆրանսիայի հրապարակ տանող միջանցքի ազատումը սրճարանից), դրանք ամբողջության մեջ ներգրավում (Հավելված 38) :

### **Եզրակացություններ Երրորդ գլուխ վերաբերյալ**

1. Երևանի կերպարի ընկալման և քաղաքի համայնապատկերի ու քաղաքային միջավայրի ընթեռնելիության տեսանկյունից առավել շեշտադրված է առանձին օբյեկտների՝ կառույցների (առավելապես հանրային բնույթ կրող) դերը, իսկ ընդհանուր միջավայրն ու քաղաքաշինական հորինվածքը լուծված չեն:
2. Առավել արտահայված են ուրվագծային կողմնորոշողները (բարձրահարկեր, աշտարակաձև կառույցներ), իսկ ոճական առանձնահատկությունների (ճակատային՝ հարթ կողմնորոշողներ) շնորհիվ հստակ հակադրությունները հազվադեպ են:

3. Հստակ կերպարայնությամբ առանձնանում է քաղաքի կենտրոնը՝ լանդշաֆտային առանձնահատկությունների և հատակագծային լուծման շնորհիվ, թեպետ առանձին միջավայրերի և ընդհանուր համայնապատկերների ընկալումը ընթեռնելի չէ:
4. Քաղաքի ներկա ֆիզիկական միջավայրերի և ճարտարապետական կերպարի ձևավորման վրա իրենց ազդեցությունն են թողել 20-րդ դարի քաղաքաշինական մարտավարության երեք հիմնական գաղափարական մոտեցումները.
  - ռացիոնալիստական ճարտարապետություն (մոդեռնիստական շարժում),
  - գեղարվեստական-մոնումենտալ ճարտարապետություն,
  - արվարձանային ճարտարապետություն:

## **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Հետազոտությամբ հիմնավորվել է Երևան քաղաքի ճարտարապետական կերպարի համալիր ուսումնասիրության կարևորությունը: Առանձնացվել են քաղաքի կերպարի երկու հիմնական մոդելների (տարածական և պատկերային) տարրերը քաղաքի պատմական զարգացման ընթացքում:
2. Առաջադրվել է ճարտարապետական կերպարի համալիր գնահատման մեթոդաբանություն, որը նախատեսում է յուրաքանչյուր պատմական փուլում կերպար ձևավորող տարրերի առանձնացում, որակական բնութագրում, գնահատում, արդյունքների համադրում և կերպարային միջավայրի սահմանում:
3. Երևանի պատմական զարգացման հիմնական փուլերի վերլուծության հիման վրա բացահայտվել են ճարտարապետական կերպարի ձևափոխության օրինաչափությունները, կերպարաստեղծ հիմնական գործոններն ու չափանիշները: Համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ քաղաքի կենտրոնի ճարտարապետական կերպարն այսօրվա Երևանի ամբողջական կերպարի կորիզն է և կրում է ընդհանրական տարրեր:
4. Կերպարային տարրերի վերլուծությամբ բացահայտվել է, որ քաղաքի ճարտարապետական կերպարի ամբողջականությունը խաթարված է մասնատված ուղիների (Արցախի, Արշակունյաց, Մյասնիկյան, Խակովի պողոտաներ և այլն) հետևանքով՝ կենտրոնի տարածական առանձնացվածության պատճառով և որ առանձին կողմնորոշող օբյեկտներն են ձևավորում Երևանի ճարտարապետական կերպարը: Քաղաքի ճարտարապետական կերպարի ամբողջացմանը, կերպարայնության բարելավմանը խոչընդոտում են նաև ենթակառուցվածքային մանր օբյեկտների և նորակառույց դոմինանտների տեղադրությունը քաղաքային միջավայրում: Որպես խնդիր է դիտարկվում միջավայրային ճարտարապետության մասնագիտական պակասը:
5. Մերօյա Երևանի ճարտարապետական կերպարի համալիր հետազոտությունը փաստում է, որ այն կրկին որոնման փուլում է և ձևավորվում է ազգային

ժառանգորդության, պատմականության ու միջազգային նորարարության համադրությամբ ստեղծված ճարտարապետությամբ: Գտնված չեն գեղագիտական ընդհանրական լուծումները:

Երևան քաղաքի ճարտարապետական կերպար ձևավորող գործոնների քննությունը հնարավոր է դարձրել առանձնացնել այն հիմնական միջոցառումները, որոնք նպաստելու են քաղաքային միջավայրի կերպարայնության բարելավմանը: Առաջնահերթ է պատմաճարտարապետական միջավայրի ու կերպար ձևավորող կառույցների պահպանության հարցը: Քաղաքն ունի հսկայական ներուժ (բազմաշերտ պատմաճարտարապետական ժառանգություն, որը նրա հանրահոչակման գրավականներից մեկն է) զբոսաշրջային շուկայում բարձր վարկանիշ ձեռք բերելու համար: Դրանով հանդերձ, Երևանն ունի ներկայանալիության խնդիր: Վերջինիս կապակցությամբ անհրաժեշտ են քաղաքային մշակույթում ավանդույթի և արդիականի սուր հարաբերակցության և բներացված վիճակի վերանայումներ, գրագետ ու նորարար համադրություններ՝ ինի արժևորմամբ և ադիականացմամբ, որը նպաստելու է քաղաքի ընդհանրական ճարտարապետական կերպարի գեղագիտական հատկանիշների բարձրացմանը: Անհրաժեշտ է մշակել մեկ ընդհանուր հայեցակարգ՝ հստակեցնելով ճարտարապետություն - ոլորտների հարաբերակցությունը:

Կարևորվում է նաև միջավայրում արտաքին գովազդի և կողմնորոշիչ նշանների տեղադրության հարցը: Առաջարկված մեթոդաբանությունն ու համալիր համակարգային մոտեցումները խնդրահարուց հարցերում նպաստելու են Երևանի նախագծման գործընթացում քաղաքաշինական գործունեության կարգավորմանը և քաղաքի ընդհանրական կերպարի ձևավորմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղամեանց Ա., «Տեղագրութիւն Երեւանի: (Հայրենագիտութիւն)», Երեւան, 1889, 42 էջ:
2. Ազատյան Կ., Քարամյան Ա., Քասարյան Տ., «Երևանի բնակելի ճարտարապետությունը 20-րդ դարում. կառուցապատման դասակարգումն ըստ հատակագծային-հորինվածքային լուծումների», ՃՇՀԱՀ Գիտական աշխարհություններ, Երևան, 2016, Հ. III (62), էջեր 3-15:
3. Ալիշան Ղ. Այրարատ, «Բնաշխարհ Հայաստանեայց», Վենետիկ, Ս.Ղազար, 1890, 590 էջ:
4. Ալոյան Ա., «Երևանի կենտրոնի արդի հատակագծատարածական զարգացման ռազմավարությունը» ՃՇՀԱՀ Տեղեկագիր, Երևան, 2015, Հ. 1. (1), էջեր 70-74:
5. Առաքելյան Բ., «Քաղաքները և արհեստները Հայաստանում», Հայկակն ՍՍՌ գիրությունների ակադեմիայի գրեղեկագիր, Երևան, IX-XIIIդդ./Հ. II, 1964, 320 էջ:
6. Ավետիսյան Ա., «Երևանի քաղաքաշինական բարձրարժեք տարածքների տեսանելիության խնդիրները», Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր, Երևան, 2014, Հ. 12 (2), էջեր 294-297:
7. Գրիգորյան Ա. Հայկազուն, «Խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում», Երևան, 2005, 177 էջ:
8. Թովմասյան Մ., «Դիզայնը և քաղաքը», Երևան, 1980, 56 էջ:
9. Լոտման Յու., «Ճարտարապետությունը մշակույթի համատեքստում» Ստեփանակերտ, 2012:
10. Կիրակոսյան Լ., «Պատմաճարտարապետական միջավայրի պահպանության խնդիրները Հայաստանի ժամանակակից քաղաքաշինական լուծումներում, Անցումային հասարակության առանձնահատկություններ», Հան. Գիտ. նյութեր, «Միմ» պատրարքուն, Վանաձոր, 2011, էջեր 100-110:
11. Հակոբյան Թ., «Երևանի պատմությունը 1801-1879թթ.», Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1959, 671 էջ:

12. Հակոբյան Թ., «Երևանի պատմությունը 1879-1917թթ.», *Երևանի համալսարանի հրապարակչություն*, Երևան, 1963, 607 էջ:
13. Հակոբյան Թ., «Երևանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 1500թ.», *Երևանի համալսարանի հրապարակչություն*, Երևան, 1969, 431 էջ:
14. Հակոբյան Թ., «Երևանի պատմությունը 1500-1800թթ.», *Երևանի համալսարանի հրապարակչություն*, Երևան, 1971, 522 էջ:
15. «Հայկական ճարտարապետության պատմություն», *h.l.*, <<ԳԱԱ «Գիլություն» հրապարակչություն, Երևան, 1996, 297 էջ:
16. Հարությունյան Վ., «Հայկական ճարտարապետության պատմություն», *Հույս» պետական հրապարակչություն*, Երևան, 1992, 540 էջ:
17. Հարությունյան Վ., «Երևանի Եկեղեցիները», Երևան, 1997, 62 էջ:
18. Հարությունյան Վ., «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները», Երևան, 1960, 146 էջ:
19. Հարությունյան Է., «Հայ ճարտարապետության մնայուն ձեռագիրը», *«Մուղնի» հրապարակչություն*, Երևան, 2009, 199 էջ:
20. Հարությունյան Ա., «Երևանի հրապարակները 19-20-րդ դարերի գլխավոր հատակագծերում», *ԵՃՇՊՀ գիլական աշխարհությունների ժողովածու*, Երևան, *ԵՃՇՊՀ հրատ.*, 2010, հ. II (38), 48-52:
21. Ղաֆարյան Կ., «Երևանի միջնադարյան հուշարձաններն ու վիմական արձանագրությունները», Երևան, 1975, 252 էջ:
22. Միփիթարյան Ն., Թամազյան Վ., «Ծավալատարածական հորինվածքի հիմունքներ», *Ուսումնամեթոդական ձեռնարկ*, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Երևան, 2017, 67 էջ:
23. Շահագիզ Եր., «Հին Երևանը», Երևան, 2003, 271 էջ:
24. Շահիսաթունյանց Հովհ., «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գալանացն Արարատայ», Մայր աթոռ Սբ. Էջմիածին, 2014, 560 էջ:

25. Պետրոսյան Հ., «Երևանի ճարտարապետական կերպարի ֆորմալ առանձնահատկությունները. քաղաքային միջավայրի կերպարայնությունը», *ՃՇՀԱՀ-ի Գիլական աշխարհություններ*, Հ. III (62), Երևան, 2016, էջ 102-112:
26. Պետրոսյան Հ., «Ճարտարապետական միջավայրի իմաստակիր հատկությունը հետմոդեռնիստական տեսություններում», *ՃՇՀԱՀ Տեղեկագիր*, Հ. IV (53), Երևան, 2016, էջ 46-50:
27. Պետրոսյան Հ., «Քաղաքային միջավայրի եվ ճարտարապետության առանձնահատկությունների հետազոտումը տեսողական տեղեկույթի ընկալման համատեքստում. Երևան քաղաքի օրինակը», *ՃՇՀԱՀ Տեղեկագիր*, Հ. I (54), Երևան, 2017, էջ 23-27:
28. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ. Վ., «Երևան քաղաքի ճարտարապետական կերպարի պատմական զարգացման առանձնահատկությունները», *ՃՇՀԱՀ Գիլական աշխարհություններ*, Հ. I (64), Երևան, 2017, էջ 112-118:
29. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ. Վ., «Երևանի տարածքի պատմական զարգացումը», *ՃՇՀԱՀ Գիլական աշխարհություններ*, Հ. I (64), Երևան, 2017, էջ 119-125:
30. Սարդարյան Ս., «Նախնադարյան հասարակությունը Հայաստանում», «Միկր» իրավարակչություն, Երևան, 1967, 416 էջ:
31. Տիգրանյան Է., «Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում», «Ուկան Երևանցի» իրավարակչություն, Երևան, 2003, 263 էջ:
32. Քերթմենցյան Դ., «Անկախության ճարտարապետություն», *Ճարդարապետություն, շինարարություն*, 9-10, 2016, 4-40 էջեր:
33. Օհանյան Ս., Մամյան Զ., «Երևան քաղաքի քաղաքաշինական զարգացումները գլխավոր հատակագծերում», *Ուսումնամեթոդական ձեռնարկ*, ԵրՃԾՊՀ, 2011, 30 էջ:
34. Աբրամյան Լ., «Ереван: Память и забвение в организации пространства постсоветского города», *Антропологический форум N 12*, Ереван, 2010, с. 248-271.

35. Арутюнян В., Асратян М., Меликян А., «Ереван», *Изд-во литературы по строительству*, Москва, 1968, 302 с.
36. Ацагорян З., Мартиросян О., «Туфы и мраморы Армении», *Армгосиздат*, Ереван, 1962, 157с.
37. Балян К., «Современная национальная архитектура Армении», *«Айастан»*, Ереван, 1987, 185 с.
38. Гаспарян М., «Архитектура Еревана XIX - начала XX века: Градостроительство, жилые дома, общественные здания, промышленные сооружения», *Ушарձան*, Ереван, 2008, 200 с.
39. Григорян А., Товмасян М., «Архитектура Советской Армении», Москва, *Стройиздат*, 1986, 318 с.
40. Григорян А.Г., «Ландшафт современного города», М., *Стройиздат*, 1986, 136 с.
41. Глазычев В. Л. Урбанистика, «Европа; Новая площадь», М., 2008, 218 с.
42. Гутнов А., Лежава И., «Будущее города», М., *Стройиздат*, 1977, 126 с.
43. Гутнов А. Э., Глазычев В. Л. «Мир архитектуры. Лицо города», М., *Молодая гвардия*, 1990. - 352 с.
44. Долуханян Л., «Архитектура Советской Армении 20-е годы», Ереван, *Издательство Советакан грох*, 1980, 84 с.
45. Есаян С., «Ереван», *Издательство «Айастан»*, Ереван, 1969, 113 с.
46. Зелинский С., «Город Эривань», *Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, вып. I, Тифлис, 1881, 135 с.
47. Иконников, А., «Функция, форма, образ в архитектуре», Москва, *Стройиздат*, 1986, 288 с.
48. Иконников А., «Эстетические ценности предметно-пространственной среды», М., *Стройиздат*, 1990, 336 с.
49. Иконников А. В., «Архитектура и история». М., *Архитектура*, 1993, 248 с.
50. Иконников А. В., «Архитектура города». М., *Стройиздат*, 1972, 216 с.

51. Киракосян Л., «Архитектура Матенадарана (хранилища древних рукописей)», «Музей», № 11, М., 2014, 22-24 с.
52. Линч Х. Ф. Б., «Армения, Путевые очерки и этюды», т. I, Тифлис, 1910, 599 с.
53. Мильчик И., «Исторический город и современная архитектура», Л., 1990, 32 с.
54. Оганесян К., «Кармир- блур IV, Архитектура Тейшебаини», *Издательство академии наук Армянской ССР*, Ереван, 1955, 109 с.
55. Оганесян К., «Арин-берд I, Архитектура Эребуни по материалам раскопок 1950-1959 гг.», *Издательство академии наук Армянской ССР*, Ереван, 1961, 115 с.
56. Пиоторовский Б., « Кармир- блур I, Результаты раскопок 1939-1949гг. », Ереван, 1950, 100 с.
57. Рашидян Г., «Главная площадь Еревана во времени и в пространстве», *ЕГУАС*, Ереван, 2007, 155 с.
58. Раппапорт, А. Г., Сомов, Г. Ю., «Форма в архитектуре: проблемы теории и методологии», М., *Стройиздат*, 1990, 344 с.
59. Соколов Л., «Центр города – функции, структура, образ», М., *Стройиздат*, 1992, 352 с.
60. Халпахчян О., «Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре», Ереван, 1957, 126 с.
61. Шарден Ж., перевод Бахумовой Е. В., Косовича Д.П., «Путешествие Шардена по Закавказью в 1672-1673гг.», *Кавказский вестник*, Тифлис, 1902, 301 с.
62. Шопен И., «Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи», С.-Петербург, 1852, 1232 с.
63. Яралов Ю., «Таманян», Государственное издательство архитектуры и градостроительства, Москва, 1950, 152 с.
64. Яргина З., «Эстетика города», М., *Стройиздат*, 1997, 366 с.
65. Arnheim R. “The dynamics of architectural form”, Berkeley and Los Angeles, *University of California Press*, 1977, 289 p.

66. Ashworth G., Graham B., "Senses of Place", *Senses of Time – Aldershot*, Ashgate, 2005, 240 p.
67. Boulding K. E., "The Image", Ann Arbor, *University of Michigan Press*, 1956, 184 p.
68. Broadbent G., "Emerging Concepts in Urban Space Design", London, *E & FN Spon*, 1990, 392 p.
69. Cullen G., "The Concise Townscape", Oxford, *Architectural Press*, 2000, 200 p.
70. Howard E., "Garden cities of to-morrow", Cambridge, *MIT Press*, 1965, 176 p.
71. Kaplan S., Kaplan R., "Cognition and Environment: Coping in an Uncertain World", NY, *Praeger*, 1982, 287 p.
72. Lang J., "Creating Architectural Theory: The Role of Behavioral Sciences in environmental Design", NY, *Van Nostrand Reinhold*, 1987, 352 p.
73. Leach N., "Rethinking Architecture: a reader in a cultural theory", NY, *Routledge*, 1997, 432 p.
74. Lozano, E. E., "Community design and the culture of city", Cambridge, *Cambridge University Press*, 1990, 356 p.
75. Lynch K., "The Image of the City", Cambridge, *MIT Press*, 1960, 194 p.
76. Nasar J. L., "Environmental Aesthetics: theory, research and applications", NY, *Cambridge University Press*, 1988, 525 p.
77. Nasar J. L., "The Evaluative Image of the City", Thousand Oaks, *Sage Publications*, 1998, 182 p.
78. Nesbitt K., "Theorizing a New Agenda for Architecture: an anthology of architectural theory 1965-1995", N.Y., *Princeton Architectural Press*, 1996, 608 p.
79. Petrosyan H., "Main characteristics of the aesthetic experience in the built environment" *Proceedings of 8<sup>th</sup> International Conference on Contemporary Problems of Architecture and Construction*, Yerevan, Armenia, 2016, 46-47 p.
80. Portella, A., "Visual Pollution: Advertising Signage and Environmental Quality", Surrey, *Ashgate*, 2014. - 346 p.

81. Rapoport Am., "The Meaning of the Built Environment", Tucson, *The University of Arizona Press*, 1982, 249 p.
82. Rossi, A., "The Architecture of the City: oppositions books", Cambridge, *MIT Press*, 1982, 202 p.
83. Stamps A., "Psychology and the Aesthetics of the Built Environment", San Francisco, CA, *Kluwer Academic Publisher*, 2000, 344 p.
84. Taylor N., "Legibility and Aesthetics in Urban Design", *Journal of Urban Design*, Routledge Taylor and Francis group, May 2009 Vol. 14. No. 2, 189-202 p.
85. Webber M., "The urban place and non-place urban realm: Exploration into urban structure", Philadelphia, *University of Pennsylvania Press*. 1967, 79-153 p.

#### **Համացանցային հրատարակություններ և մամուլ**

86. Եսայան Ա., «Երևանի ապագան փառահեղ կլինի», <http://www.armworld.am>, 07.12.2012:
87. Եսայան Ա., «Բացվեց Հյուսիսային պողոտան», <http://www.armworld.am>, 06.02.2013:
88. Թադևոսյան Ա., «Երևանի քաղաքային մշակույթը», <http://www.prm.am/?p=2490>, 02.04.2012:
89. Հակոբյան Զ., «Փոփոխություններ դարերի համար. Երևանը կառուցում է 21-րդ դարի իր դեմքը», <http://www.armenianow.com>, 04.11.2011
90. Ներսիսյան Ա., «Թամանյանական ոճը մեր ազգային դիմագիծն է», <http://www.tert.hayatsk.am/647>, 25.02.2013:
91. Սիմոնյան Մ. Բաբայան Ա. Դայան <. Ավետիքյան Ն., «Հյուսիսային պողոտայի մենտալ կերպարը Երևան քաղաքի ամբողջական կերպարի համատեքստում», 2012, [http://yhm.am/%D5%B0%D5%B5%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB%D5%BD%D5%A1%D5%B5%D5%AB%D5%BD%D5%A1%D5%B5%D5%AB%D5%BD%D5%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BF%D5%A1%D5%AC-%D5%AF%D5%A5%D6%80%D5%BA%D5%A1%D6%80%D5%A8/](http://yhm.am/%D5%B0%D5%B5%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB%D5%BD%D5%A1%D5%B5%D5%AB%D5%BD%D5%A1%D5%B5%D5%AB%D5%BD%D5%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BF%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%B4%D5%A5%D5%B6%D5%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BF%D5%A1%D5%AC-%D5%AF%D5%A5%D6%80%D5%BA%D5%A1%D6%80%D5%A8/)

92. «Երևանի վարչական բաժանում», Վիքիպեդիա ազատ հանրագիրարան,  
[https://hy.wikipedia.org/wiki/%D4%B5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%AB\\_%D5%BE%D5%A1%D6%80%D5%B9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6\\_%D5%A2%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4](https://hy.wikipedia.org/wiki/%D4%B5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%BE%D5%A1%D6%80%D5%B9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A2%D5%A1%D5%AA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4)

## **ՀԱՎԵԼՎԱԾԻ ՑԱՆԿ**

1. Հետազոտական աշխատանքի փուլերը:
2. Ատենախոսության կառուցվածքը:

### **Գլուխ 1**

3. Ճարտարապետական կերպարի հիմնական բաղադրիչները՝ մարդ-միջավայր փոխառնչության համատեքստում:
4. Ճարտարապետական կերպարի հիմնական շերտերն ու դրանց բնութագրիչները:
5. Ճարտարապետական կերպարի տարածական մոդելի տարրերը:
6. Կերպարի որակական հատկություն (կերպարայնություն). միջավայրի ընթեռնելիություն:
7. Ճարտարապետական կերպարի պատկերային մոդելի տարրերը:
8. Երևանի դիրքը, սահմանները, գրաված տարածությունը: Ռելիեֆը, կլիմայական պայմանները:
9. Երևան տարածքի պատմական գարգացումը:

### **Գլուխ 2**

10. Մինչուրարտական ժամանակաշրջան
11. Ուրարտական ժամանակաշրջան. Էրեբունի- Երևան
12. Անտիկ շրջան և միջնադար
13. Պարսկական շրջանի ճարտարապետական կերպարի տարածական մոդելը:
14. Պարսկական շրջանի ճարտարապետական կերպարի պատկերային մոդելը:
15. Ռուսական շրջանի ճարտարապետական կերպարի տարածական մոդելը:
16. Ռուսական շրջանի ճարտարապետական կերպարի պատկերային մոդելը:

### **Գլուխ 3**

17. Խորհրդային շրջանի (1920-1940-ական թթ.) ճարտարապետական կերպարի տարածական մոդելը: Կերպարի կառուցվածքային տարրերը
18. Խորհրդային շրջանի (1920-1940-ական թթ.) ճարտարապետական կերպարի տարածական մոդելը: Կերպարային տարրերի վերլուծություն:

19. Խորհրդային շրջանի (1920-1940-ական թթ.) ճարտարապետական կերպարի պատկերային մոդելը: Ուրվագիծ:
20. Խորհրդային շրջանի (1920-1940-ական թթ.) ճարտարապետական կերպարի պատկերային մոդելը: Ճակատային դետալներ:
21. Խորհրդային շրջանի (1920-1940-ական թթ.) ճարտարապետական կերպարի պատկերային մոդելի առանձնահատկությունները
22. Խորհրդային շրջանի (1950-1960-ական թթ.) ճարտարապետական կերպարի տարածական մոդելը: Կերպարի կառուցվածքային տարրերը:
23. Խորհրդային շրջանի (1950-1960-ական թթ.) ճարտարապետական կերպարի տարածական մոդելը: Կերպարային տարրերի վերլուծություն:
24. Խորհրդային շրջանի (1950-1960-ական թթ.) ճարտարապետական կերպարի պատկերային մոդելը: Ուրվագիծ:
25. Խորհրդային շրջանի (1950-1960-ական թթ.) ճարտարապետական կերպարի պատկերային մոդելը: Ճակատային դետալներ:
26. Խորհրդային շրջանի (1950-1960-ական թթ.) ճարտարապետական կերպարի պատկերային մոդելը: Մասնատվածություն:
27. Խորհրդային շրջանի (1970-1980-ական թթ.) ճարտարապետական կերպարի տարածական մոդելը: Կերպարի կառուցվածքային տարրերը:
28. Խորհրդային շրջանի (1970-1980-ական թթ.) ճարտարապետական կերպարի տարածական մոդելը: Կերպարային տարրերի վերլուծություն:
29. Խորհրդային շրջանի (1970-1980-ական թթ.) ճարտարապետական կերպարի պատկերային մոդել. ուրվագիծ:
30. Խորհրդային շրջանի (1970-1980-ական թթ.) ճարտարապետական կերպարի պատկերային մոդել. ճակատային դետալներ:
31. Խորհրդային շրջանի (1970-1980-ական թթ.) ճարտարապետական կերպարի պատկերային մոդել. մասնատվածություն:
32. Անկախության շրջանի ճարտարապետական կերպարի տարածական մոդելը: Կերպարի կառուցվածքային տարրերը:

- 33.Անկախության շրջանի ճարտարապետական կերպարի տարածական մոդելը:  
Կերպարային տարրերի վերլուծություն
- 34.Անկախության շրջանի ճարտարապետական կերպարի պատկերային մոդել.  
ուրվագիծ:
- 35.Անկախության շրջանի (1970-1980-ական թթ.) ճարտարապետական կերպարի  
պատկերային մոդելի առանձնահատկությունները-1:
- 36.Անկախության շրջանի (1970-1980-ական թթ.) ճարտարապետական կերպարի  
պատկերային մոդելի առանձնահատկությունները-2:
- 37.Երևան քաղաքի հետխորհրդային ճարտարապետության փոխակերպման  
հիմնական դրսառումները:
- 38.Քաղաքային միջավայրի կերպարայնության բարելավմանն ուղղված  
համակարգային մոտեցումներ: